ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՄԱՆ ՂԱՐԻԲՅԱՆ

Մարդու իրավունքներ և լրագրություն

Ուսումնական ձեռնարկ լրագրողների համար

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՄԱՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական ձեռնարկ լրագրողների համար

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2020

ՀՏԴ 342.732:070(07)
ԳՄԴ 67.0+76.01գ7
Ղ 471

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի գիտխորհուրդը:

Ձեռնարկի ստեղծումը հնարավոր է դարձել Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոնի հետազոտական դրամաշնորհի շրջանակներում:

Գրախոսներ՝ բանաս. գիտ. թեկնածու Շուշան Դոյդոյան
բանաս. գիտ. թեկնածու Վարդուհի Պետրոսյան

Ղարիբյան Ա.
Ղ 471 Մարդու իրավունքներ և լրագրություն: Ուսումնական ձեռնարկ/Ա. Ղարիբյան: Եր., ԵՊՀ հրատ., 2020, 204 էջ:

Ձեռնարկում ամփոփ ներկայացվում են մարդու իրավունքների պաշտպանության միջազգային, տարածաշրջանային և ազգային մեխանիզմները՝ անդրադառնալով մարդու իրավունքների լուսաբանման առանձնահատկություններին:

ՀՏԴ 342.732:070(07)
ԳՄԴ 67.0+76.01գ7

ISBN 978-5-8084-2429-6

© ԵՊՀ հրատ., 2020
© Ղարիբյան Ա., 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 5
ԳԼՈՒԽ 1. Մարդու իրավունքների միջազգային համակարգը 7
1.1. Մարդու իրավունքների ծագումը 7
1.2. Միջազգային իրավունքը Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ և հետո 12
1.3. Համընդհանուրն ընդդեմ հարաբերականի 16
1.4. Մարդու իրավունքների «սերունդները» 20
1.5. ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգը 26
1.5.1. ՄԱԿ-ի կանոնադրությամբ ստեղծված մարմիններ 26
1.5.2. ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգի պայմանագրային մարմինները 40
1.6. Մարդու իրավունքների միջազգային շարժումները 53
ԳԼՈՒԽ 2. Մարդու իրավունքների պաշտպանության տարածաշրջանային և ազգային գործիքները 64
2.1. Եվրոպայի խորհուրդը 64
2.2. Գենդերային (ան)հավասարությունն ու ընտանեկան բռնությունը 73
2.3. Ներպետական գործիքներ. ՀՀ Սահմանադրություն 87
2.4. Մարդու իրավունքների հայաստանյան շարժումները 91
ԳԼՈՒԽ 3. Մարդու իրավունքների լուսաբանումը 106
3.1. Մարդու իրավունքների լուսաբանումը միջազգային զանգվածային լրատվամիջոցներում 106
3.2. Մարդու իրավունքների լուսաբանումը հայաստանյան զանգվածային լրատվամիջոցներում 114
3.3. Ինչպե՞ս լուսաբանել մարդու իրավունքները. սկզբունքներ և տեղեկատվության աղբյուրներ 122
3.4. Խոցելի խմբերի իրավունքների լուսաբանման առանձնահատկությունները 128
3.5. Փակ հաստատություններում պահվող անձանց իրավունքների լուսաբանման առանձնահատկությունները 140

ՀԱՎԵԼՎԱԾ 1 160
ՀԱՎԵԼՎԱԾ 2 168
ՀԱՎԵԼՎԱԾ 3 191
ՀԱՎԵԼՎԱԾ 4 197
ՀԱՎԵԼՎԱԾ 5 200
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 202

ՆԱԽԱԲԱՆ

Մարդու իրավունքները և լրագրությունը փոխկապակցված, անգամ սերտաճած ոլորտներ են: Լրագրությունը մշտապես նպաստել է մարդու իրավունքների պաշտպանության համար կազմակերպված բոլոր պայքարներին՝ սկսած մենիշխանությունների, ստրկության ու ռասիզմի դեմ մղվող պայքարներից, վերջացրած այսօր ծավալվող իրավապաշտպան շարժումներով: Մարդու իրավունքների համակարգն էլ իր հերթին երաշխավորում է լրատվամիջոցների ազատությունը: Լրագրությունն այսօր մարդու իրավունքների պաշտպանության գլխավոր գործիքն է: Իրավապաշտպան լրագրության շնորհիվ հնարավոր է եղել փրկել մարդկային կյանքեր, կանխարգելել բռնություններ ու ապօրինություններ, նպաստել օրենսդրական և համակարգային բարեփոխումներին:

Մարդու իրավունքների մերօրյա լուսաբանումը չպետք է սահմանափակվի տարբեր շարժումների կազմակերպած միջոցառումներով: Լրագրողներն իրենք պետք է նախաձեռնող լինեն մարդու իրավունքների ոլորտում խնդիրների վերհանման ու բարձրաձայնման գործում: Դրա համար նրանք պետք է ունենան համապատասխան գիտելիքներ և հմտություններ, որոնք փոխանցելու հավակնություն ունի սույն ձեռնարկը: «Մարդու իրավունքներ և լրագրություն» ձեռնարկը ստեղծվել է Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողների համար, որոնք ուսանում են նույնանուն առարկան: Այն դասավանդվում է ֆակուլտետում 2017 թվականից: Ձեռնարկը կարող է օգտագործվել մարդու իրավունքների և լրագրության ոլորտների ինչպես պաշտոնական, այնպես էլ ոչ պաշտոնական դասապրոցեսներում: Առարկայի և ձեռնարկի նպատակներն են.

- նպաստել մարդու իրավունքների ոլորտում ակադեմիական կրթության զարգացմանը,
- հարստացնել ապագա լրագրողների՝ մարդու իրավունքների վերաբերյալ գիտելիքները,

- նպաստել իրավապաշտպան լրագրության զարգացմանը,
- փոխանցել մարդու իրավունքների լուսաբանման հմտություններ,
- խթանել քննադատողական մտածողությունը,
- նպաստել մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդմանը:

Ձեռնարկում ներառված են պատմական ու քաղաքական իրադարձությունների մասին փաստական տվյալներ, իրավունքի ոլորտում կարևոր փաստաթղթերի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև մարդու իրավունքների լուսաբանմանն առնչվող գիտելիքներ և խորհուրդներ: Ձեռնարկի բովանդակությունն արդիական է տարածաշրջանային և միջազգային առումներով: Այն նախատեսված է ինչպես հայաստանցի, այնպես էլ փոխանակման ծրագրերով ԵՊՀ-ում կրթություն ստացող ուսանողների համար, ուստի ստեղծվել է նաև ձեռնարկի անգլալեզու տարբերակը: Այն օգտակար կլինի նաև գործող լրագրողներին, որոնք հետաքրքրված են մարդու իրավունքներով, սակայն չունեն համապատասխան կրթություն:

ԳԼՈՒԽ 1. Մարդու իրավունքների միջազգային համակարգը

1.1. Մարդու իրավունքների ծագումը

Մարդն ունի իրավունքներ զուտ մարդ լինելու հիմքով՝ առանց որևէ նախապայմանի: Մարդու իրավունքները ծնվում են մարդու՝ լույս աշխարհ գալու հետ, ուստիև դրանց ծագումը կարելի է վերագրել մարդկության գոյության վաղնջական ժամանակներին: Դրանց վերաբերյալ նախնական հիշատակումներն արվել են Բաբելոնի և հունահռոմեական օրենքներում: Մարդու իրավունքների հիմքում ընկած արժեհամակարգի (մարդու կյանքը, արժանապատվությունը) վերաբերյալ մտքեր կարելի է գտնել տարբեր կրոնների բարոյախրատական գրվածքներում:

Այնուամենայնիվ, մարդը՝ որպես իրավունքների կրող և բարոյագույն արժեք, սկսել է ընկալվել միայն 17-18-րդ դարերում Եվրոպայում փիլիսոփայության, գիտության ու քաղաքագիտության զարգացման արդյունքում:

Նշված ժամանակաշրջանը կոչվում է Լուսավորության դարաշրջան (Age of Enlightenment) կամ Բանականության դարաշրջան (Age of Reason): Լուսավորականության հայեցակարգի հիմքում մարդու՝ բանական էակ լինելու գաղափարն է. բանականությամբ մարդն ի զորու է բացատրելու այն ամենը, ինչը տեղի է ունենում աշխարհում, առանց կրոնական առասպելաբանության: Ըստ լուսավորականների՝ մարդկության զարգացման առանցքում գիտելիքն ու կրթությունն են: Նրանք հերքում էին Աստծո ամենակարող լինելը և կարևորում էին գիտական առաջընթացը: Աստծո երկրպագությունն աստիճանաբար զիջում էր իր դիրքերը մարդու երկրպագությանը, ընդգծվում ու կարևորվում էր մարդու անհատականությունը:

Բանականության դարաշրջանում անգլիացի փիլիսոփա Ջոն Լոքը (John Locke) զարգացրեց «բնական իրավունք» (Natural Law) հասկացությունը, որին նախկինում իրենց աշխատություններում անդրադարձել էին անտիկ դարաշրջանի փիլիսոփաները: Բնական

իրավունքը մարդուն դիտարկում էր որպես իրավունքներով օժտված անհատ՝ նրան դնելով հասարակական և իրավական համակարգերի կենտրոնում: Բնական իրավունքը մարդուն տրված է ի ծնե բնությունից (և ոչ թե հասարակության, պետության կամ աստծո կողմից): Այն հաստատուն է և անկախ: Մարդու բնական իրավունքներից են կյանքի իրավունքն ու ազատությունը, արժանապատվության, սեփականության, անձնական անձեռնմխելիության, անվտանգության իրավունքները և այլն: Լոքը և մյուս լուսավորական առաջադեմ մտածողները (Թոմաս Հոբս (Thomas Hobbes), Ժան-Ժակ Ռուսո (Jean-Jacques Rouseau)) զարգացրին սոցիալական պայմանագրի տեսությունը, ըստ որի՝ անհատն ինքն է համաձայնել ստեղծելու պետություն և զիջելու իր որոշ ազատություններ պետական համակարգին՝ փոխարենը ստանալով բնական իրավունքների պաշտպանության ու սեփական անվտանգության ապահովման երաշխիքներ:

Լուսավորականության գաղափարախոսություններն էին ընկած եվրոպական ու ամերիկյան հեղափոխությունների հիմքում, որոնց արդյունքում ստեղծվեցին մարդու իրավունքներ հռչակող առաջին համապարփակ փաստաթղթերը: Դրանցից է 1689 թվականի անգլիական «**Իրավունքների օրինագիծը**» (Bill of Rights), որը ստեղծվել է 1688 թվականի Մեծ Բրիտանիայի Փառահեղ հեղափոխության (Glorious Revolution) շնորհիվ: Հեղափոխությունից հետո բրիտանական ոչ մի թագավոր լիակատար իշխանություն չի ունեցել. «Իրավունքների օրինագիծը» սահմանափակել է թագավորի արտոնությունները (օրենքների իրագործումը խոչընդոտելը, թագավորի օգտին գանձումները, խաղաղ ժամանակ մշտական բանակ հավաքագրելը և այլն) և դրել սահմանադրական միապետության հիմքը՝ երաշխավորելով Խորհրդարանի մշտական աշխատանքը, ինչպես նաև ազատ ընտրության ու Խորհրդարանում ազատ խոսքի իրավունքը: Այս փաստաթուղթը որոշակի իրավունքներ սահմանեց նաև հպատակների համար, օրինակ՝ դրանով արգելվեց դաժան պատիժը, իրավունք տրվեց հպատակներին խնդրագրով դիմելու թագավորին, ինչի համար ոչ ոք պատասխանատվության չէր ենթարկվելու: «Իրա-

IN CONGRESS, JULY 4, 1776.

A DECLARATION

BY THE REPRESENTATIVES OF THE

UNITED STATES OF AMERICA,

IN GENERAL CONGRESS ASSEMBLED.

ԱՄՆ-ի անկախության հռչակագիրը

վունքների օրինագծով» արգելվեցին նաև չափից շատ հարկերի սահմանումը և հալածանքները, մտցվեց գահի ժառանգականության կարգ: Որոշ մտածողների կարծիքով՝ «Իրավունքների օրինագիծը» մի դասախմբի (բուրժուաների) հաղթանակն էր միապետի նկատմամբ և ավելի շատ միտված էր ծառայելու այդ դասախմբի շահերին: Բայց և այնպես, այն վիթխարի կարևորությամբ փաստաթուղթ էր, քանի որ վերջ էր դնում բացարձակ միապետությանն ու ամրապնդում էր պառլամենտարիզմի հիմքերը:

Լուսավորականության գաղափարները, Եվրոպայից տարածվելով, հասել էին նաև այլ մայրցամաքներ, օրինակ՝ Հս. Ամերիկա, որտեղ էլ 1776 թվականին ստեղծվեց **Ամերիկայի Միացյալ Նահանգների անկախության հռչակագիրը**: Այն Հյուսիսային Ամերիկայի հեղափոխական-ազատագրական պատերազմի արդյունք էր, որով ազդարարվեցին ամերիկյան գաղութների անջատումը Անգլիայից և Ամերիկայի Միացյալ Նահանգների ստեղծումը: Անկախության հռչակագիրը սահմանում էր բոլորի հավասարությունն օրենքի առջև, ժողովրդի գերիշխանությունը և իր իրավունքները ոտնահարող կառավարության դեմ ժողովրդի ապստամբելու իրավունքը: Հռչակագրով արձանագրվել է, որ մարդու անօտարելի իրավունքներից են կյանքի իրավունքը, ազատությունն ու երջանկության ձգտումը:

Ամերիկյան ազատագրական պատերազմին հաջորդեց 1789-1799 թվականների Ֆրանսիական հեղափոխությունը, որը Ֆրանսիայի պատմության սոցիալական և քաղաքական ամենամեծ փոփոխությունն էր: Հեղափոխության հետևանքով «Ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսի ներքո կազմաքանդվեցին միապետական կարգերը, և Ֆրանսիան վերածվեց հանրապետու-

թյան: Հեղափոխական Ֆրանսիայում է գրվել 1789 թվականի «**Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը**», որը սահմանում էր մարդու և քաղաքացու մի շարք իրավունքներ ու ազատություններ, այդ թվում՝ խոսքի, մամուլի, կրոնի: Հռչակագիրն առանձնացնում էր մարդու և քաղաքացու իրավունքները, իսկ 18-րդ դարում Ֆրանսիայում քաղաքացի կարող էին լինել միայն տղամարդիկ: Փաստորեն, «Ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսի ներքո պայքարողները հավասարություն էին ցանկանում միայն տղամարդկանց միջև, իսկ կնոջը շարունակում էին դիտել որպես «երկրորդ կարգի» մարդ:

Կանանց երթը դեպի Վերսալ, 1789 թ.

Սա այն դեպքում, երբ Ֆրանսիական մեծ հեղափոխության առաջին նշանավոր իրադարձություններից մեկը կանանց երթն էր Վերսալ: 1789 թվականի հոկտեմբերի 5-ին կանայք Փարիզի շուկայից շարժվեցին դեպի արքայական պալատ՝ բողոքելով հացի սակավության և գնի թանկացման դեմ:

Ի պատասխան տղամարդկանց գերակայությունն ընդգծող հռչակագրի՝ ֆեմինիստ ակտիվիստ, գրող Օլիմպիա դը Գուժը 1791 թվականին գրել է «Կնոջ և քաղաքացուհու իրավունքների հռչակագիրը»՝ ընդգծելով 1779 թվականի Ֆրանսիական հեղափոխության ձախողումը կանանց իրավունքների պաշտպանության առումով: Իր գրվածքների համար Օլիմպիան մեղադրվել է դավաճանության մեջ և դատապարտվել: Նա հետհեղափոխական Ֆրանսիայում միակ կինն էր, որ գլխատվել է իր քաղաքական հայացքների համար:

Օլիմպիա դը Գուժ

1.2. Միջազգային իրավունքը Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ և հետո

Թեև Լուսավորության ժամակաշրջանում մարդն ու նրա արժանապատվությունը դրվել էին հասարակական հարաբերությունների առանցքում, և որոշ պետություններում մարդու իրավունքների պաշտպանության հռչակագրեր էին ընդունվել, այնուամենայնիվ, այդ իրավունքներից տակավին ոչ բոլորն էին օգտվում: Նախ՝ մարդու իրավունքներին վերաբերող փաստաթղթերը զուտ ազգային էին, ուստի որևէ մեկը չէր կարող ակնկալել միջազգային աջակցություն ու պաշտպանություն պետության կողմից իր իրավունքների խախտման դեպքում: Երկրորդ՝ անգամ մարդու իրավունքների պաշտպանություն հռչակած երկրներում այդ իրավունքները վերաբերում էին ոչ բոլորին. բնակչության մեջ կար սահմանազատում՝ պայմանավորված ռասայով, կրոնով, սեռով, սոցիալական դիրքով և այլ հանգամանքներով:

Միայն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո յուրաքանչյուր անհատ դարձավ միջազգային իրավունքի սուբյեկտ՝ անկախ պետական սահմաններից, ազգությունից, էթնիկ պատկանելությունից և այլ հանգամանքներից:

Այնուամենայնիվ, մինչև 1945 թվականը մարդու իրավունքների միջազգային պաշտպանության որոշ մեխանիզմներ ներդնելու փորձեր արվել են: Դրանք սահմանվել են ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ պայմանագրերով: Հետաքրքրական է, որ երբեմն օտարերկրացիների իրավունքներն ավելի վաղ ժամանակներից են պաշտպանության տակ առնվել, քան տվյալ պետության քաղաքացիներինը: Օտարերկրացիների իրավունքների պաշտպանության համար թույլատրելի էր այն պետության միջամտությունը, որի քաղաքացիներն էին այդ անձինք: Սակայն իր քաղաքացիների կամ իր ենթակայության տակ գտնվող անձանց իրավունքների խախտման դեպքում (անգամ՝ ամենավայրագ ձևով, ինչպիսին էր Հայոց ցեղա-

սպանությունը) գործել են պետության ներքին գործերն արտաքին միջամտությունից զերծ պահելու և պետության ինքնիշխանության սկզբունքները, որոնք ավելի վաղ էին միջազգային ճանաչում ստացել, քան մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները: Պետությունների ինքնիշխանության սկզբունքը մինչ օրս էլ խոչընդոտ է մարդու իրավունքների միջազգային պաշտպանության ճանապարհին: Մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից խնդրահարույց բազմաթիվ պետություններում այսօր էլ մարդու իրավունքները զանգվածաբար խախտվում են, և միջազգային կառույցները հաճախ անկարող են լինում միջամտելու:

Մարդու իրավունքները միջազգայնորեն պաշտպանելու առաջին փորձերը կարելի է վերագրել մարդասիրական միջազգային առաջին օրենքներին ու Ազգերի լիգային: Վերջինս հիմնվել է 1920 թվականին՝ Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Մարդու իրավունքների պաշտպանությունն Ազգերի լիգայի առջև դրված գլխավոր խնդիրների թվում չկար. այն ստեղծվել է պատերազմից հետո խաղաղությունը պահպանելու և միջազգային վեճերը խաղաղ ճանապարհով կարգավորելու նպատակով: Այնուամենայնիվ, Ազգերի լիգան կոչված էր որոշակի ջանքեր գործադրելու էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հարցում: Առաջին աշխարհամարտից հետո փոփոխվեցին մի շարք պետությունների սահմաններ՝ դրանց ներսում թողնելով տարբեր ազգային պատկանելություն ունեցող խմբերի: Պետությունները պարտավորվել էին որոշակի իրավունքներ շնորհել փոքրամասնություններին, մասնավորապես՝ լեզուն ու մշակույթը պահպանելու, ազգային դպրոց ունենալու, խոշտանգումներից ու հետապնդումներից զերծ լինելու: Այս իրավունքների պաշտպանության վերահսկողության առաքելությունը մասնակիորեն կատարում էր Ազգերի լիգան: Պետություններից զեկույցներ ստանալու միջոցով մշտադիտարկում իրականացնելու Ազգերի լիգայի փորձն այսօր լայնորեն կիրառում են Միավորված ազգերի կազմակերպությունն (ՄԱԿ) ու տարածաշրջանային կազմակերպությունները:

ՄԱԿ-ի և Ազգերի լիգայի կարևորագույն տարբերությունն այն է, որ Ազգերի լիգան օժտված է պետության ներսում անհատների իրավունքները միջազգայնորեն պաշտպանելու լիազորությամբ:

Երկրորդ համաշխարհային պատերազմն իր հետևանքներով ու դաժանությամբ ցնցեց ամբողջ աշխարհը: Եվրոպայի սրտում 6 միլիոն հրեաների ցեղասպանությունն ապացուցեց, որ միջազգային հանրությունն ուշացել է մարդու իրավունքների պաշտպանության գործուն մեխանիզմներ ներդնելու հարցում: Միավորված ազգերի կազմակերպության ստեղծումով և հատկապես «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» ընդունումից հետո այլևս ակնհայտ էր, որ ոչ մի երկիր չի կարող պնդել, թե իր բնակչության նկատմամբ կատարած գործողությունները բացառապես իր իրավասության շրջանակներում են, և այդպես խուսափել միջազգային պատասխանատվությունից: 1945 թվականին հիմնադրվում է Միավորված ազգերի կազմակերպությունը: Հիմնադրման տարիներին ՄԱԿ-ին անդամակցում էին 51, այժմ՝ 193՝ միջազգայնորեն ճանաչված գրեթե բոլոր պետությունները:

ՄԱԿ-ի կանոնադրություն

Գլուխ 1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 1. Միավորված ազգերի կազմակերպության նպատակներն են.

1. Պահպանել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը և այդ նպատակով արդյունավետ համախմբված միջոցներ ձեռնարկել՝ կանխելու և վերացնելու խաղաղության դեմ սպառնալիքները, ինչպես նաև ճնշելու ագրեսիայի կամ խաղաղությունը խախտող այլ գործողությունները և խաղաղ միջոցներով, արդարության և միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա հասնելու միջազգային վեճերի կամ խաղաղության համար վտանգավոր իրավիճակների շտկմանը կամ կարգավորմանը:

2. Զարգացնել ազգերի բարեկամական հարաբերություններ՝ հիմնված ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հարգանքի վրա և այլ համապատասխան միջոցներ ձեռնարկել հանուն համընդհանուր խաղաղության ամրապնդման:

3. Իրականացնել միջազգային համագործակցություն տնտեսական, սոցիալական, մշակութային կամ մարդասիրական բնույթի միջազգային խնդիրների լուծման, ինչպես նաև բոլորի համար մարդու իրավունքների և հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի տարածման և քաջալերման գործում՝ անկախ ցեղից, սեռից, լեզվից կամ դավանանքից, և

4. Դառնալ ազգերի գործողությունների համաձայնեցման կենտրոն այդ ընդհանուր նպատակներն իրագործելու ճանապարհին:

(Աղբյուրը՝ www.arlis.am)

ՄԱԿ-ի կանոնադրության 1-ին հոդվածից պարզ է դառնում, որ, ի տարբերություն Ազգերի լիգայի, այս կազմակերպության համար մարդու իրավունքների պաշտպանությունն առաջնահերթություն է: Դրա կարևորությունն էլ ավելի է ընդգծվում ՄԱԿ-ի հիմնադրումից կարճ ժամանակ անց (1948 թ. դեկտեմբերի 10) ընդունված «**Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով**», որը իրավունքների առաջին համընդհանուր հռչակագիրն է, որոնցով օժտված են բոլոր մարդիկ: Հռչակագրի նախաբանում ասվում է, որ արժանապատվությունն ու հավասար իրավունքները հատուկ են մարդկության բոլոր ընտանիքներին, և դրանց ճանաչումն աշխարհի ազատության, արդարության և խաղաղության հիմքն է: Հռչակագիրը բաղկացած է 30 հոդվածներից: Այն «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» և «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրերի հետ համարվում է Մարդու իրավունքների միջազգային օրինաշարը: Հռչակագիրը պայմանագիր չէ, ուստի իրավաբանորեն պարտավորեցնող չէ. այն խորհրդատվական է: Այնուամենայնիվ, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը» արտահայտում է ՄԱԿ-ի անդամ պետությունների արժեքային համակարգը: Այն մարդու իրավունքների ոլորտում ամենահեղինակավոր փաստաթուղթն է, որը հսկայական ազդեցություն է ունեցել հետագայում ստեղծված միջազգային կոնվենցիաների և ազգային օրենսդրությունների վրա: Դրա ընդունման օրը՝ դեկտեմբերի 10-ը, ամբողջ աշխարհում նշվում է որպես Մարդու իրավունքների միջազգային օր: «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» տեքստը ներկայացված է Հավելված 1-ում:

1.3. Համընդհանուրն ընդդեմ հարաբերականի

Մարդու իրավունքները համընդհանո՞ւր արժեքներ են, թե՞ արտացոլում են միայն մի աշխարհամասի արժեհամակարգը, որը հետագայում պարտադրվել է ամբողջ աշխարհին: Այս խնդրի շուրջ բանավեճեր ծավալվել են ոչ վաղ անցյալում, իսկ որոշ երկրներում մինչ օրս էլ շարունակվում է հարցի քննարկումը: Մարդու իրավունքների համընդհանուր լինելու օգտին բերվող հիմնական փաստարկի հիմքում ընկած էր այն գաղափարը, որ մարդն իրավունքների կրող է զուտ մարդ լինելու հիմքով՝ առանց որևէ նախապայմանի, անկախ ազգությունից, կրոնից, մշակույթից և այլ հանգամանքներից: Սակայն սա բավարա՞ր է արդյոք պնդելու համար, որ դարերի ընթացքում զարգացած (դեռ զարգացող) մարդու իրավունքները համընդհանուր են, ներկայացնում են երկրագնդի ցանկացած կետում ապրող ժողովուրդների արժեքները: Անվիճելի է, որ աշխարհում առկա է մշակութային ու արժեքային բազմազանություն: Այն, ինչ ընդունելի և նորմալ է մի աշխարհամասում, կարող է միանգամայն այլ արձագանք ստանալ աշխարհաքաղաքական և մշակութային մեկ այլ համատեքստում: Այդ դեպքում ինչպե՞ս ենք պնդում, որ մարդու իրավունքները համընդհանուր են: Քննադատների կարծիքով՝ մարդու իրավունքներն իրականում արևմտյան արժեքներ են, որոնք պարտադրվել են ամբողջ աշխարհին, քանի որ Արևմտյան Եվրոպայի երկրները գերիշխող դիրք են ունեցել այն ժամանակահատվածում, երբ ստեղծվում էր մարդու իրավունքների միջազգային համակարգը: Մասնավորապես աֆրիկյան, հարավամերիկյան ու ասիական բազմաթիվ երկրներ դեռևս գաղութի կարգավիճակ ունեին, երբ ստեղծվեցին «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը», «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» և «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրերը: Այդ երկրները չէին կարող մասնակցել նշված փաստաթղթերի կազմման աշխատանքներին, ուստի նրանց արժեքային համակարգերը չէին կարող արտացոլվել դրանցում: Հե-

տագայում ստանալով անկախություն և անդամակցելով ՄԱԿ-ին՝ նրանք ինքնաբերաբար միացան մարդու իրավունքների միջազգային պայմանագրերին՝ ստանձնելով միջազգային պարտավորություններ:

Երբ ստեղծվում էր ՄԱԿ-ը, աշխարհի բնակչության գրեթե 1/3-ը՝ 750 միլիոն մարդ, ապրում էր մի տարածքում, որը ոչ թե ինքնակառավարվում էր, այլ գտնվում էր գաղութարար ուժերի տիրապետության ներքո: Այսօր աշխարհի բնակչության ընդամենը 2 միլիոնն է այդ կարգավիճակում:

ՄԱԿ-ի ստեղծումն ու հռչակած սկզբունքները մեծապես նպաստեցին ապագաղութացմանը, իսկ 1960 թվականին Գլխավոր ասամբլեայի ընդունած «Գաղութացված երկրներին ու մարդկանց անկախություն շնորհելու մասին հռչակագիրը» առավել մեծ թափ հաղորդեց ապագաղութացմանը: Անկախություն ձեռք բերեցին աֆրիկյան շուրջ 50 պետություններ (Ռեյունյոն և Մայոտտե կղզիները, դրանցում բնակվող ժողովուրդների կամքով, մինչ օրս Ֆրանսիայի տիրապետության տակ են): Ասիայում անկախ պետություններ հռչակվեցին Հնդկաստանը, Պակիստանը, Մյանմարը, Լաոսը, Կամբոջան, Սինգապուրը, Ֆիլիպինները, Մալազիան, Ինդոնեզիան և Բանգլադեշը: Եվրոպայում Կիպրոսն ու Մալթան Մեծ Բրիտանիայից անկախացան 1960-ականներին: Իսկ Հարավային Ամերիկայում պետությունների անկախացումը գաղութարարներից ավարտվել է միայն 1983 թվականին (19 վարչական տարածքներ մինչ օրս գտնվում են արևմտաեվրոպական երկրների և ԱՄՆ-ի տիրապետության ներքո): Խորհրդային Միության փլուզումից հետո ստեղծվեցին 15 անկախ պետություններ: Հարավսլավիան տրոհվեց 6 ազգային պետությունների, իսկ ավելի ուշ անջատվեց նաև Կոսովոն:

Մարդու իրավունքների համընդհանրության մեկ այլ քննադատության հիմքում ընկած է պետությունների ինքնիշխան լինելու գաղափարը: Ընդդիմախոսները պնդում են, որ մարդու իրավունքները ոչ թե համընդհանուր, այլ հարաբերական են, և պետություններն իրենք պետք է որոշեն, թե ինչպես պաշտպանեն իրենց սահմաններում

գտնվող անձանց իրավունքները՝ ստեղծելով ազգային մեխանիզմներ, որոնք կարող են տարբերվել, երբեմն՝ անգամ հակադրվել մարդու իրավունքների միջազգային օրենքներին:

Մարդու իրավունքների համընդհանրության օգտին բերվող գլխավոր փաստարկը «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» սնագրմանը մասնակցած երկրների աշխարհաքաղաքական ու մշակութային բազմազանությունն է: Հռչակագրի պատրաստման աշխատանքներին մասնակցել են ինչպես արևմտյան, այնպես էլ սոցիալիստական երկրներ, ինչպես նաև աֆրիկյան չորս պետություններ, միջինարևելյան երկրներ, Հյուսիսային և Հարավային Ամերիկաների երկրները, Ավստրալիան, Նոր Զելանդիան, ընդհանուր առմամբ՝ 58 պետություն, որոնք, իհարկե, չէին ներկայացնում ամբողջ աշխարհի բնակչությունը, սակայն աշխարհաքաղաքական բազմազանությունն ապահովված էր: Տարբեր աշխարհամասերից և մշակույթներից եկած պատվիրակներին հաջողվել է համաձայնության գալ ընդհանուր գաղափարների ու արժեքների շուրջ: Բացի այդ՝ հետագա տասնամյակներում ՄԱԿ-ը մարդու իրավունքների վերաբերյալ բազմաթիվ կոնվենցիաներ է ընդունել, որոնք արդեն անկախ ու ինքնիշխան պետությունները ստորագրել և վավերացրել են՝ ընդունելով, որ մարդու իրավունքները ոչ թե հարաբերական են, այլ համընդհանուր: Իսկ 1993 թվականին տեղի ունեցած Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովի ժամանակ ընդունված **Վիեննայի հռչակագրի** նախաբանում արձանագրվել է, որ «7000 մասնակիցները հաղթահարեցին հիմնական տարբերությունները՝ ստեղծելով զորեղ արդյունք, որով ընդգծվեց, որ տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական իրավունքներն անբաժանելի են ու փոխկապակցված, և դրանցից յուրաքանչյուրը նպաստում է մյուսի իրացմանը»[1]: Հռչակագրում ընդգծվում է, որ մարդու իրա-

---

[1] Վիեննայի հռչակագիր և գործողությունների ծրագիր, 1993 թ. հունիսի 25, թարգմանությունը՝ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի, http://old.un.am/res/Human%20-

վունքները և հիմնարար ազատությունները մարդուն տրված են ի ծնե, և դրանց պաշտպանությունն ու խթանումը կառավարություններ-ի առաջնային պարտականություններն են: Հռչակագրի ընդունման ժամանակ ՄԱԿ-ին անդամակցում էր 184 պետություն:

Քննարկում լսարանում

«Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» տեքստն ըն-թերցելուց հետո պատասխանել հետևյալ հարցին. մարդու իրավունքները արևմտյա՞ն, թե՞ համընդհանուր արժեքներ են:

Rights/Armenian%20Documents/ViennaDeclarationProgrammeAction_booklet_Arme-nian-FINAL.pdf (մուտք՝ 20.02.2020):

1.4. Մարդու իրավունքների «սերունդները»

Թեև մարդու իրավունքների առաջին հռչակագրերն ի հայտ եկան 17-18 դարերի հեղափոխությունների հետևանքով, միջազգային հանրությունը միայն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սկսեց լրջորեն մտածել մարդու իրավունքները միջազգային օրենքով պաշտպանելու մասին: Մինչ այդ ոչ միայն քաղաքական կամքի, այլև անհրաժեշտ մեխանիզմների պակաս կար: Միջազգային իրավունքի սուբյեկտ էին բացառապես պետությունները. անհատները պաշտպանված չէին միջազգային օրենքով: Թեև մարդասիրական որոշակի օրենքներ նախքան Երկրորդ համաշխարհային պատերազմը արդեն իսկ գործում էին, այնուամենայնիվ, նացիստական Գերմանիայի իրականացրած վայրագությունները էին, որ առավել հաստատակամ դարձրին ֆաշիզմի դեմ պայքարող ուժերին՝ մշակելու մարդու իրավունքները միջազգայնորեն պաշտպանելու մեխանիզմներ: Սակայն, անհրաժեշտ մեխանիզմների պակասից բացի, աշխարհաքաղաքական ուժերի միջև մարդու իրավունքների շուրջ երկար ժամանակ գաղափարական անհամաձայնություններ կային:

Արևմուտք-Արևելք-Հարավ քաղաքական և գաղափարական հակասությունները պատճառ դարձան մարդու իրավունքների երեք խմբերի առանձնացման, որոնք մարդու իրավունքների փորձագետ Կարել Վասակը (Karel Vasak) անվանել է «սերունդներ»: Առանձնացվում են երեք սերնդի իրավունքներ, որոնք ոչ թե սոսկ հաջորդել են միմյանց ժամանակային առումով, այլ տարբեր առաջնահերթություններ են ունեցել Արևմուտքում (Արևմտյան Եվրոպայի երկրներ և ԱՄՆ), Արևելքում (Խորհրդային Միություն և այլ սոցիալիստական երկրներ) և Հարավում (հատկապես՝ Աֆրիկայում):

Առաջին սերնդին են պատկանում քաղաքական և քաղաքացիական իրավունքները և ազատությունները, որոնք պետության համար բացասական (նեգատիվ) պարտավորություններ են ստեղծում: Մասնավորապես, պետությունը պետք է զերծ մնա մարդկանց կյան-

քին կամայականորեն միջամտելուց՝ նրանց ապօրինաբար ազատազրկելուց, խոշտանգելուց, սպանելուց, խոսքի ազատությունը ճնշելուց, կրոն հարկադրելուց և այլն: Այս սերնդի իրավունքներն արտացոլվել են Անգլիայում, Ֆրանսիայում և ԱՄՆ-ում հեղափոխական շարժումների հետևանքով ստեղծված հռչակագրերում: Միահեծան կառավարման բացասական հետևանքները ճաշակած Արևմուտքի համար առանձնակի նշանակություն ունեին մարդու անհատական իրավունքների ապահովումն ու պետության միջամտությունից զերծ լինելը:

Առաջին սերնդի իրավունքներ

Կյանքի իրավունք
Ազատության իրավունք
Խոշտանգումներից զերծ լինելու իրավունք
Օրենքի առջև հավասարության իրավունք
Ազատ տեղաշարժվելու, հավաքներ կազմակերպելու և դրանց մասնակցելու իրավունք
Ընտր(վ)ելու իրավունք
Խոսքի, մտքի, կրոնի, միություններ ստեղծելու ազատություն
Անձնական նամակագրության գաղտնիության իրավունք
Ընտր(վ)ելու իրավունք

Երկրորդ սերնդի իրավունքները պետության համար ստեղծում են դրական (պոզիտիվ) պարտավորություններ, այն է՝ պաշտպանել և երաշխավորել մարդկանց սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքները: Ի տարբերություն առաջին սերնդի իրավունքների՝ այս դեպքում պետությունից ակնկալվում է ակտիվ միջամտություն մարդկանց կյանքին՝ համապատասխան պայմաններ ստեղծելով նրանց՝ սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքներից օգտվելու համար, ինչպես, օրինակ, կառուցել դպրոցներ, հիվանդանոցներ և մշակութային օջախներ, տրամադրել պետական լրավճարներ՝ դրանցից օգտվելու համար, կենսաթոշակներ և սոցիալական

նպաստներ՝ յուրաքանչյուրի համար նվազագույն կենսամակարդակ ապահովելու նպատակով: Սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների ջատագովը սոցիալիստական ճամբարն էր: Այս խմբի երկրների պնդմամբ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում» տեղ գտան երկրորդ սերնդի իրավունքներ:

Երկրորդ սերնդի իրավունքներ

Առողջության իրավունք
Կրթության իրավունք
Աշխատանքային իրավունքներ
Սոցիալական ապահովության իրավունք
Մշակութային կյանքին մասնակցելու իրավունք
Հանգստի և ժամանցի իրավունք
Բավարար կենսամակարդակ ունենալու իրավունք
Արհեստակցական միություններ ստեղծելու իրավունք

Երրորդ սերնդի իրավունքները, որոնք կոչվում են նաև «համերաշխության» իրավունքներ, հիմնականում խմբային իրավունքներ են, որոնք պատկանում են ժողովուրդներին: Այս իրավունքներն անհրաժեշտ էին հատկապես աֆրիկյան երկրներին, որոնք ճաշակել էին գաղութատիրության դառը պտուղները: Աֆրիկայում միայն անհատական իրավունքների պաշտպանությամբ երկար տարիներ ստրկության մեջ գտնված ժողովուրդների խնդիրները չէին կարող լուծվել, ուստի առաջին հերթին կարևորվեց ինքնորոշվելու իրավունքը, որը պետք է քաղաքական ինքնուրույնության հնարավորություն ստեղծեր բնիկ ժողովուրդների համար՝ զերծ պահելով նրանց արտաքին միջամտություններից: Կարևորվեց նաև բնիկ ժողովուրդների՝ երկրի բնական ռեսուրսները տնօրինելու իրավունքը: Այս իրավունքների մի մասը հետագայում տեղ գտավ 1981 թվականին ընդունված Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիայում:

Երրորդ սերնդի իրավունքներ

Ժողովուրդների ինքնորոշման իրավունք
Զարգացման իրավունք
Խաղաղության իրավունք
Բնական ռեսուրսների հասանելիության իրավունք
Հաղորդակցման իրավունք
Առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունք
Հիմնական հանրային ծառայություններին հասանելիություն ունենալու իրավունք
Աղետների ժամանակ օգնություն ստանալու իրավունքը

Ներկայումս զարգացման փուլում են **չորրորդ սերնդի** իրավունքները, որոնք որոշ տեսաբաններ անվանում են **մարդկության իրավունքներ**: Դրանք պայմանավորված են գիտատեխնիկական զարգացումներով, որոնք նոր մարտահրավերներ են ստեղծում մարդկության համար: Այդ իրավունքները վերաբերում են գենետիկ ինժեներիային (խոսքը մարդու կյանքին գենետիկ միջամտությունների մասին է): Մարդկության իրավունքն է սահմանափակել գիտական ու բժշկական միջամտությունը մարդու գենային բնութագրերի զարգացմանը և զերծ մնալ արտաքին ու ներքին բնութագրերի մուտացիաներից:

Չորրորդ սերնդի իրավունքներ

Գենետիկ մանիպուլյացիաներից/մուտացիաներից ազատ լինելու իրավունք
Մարդու գենոմի պաշտպանության իրավունք
Էվթանազիայի իրավունք (արժանապատիվ մահվան իրավունք)
Կլոնավորման արգելք

Քննարկում լսարանում

Կարդալ ստորև ներկայացված տեքստը և քննարկել՝ կյանքի իրավունքը ներառու՞մ է արդյոք նաև մահվան իրավունք, կամ գոյություն ունի՞ արդյոք արժանապատիվ մահվան իրավունք:

Առողջական խնդիրների պատճառով կարող են ստեղծվել իրավիճակներ, երբ մարդը ցանկանում է հրաժարվել կյանքից, սակայն ուզում է իր ինքնասպանությունը կազմակերպել արժանապատիվ ու անցավ եղանակով կամ էլ ֆիզիկապես ի վիճակի չի լինում ինքն իրեն զրկելու կյանքից և ստիպված է դիմել բժիշկների կամ մեկ այլ անձի օգնությանը: Նման դեպքերում մարդն ունի՞ կյանքից արժանապատվորեն հեռանալու իրավունք, և կյանքի իրավունքը ներառու՞մ է նաև մահվան իրավունք:

Այս հարցի շուրջ Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ) մի շարք գանգատներ են ներկայացվել տարբեր պետությունների դեմ: Փրիթթին ընդդեմ Միացյալ Թագավորության գործի (PRETTY v. THE UNITED KINGDOM (Application no. 2346/02)) փաստական հանգամանքները հետևյալն են. գանգատաբեր անձն ունի Մոտոր նեյրոնի դեգեներատիվ հիվանդություն: Հիվանդության վերջին փուլում հիվանդը ծանր ընկճախտի մեջ է ընկնում: Փրիթթին ցանկանում էր զերծ մնալ դրանից և խուսափել ոչ արժանապատիվ մահվանից: Սակայն հիվանդության պատճառով մկաններն այնքան էին թուլացել, որ նա չէր կարողանում իր ուժերով ինքնասպանություն գործել և խնդրում է ամուսնուն, որ նա օգնի իրեն: Ամուսինը, սակայն, վախենում է, որ իրեն կմեղադրեն կնոջն ինքնասպանության հարցում օգնելու կամ սպանության մեջ: Փրիթթին դիմում է տեղական իշխանություններին՝ խնդրելով թույլ տալ ամուսնուն օգնել իրեն, և մերժում է ստանում, որից հետո գանգատ է ուղարկում ՄԻԵԴ: Դատարանը վճռում է, որ Միացյալ Թագավորությունը չի խախտել անհատի կյանքի իրավունքը, քանի որ, ըստ ՄԻԵԴ-ի, առանց լեզվի խեղաթյուրման անհնար է կյանքի իրավունքը մեկնաբանել որպես հակա-

դիր՝ կյանքից զրկվելու իրավունք: Հետագայում ՄԻԵԴ-ը այլ գանգատներ էլ է քննել, որոնք վերաբերում էին ինքնասպանությանը օժանդակելուն և էֆթանազիային (անբուժելի հիվանդությամբ տառապող մարդուն ցավերից ազատելու համար կյանքից զրկելը): Դատարանը հաշվի է առել, որ թեև Եվրոպայի խորհրդի անդամ 47 երկրներում (Բելգիա, Նիդերլանդներ, Միացյալ Թագավորություն, Շվեյցարիա, Շվեդիա և այլն) էֆթանազիայի օրինականացման որոշակի միտում կա, բայց և այնպես, չի կարելի պնդել, թե առկա խնդրի վերաբերյալ անդամ պետությունները հասել են համերաշխության (կոնսենսուսի), և կյանքից արժանապատիվ հեռանալու իրավունքը ընդհանուր արժեք է Եվրոպայում: Եվրոպական մի քանի երկրներից բացի՝ էվթանազիան օրինական է նաև Ավստրալիայում, Կանադայում, ԱՄՆ-ի որոշ նահանգներում, Կոլումբիայում, Հարավային Կորեայում և այլ երկրներում:

1.5. ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգը

Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների պաշտպանության համակարգը բաղկացած է երկու խումբ մարմիններից՝ ՄԱԿ-ի կանոնադրությամբ ստեղծված և պայմանագրերով ստեղծված:

1.5.1. ՄԱԿ-ի կանոնադրությամբ ստեղծված մարմիններ

Գլխավոր ասամբլեա

ՄԱԿ-ի կանոնադրությամբ է ստեղծվել Գլխավոր ասամբլեան (General Assembly): Այն կազմակերպության միակ մարմինն է, որում ընդգրկված են բոլոր անդամ պետությունների ներկայացուցիչները: Գլխավոր ասամբլեան քննարկում և հանձնարարականներ է ներկայացնում հետևյալ նպատակներով.

ՄԱԿ-ի կանոնադրություն

Հոդված 13

ա. աջակցություն միջազգային համագործակցությանը քաղաքականության բնագավառում և միջազգային իրավունքի առաջադիմական զարգացման ու դրա կոդիֆիկացիայի խրախուսում,

բ. աջակցություն միջազգային համագործակցությանը տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական և առողջապահության ասպարեզներում և օժանդակություն բոլորի համար մարդու իրավունքների և հիմնական ազատությունների իրականացմանը՝ առանց ցեղային, սեռային, լեզվի և դավանանքի տարբերակման:

(Աղբյուրը՝ www.arlis.am)

Գլխավոր ասամբլեան իրավասու է Անվտանգության խորհրդի ուշադրությունը հրավիրելու այն իրավիճակների վրա, որոնք կարող են սպառնալ միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը: Այն նաև ստանում և քննարկում է Անվտանգության խորհրդի ամե-

նամյա և հատուկ զեկույցները, ինչպես նաև ՄԱԿ-ի մյուս մարմինների զեկույցները: Գլխավոր ասամբլեան ուղենշում է աշխարհի զարգացման առաջնահերթությունները: 2015 թվականին այն ընդունել է մի հավակնոտ բանաձև (A/RES/70/1), որով սահմանված օրակարգի համաձայն՝ 2030 թվականին աղքատությունը վերանալու է, և ամբողջ աշխարհում խթանվելու են տնտեսական բարգավաճումը, սոցիալական զարգացումն ու շրջակա միջավայրի պահպանությունը:

Գլխավոր ասամբլեայի ընդունած բանաձևերն իրավաբանորեն պարտավորեցնող չեն, սակայն արտահայտում են միջազգային հանրության վերաբերմունքն այս կամ այն խնդրի վերաբերյալ: Բանաձևի կարևորությունն ու կատարման պարտադրանքի աստիճանը կախված են նաև դրա ընդունման պայմաններից, մասնավորապես, թե քանի պետություն է կողմ քվեարկել դրա օգտին: Ասամբլեայի ընդունած բանաձևերը կարող են անկատար մնալ, ինչպես, օրինակ, Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ընդունած բանաձևը[2]:

Ազատություն Ռադիոկայան 17 մարտ 2008

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց Լեռնային Ղարաբաղի հարցով բանաձևը

39 կողմ, 7 դեմ և 100 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան ուրբաթ օրը ընդունեց Լեռնային Ղարաբաղի հարցով բանաձևը, որի նախագիծը շրջանառության մեջ էր դրվել ադրբեջանական պատվիրակության կողմից: Բանաձևում մասնավորապես նշված է.

«Ադրբեջանական Հանրապետության Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում և դրա շուրջ առկա ռազմական հակամարտությունը վտանգում

[2] Տե՛ս Resolution adobted by the General Assembly on 14 March 2018, A/RES/ 62/243, https://undocs.org/en/A/RES/62/243 (մուտք՝ 20.02.2020 թ.):

է միջազգային անվտանգությունն ու խաղաղությունը: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան այս բանաձևով մեկ անգամ էլ ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը՝ միջազգայնորեն ճանաչված սահմաններում: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան այս բանաձևով նաև պահանջում է գրավյալ տարածքներից հայկական բոլոր ուժերի անհապաղ, անվերապահ ու լիակատար դուրսբերում»:

«ՄԱԿ-ի անդամ որևէ պետություն չպետք է օրինական ճանաչի այն իրավիճակը, որ հիմա առկա է Լեռնային Ղարաբաղում, և չպետք է դիմի որևէ քայլի, որ կարող է նպաստել այս կացության պահպանմանը կամ ամրապնդմանը»,- ասված է ՄԱԿ-ի բանաձևում:

Փաստաթուղթը նաև հաստատում է «Ադրբեջանական Հանրապետության օկուպացված տարածքներից տեղահանված անձանց անքակտելի իրավունքը՝ վերադառնալ իրենց օջախները»: Սրան զուգահեռ, ՄԱԿ-ի անդամների կողմից վերահաստատված այս բանաձևում նշվում է, որ կազմակերպությունը ընդունում է «Ղարաբաղի հայկական և ադրբեջանական համայնքների համար հավասար պայմաններ ստեղծելու անհրաժեշտությունը»:

Բանաձևի քվեարկությունից առաջ ասամբլեայի լիագումար նիստին թեժ բանավեճ էր ծավալվել, որի ընթացքում Մինսկի խմբի համանախագահ երկրներից երկուսի՝ Միացյալ Նահանգների և Ֆրանսիայի ներկայացուցիչները դեմ արտահայտվեցին ադրբեջանցի դիվանագետների կողմից պատրաստված այս փաստաթղթի ընդունմանը: Ամերիկյան պատվիրակության անդամ Ալեխանդրո Վուլֆը, ելույթ ունենալով Մինսկի խմբի համանախագահների անունից, ասել է, թե ներկայացված բանաձևում տեղ է գտել Մինսկի խմբի համանախագահների առաջարկների միայն մի մասը, ինչի հետևանքով փաստաթուղթը հավասարակշռված բնույթ չունի: «Նման ընտրովի մոտեցումը կարգավորման սկզբունքներին ստիպում է մեր երեք պետություններին դեմ արտահայտվել ներկայացված նախագծին»,- հայտարարել է Վուլֆը:

ՄԱԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ Արմեն Մարտիրոսյանը ևս ընդգծել է փաստաթղթի միակողմանի բնույթը՝ ասելով, թե «ՄԱԿ-ի պատմության մեջ սա աննախադեպ մի երևույթ է, երբ փորձ է արվում ընդունել մի բանաձև՝ նախապես դրա շուրջ խորհրդակցություններ ու քննարկումներ չկազմակերպելով»: «Ադրբեջանը նպատակ ունի այս քայլով իր ցանկությունները խտացնել մեկ առանձին վերցված թղթի կտորի վրա»,- հայտա-

ղարել է Մարտիրոսյանը՝ համոզմունք հայտնելով, թե «այսպիսի բանաձև շրջանառության մեջ դնելով՝ Ադրբեջանը կարող է խաթարել ողջ բանակցային գործընթացը»:

Ադրբեջանին աջակցություն հայտնած պետությունների մեծ մասը «Իսլամական համաժողով» կազմակերպության անդամներն են, այդ թվում՝ Թուրքիան, ինչպես նաև ԱՊՀ-ի անդամ պետություններից՝ Վրաստանը, Մոլդովան, Ուկրաինան, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ Ուզբեկստանը: Ադրբեջանական պատվիրակության պատրաստած բանաձևին կողմ է արտահայտվել նաև Սերբիան: Ինչ վերաբերում է ադրբեջանական առաջարկին դեմ հանդես եկած երկրներին, ապա դրանց թվում են Մինսկի խմբի համանախագահ երեք պետությունները՝ Ֆրանսիան, ԱՄՆ-ն և Ռուսաստանի Դաշնությունը, ինչպես նաև Հնդկաստանը, Անգոլան ու Օվկեանիայում գտնվող փոքրիկ Վանուատու կղզին: ՄԱԿ-ի անդամ մյուս պետությունները կա՛մ ձեռնպահ են քվեարկել, կա՛մ էլ ընդհանրապես չեն մասնակցել քվեարկությանը:

Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանը արդեն իսկ հույս է հայտնել, որ այս բանաձևը «ահազանգ կհանդիսանա Ադրբեջանի համար, քանի որ ՄԱԿ-ի անդամ պետությունների ճնշող մեծամասնությունը դեմ է արտահայտվել Լեռնային Ղարաբաղի հարցում միակողմանի մոտեցումներին»: Հայաստանի արտգործնախարարության ուշ գիշեր տարածած հայտարարության մեջ էլ նշվում է, թե ՄԱԿ-ում անցկացված քվեարկությունը տրամադրությունների յուրատեսակ ստուգատես էր: «Այն ցույց տվեց, որ ՄԱԿ-ի անդամ ընդամենը 39 պետություն է պաշտպանում ադրբեջանական կողմի մոտեցումները, այն դեպքում, երբ Մինսկի խմբի համանախագահ պետությունները դեմ հանդես եկան դրանց, իսկ ՄԱԿ-ի ավելի քան 150 անդամ ընդհանրապես ձեռնպահ մնաց կամ չմասնակցեց քվեարկությանը»:

Ադրբեջանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Արազ Ազիմովի պնդմամբ, ընդունված բանաձևը «շատ կարևոր մի փաստաթուղթ է, որն ինչպես իրավաբանական, այնպես էլ քաղաքական ուժ ունի»: Ազիմովը խիստ քննադատության է ենթարկել ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահներին՝ պնդելով, թե վերջիններն իրենց շատ ծանր կացության մեջ են դրել: «Համանախագահները թող չկասկածեն, որ այսուհետև այն ամբողջ աշխատանքը, որ նրանց հետ է տարվելու, հիմնված է լինելու ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից հաստատված սկզբունքների վրա: Մինսկի խմբի գործունեությունը պետք է շարունակվի ՄԱԿ-ի երեկ ընդունված բանաձևի հիման վրա»,- ասել է Ազիմովը:

Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարը

1993 թվականին Գլխավոր ասամբլեայի ընդունած բանաձևի հիման վրա ստեղծվեց ՄԱԿ-ում մարդու իրավունքների համար պատասխանատու բարձրագույն՝ մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի պաշտոնը: Հանձնակատարի պարտավորությունների ու լիազորությունների շրջանակում են քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային բոլոր իրավունքների պաշտպանությունը, մարդու իրավունքների ոլորտում ՄԱԿ-ի կրթական և տեղեկատվական ծրագրերի համակարգումը, միջազգային համագործակցության ընդլայնումը մարդու իրավունքների քարոզչության և պաշտպանության գործում, ՄԱԿ-ի համակարգի միջոցով մարդու իրավունքների քարոզչության ու պաշտպանության համակարգումը և այլն:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարը գլխավոր քարտուղարի տեղակալն է: Նրան Գլխավոր ասամբլեայի հավանությամբ նշանակում է գլխավոր քարտուղարը՝ չորս տարի ժամկետով: Հանձնակատարն ունի գրասենյակ, որը Մարդու իրավունքների խորհրդի, պայմանագրային մարմինների և ՄԱԿ-ի մարդու իրավունքների այլ կառույցների համար ծառայում է որպես քարտուղարություն:

Անվտանգության խորհուրդը

ՄԱԿ-ի «ուժային կառույցը» Անվտանգության խորհուրդն է (ԱԽ), որը բանաձևեր է ընդունում և հանձնարարականներ տալիս՝ միջազգային խաղաղությունն ու անվտանգությունն ապահովելու նպատակով: Դրանում ընդգրկված են ՄԱԿ-ի 15 անդամ պետություններ, որոնցից 5-ը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները, Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան, Չինաստանը և Ֆրանսիան, մշտական անդամներ են: Մնացած 10 անդամներն ընտրվում են 2 տարի ժամկե-

տով՝ նպատակ ունենալով ապահովելու աշխարհագրական համամասնությունը:

Անվտանգության խորհրդի որոշումները պարտադիր են ՄԱԿ-ի անդամ պետությունների համար: Դրանք ընդունվում են անդամների 9 կողմ ձայներով, ներառյալ բոլոր մշտական անդամների համընկնող ձայները: Որոշումներն ընդունելիս վեճին մասնակցող անդամը պետք է ձեռնպահ մնա քվեարկությունից: Խորհրդի մշտական անդամներն ունեն վետոյի իրավունք. ցանկացած բանաձևի նրանց դեմ քվեարկելու դեպքում այդ բանաձևը չի ընդունվի, եթե անգամ մնացած 14 անդամները կողմ քվեարկեն: Սա բազմիցս ԱԽ-ում ճգնաժամերի պատճառ է դարձել և անհնարին դարձրել ՄԱԿ-ի անհապաղ միջամտությունը բոլոր այն դեպքերում, երբ եղել է դրա կարիքը: ՄԱԿ-ը չունի սեփական զորք՝ իր որոշումներն ի կատար ածելու համար, փոխարենը Անվտանգության խորհրդի տրամադրության տակ են անդամ պետությունների ազգային զինված ուժերը[3]:

Անվտանգության խորհրդի դերակատարումն էլ ավելի ընդգծվեց 2005 թվականին տեղի ունեցած Համաշխարհային գագաթաժողովի ժամանակ, երբ Գլխավոր ասամբլեան ընդունեց ամփոփիչ բանաձև[4], որում տեղ գտավ «Բնակչությանը ցեղասպանությունից, պատերազմական հանցագործություններից, էթնիկ մաքրումներից և մարդկության դեմ հանցագործություններից պաշտպանելու պարտավորություն» հատվածը: Բանաձևի 138-139-րդ պարբերություններում նշվում է, որ անդամ պետությունները պարտավորություն են ստանձնում պաշտպանելու իրենց բնակչությանը: Նման պարտավորություն է ստանձնում նաև միջազգային հանրությունը՝ ի դեմս ՄԱԿ-ի, եթե

---

[3] Անդամ պետությունների մասնակցությունը ՄԱԿ-ի զինված ուժերի գործողություններին տե՛ս https://peacekeeping.un.org/en/troop-and-police-contributors (մուտք՝ 20.02.2020 թ.):

[4] Տե՛ս Resolution adopted by the General Assembly on 16 September 2005, A/RES/60/1, https://www.un.org/en/development/desa/population/migration/generalassembly/docs/globalcompact/A_RES_60_1.pdf (մուտք՝ 20.02.2020 թ.):

պետությունները չեն կարողանում պաշտպանել իրենց բնակչությանը:

Սեփական բնակչությանը պաշտպանելու պարտավորության գաղափարը ձևավորվեց 1990-ականներին տեղի ունեցած ցեղասպանությունն ու կոտորածները կանգնեցնելու անկարողության հետևանքով: 1994 թվականին Ռուանդայում տեղի ունեցած ցեղասպանության ժամանակ ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելությունը թեև տեղում էր, սակայն չկարողացավ կանխարգելել զանգվածային սպանությունները: Սա այն դեպքում, երբ ՄԱԿ-ի՝ Ռուանդայում մարդու իրավունքների հետաքննիչը դեռ նախորդ տարի էր զգուշացրել հնարավոր ցեղասպանության մասին: 1994 թվականի ապրիլի 5-ին Անվտանգության խորհուրդը միաձայն ընդունեց բանաձև, որով իր մտահոգությունը հայտնեց Ռուանդայում ստեղծված իրավիճակի վերաբերյալ, սակայն առավել ակտիվ ներգրավվածության մասին փաստաթղթում ոչինչ չէր ասվում: Միայն նույն թվականի մայիսի 17-ին, երբ ցեղասպանությունը փաստացի ավարտված էր, Անվտանգության խորհուրդը նոր բանաձև է ընդունում Ռուանդայի վերաբերյալ՝ դատապարտելով բռնություններն ու կոչ անելով անհապաղ դադարեցնելու էթնիկ ատելության տարածումը: Բանաձևով ՄԱԿ-ի առաքելության ուժերին հանձնարարվում էր ապահովել տեղահանված բնակչության անվտանգությունն ու ստեղծել նպաստավոր պայմաններ՝ մարդասիրական օգնության տրամադրման համար: Քննադատները Ռուանդայի հարցում Անվտանգության խորհրդի հապաղումը պայմանավորում են ԱԽ մշտական անդամների, հատկապես՝ ԱՄՆ-ի՝ միջամտելու դժկամությամբ:

Անվտանգության խորհրդի ձախողման մեկ այլ օրինակ է Սրեբրենիցայի կոտորածը: 1995 թվականի հուլիսին Բոսնիական պատերազմի ընթացքում Սրեբրենիցա քաղաքում և դրա մոտակայքում սպանվեցին շուրջ 8000 բոսնիացիներ: Արյունոտ իրադարձությունները տեղի ունեցան մի քաղաքում, որը դեռևս 1993 թվականին Անվտանգության խորհրդի կողմից հռչակվել էր որպես «անվտանգ տարածք»: ՄԱԿ-ի առաքելությունն անկարող եղավ կանգնեցնելու

ջարդերը բավարար ուժեր չունենալու և հավելյալ զորքեր չուղարկելու պատճառով:

2005 թվականին ընդունված «պաշտպանելու պարտավորությունից» հետո ևս ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը մեծ առաջընթաց չի գրանցել խաղաղ բնակչությանը կոտորածներից փրկելու առումով: 2011 թվականին սկսված սիրիական ճգնաժամը ևս մեկ անգամ հաստատեց, որ Անվտանգության խորհուրդը դեռևս չի կարողանում ժամանակին արձագանքել և կանխարգելել մարդու իրավունքների զանգվածային խախտումները: ԱԽ-ում վետոյի իրավունքը սիրիական ճգնաժամի հարցում ընդգծեց նրա քվեարկության կարգի անկատարությունը: 2011 թվականից առ այսօր Ռուսաստանը Սիրիային վերաբերող բանաձևերի քվեարկության ժամանակ օգտագործել է վետոյի իր իրավունքն ավելի քան 10 անգամ՝ թույլ չտալով այնպիսի բանաձևերի ընդունումը, որոնք վերաբերում էին Սիրիայում մարդու իրավունքների զանգվածային խախտումները դատապարտելուն, պատժամիջոցներ կիրառելուն, Սիրիայում կատարված հանցանքները Միջազգային քրեական դատարան ներկայացնելուն, Հալեպում ռմբակոծությունները դադարեցնելուն, քիմիական զենքի օգտագործման վերաբերյալ հետաքննություն անցկացնելուն և այլն: Անվտանգության խորհրդի մշտական անդամների քաղաքական հակամարտությունները մի կողմից հավասարակշռություն են մտցնում խորհրդում, մյուս կողմից դառնում են կարևոր բանաձևերի ընդունման ուշացման պատճառ՝ արժենալով հազարավոր մարդկանց կյանքեր:

ՄԱԿ-ի կանոնադրություն

Հոդված 39. Անվտանգության խորհուրդը որոշում է խաղաղության նկատմամբ ցանկացած սպառնալիքի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի ակտի առկայությունը և հանձնարարականներ է ներկայացնում կամ վճռում է, թե համաձայն 41-րդ և 42-րդ հոդվածների, ինչ միջոցներ պետք է ձեռնարկվեն միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման կամ վերականգնման համար:

Հոդված 40. Իրավիճակի վատթարացումը կանխելու նպատակով Անվտանգության խորհուրդը նախքան հանձնարարականներ տալը կամ 39 հոդվածով նախատեսված միջոցներին դիմելու որոշումը կարող է պահանջել շահագրգիռ կողմերից կատարելու այն ժամանակավոր միջոցառումները, որոնք անհրաժեշտ կամ ցանկալի կհամարի: Նման ժամանակավոր միջոցառումները չպետք է լինեն ի վնաս շահագրգիռ կողմերի իրավունքներին, հավակնություններին կամ դիրքին: Անվտանգության խորհուրդը հարկ եղած կերպով ուշադիր է առնում նման ժամանակավոր միջոցառումները չկատարելը:

Հոդված 41. Անվտանգության խորհուրդը կարող է որոշել, թե զինուժի գործածությունից զերծ ինչպիսի միջոցների է պետք դիմել իր որոշումներն իրականացնելու համար և պահանջել Միավորված ազգերի կազմակերպության անդամներից կիրառել այդ միջոցները: Դրանք կարող են ընդգրկել տնտեսական հարաբերությունների, երկաթուղային, ծովային, օդային, փոստային, հեռագրային, ռադիո և հաղորդակցության այլ ձևերի լիակատար կամ մասնակի ընդհատումը և դիվանագիտական հարաբերությունների խզումը:

Հոդված 42. Եթե Անվտանգության խորհուրդը համարում է, որ 42 հոդվածով նախատեսված միջոցները անբավարար կլինեն կամ արդեն իսկ անբավարար են, կարող է օդային, ծովային կամ ցամաքային ուժերով նախաձեռնել այնպիսի գործողություններ, որոնք անհրաժեշտ կհամարվեն միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու կամ վերականգնելու համար: Դրանք կարող են ներառել Միավորված ազգերի կազմակերպության անդամների օդային, ծովային կամ ցամաքային զինուժի ցուցադրություններ, շրջափակում և այլ գործողություններ:

(Աղբյուրը՝ www.arlis.am)

Տնտեսական և սոցիալական խորհուրդը

Տնտեսական և սոցիալական խորհուրդը միջազգային տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական, առողջապահական և համանման այլ հարցերի վերաբերյալ հետազոտություններ է նախաձեռնում և զեկուցագրեր է պատրաստում, նաև հանձնարարականներ է ներկայացնում Գլխավոր ասամբլեային: Այն իրավասու է նաև հանձ-

նարարականներ ներկայացնելու մարդու իրավունքների պաշտպանության խրախուսման նպատակով:

Տնտեսական և սոցիալական խորհուրդը կազմված է 54 անդամից, որոնց ընտրում է Գլխավոր ասամբլեան: Այն ստեղծել է բազմաթիվ կոմիտեներ և հանձնաժողովներ, որոնց աշխատանքը ներառում է մարդու իրավունքների պաշտպանությունը: 1946 թվականին հիմնադրել է Մարդու իրավունքների հանձնաժողովը, որը հետագայում փոխարինվեց Մարդու իրավունքների խորհրդով:

Մարդու իրավունքների խորհուրդը

Ի տարբերություն համանուն հանձնաժողովի՝ Մարդու իրավունքների խորհուրդը Գլխավոր ասամբլեայի ենթադասային մարմինն է: Կարգավիճակի այս բարձրացումն ընդգծում է, որ մարդու իրավունքները, ինչպես զարգացումը, խաղաղությունն ու անվտանգությունը, Միավորված ազգերի կազմակերպության էական հիմնասյուներից են: Մարդու իրավունքների խորհուրդը կազմված է 47 անդամից, որոնց Գլխավոր ասամբլեան ընտրում է ՄԱԿ-ի անդամ պետություններից ուղղակիորեն և առանձին-առանձին, գաղտնի քվեարկությամբ: Անդամ պետություններ ընտրելիս հաշվի է առնվում թեկնածու պետությունների գրանցած արդյունքները մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում և նրանց խոստումներն ու կամավոր ստանձնած հանձնառությունները: Խորհրդի անդամ պետություններն ընտրվում են երեք տարի ժամկետով և վերընտրվելու իրավունք չունեն իրար հաջորդող երկու ժամկետների ավարտից անմիջապես հետո: Եթե անդամ պետությունը կատարում է մարդու իրավունքների կոպիտ և պարբերական ոտնահարումներ, Գլխավոր ասամբլեան ներկա և քվեարկող անդամների ձայների երկու երրորդով կարող է որոշում կայացնել ժամանակավորապես դադարեցնելու այդ պետության անդամակցությունը տվյալ խորհրդին: Մարդու իրավունքների խորհուրդը հանձնարարականներ է տալիս մարդու իրավունքների վերաբերյալ, ինչպես նաև տարեկան զեկույց է ներկայաց-

նում Գլխավոր ասամբլեային: Նրա հիմնական գործառույթներից մեկը **համընդհանուր պարբերական դիտարկում** անցկացնելն է, որի ընթացքում քննվում է բոլոր անդամ պետություններում մարդու իրավունքների դրությունը, և տրվում են հանձնարարականներ: Ամեն տարի Մարդու իրավունքների խորհրդում դիտարկվում է 48 երկիր: Հետևաբար նույն երկրում մարդու իրավունքների դրությունը դիտարկվում է 4-5 տարին մեկ անգամ: Դիտարկումը կատարվում է անդամ պետության կառավարության ներկայացրած պաշտոնական, ինչպես նաև ՄԱԿ-ի այլ մարմինների կամ գործակալությունների հաղորդած և հասարակական կազմակերպությունների տրամադրած տեղեկատվության հիման վրա: Դիտարկման ընթացքում խորհրդի անդամները կարող են հարցեր ուղղել և հանձնարարականներ տալ դիտարկվող պետությանը: Խորհուրդը գնահատում է, թե տվյալ անդամ պետությունը կատարու՞մ է ՄԱԿ-ի կանոնադրությամբ, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով», ինչպես նաև ՄԱԿ-ի կոնվենցիաներով ստանձնած պարտավորությունները: Որպես արդյունք կազմվում է զեկույց տվյալ երկրի դիտարկման վերաբերյալ: Պետությունը պարտավորվում է կատարել վերջնարդյունքային զեկույցում նշված հանձնարարականները և դրանց վերաբերյալ զեկուցել հաջորդ դիտարկման ընթացքում: Համընդհանուր պարբերական դիտարկման նպատակը ՄԱԿ-ի յուրաքանչյուր անդամ պետությունում մարդու իրավունքների դրության բարելավումն է:

Մարդու իրավունքների հատուկ ընթացակարգեր

ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգում առանձնահատուկ դերակատարում ունեն Մարդու իրավունքների խորհրդի կողմից ստեղծված հատուկ ընթացակարգերի մեխանիզմները (Special Procedures): Սրանք ՄԱԿ-ի՝ հատուկ մանդատ ունեցող պաշտոնյաներն են, ովքեր գրավոր հաղորդագրություններով կարող են ուղղակիորեն միջամտել կառավարությունների գործերին, երբ խոսքը են-

թաղրաբար մարդու իրավունքների այնպիսի խախտումների մասին է, որոնք առնչվում են նրանց մանդատին: Հատուկ ընթացակարգերի մեխանիզմները կարող են միջամտել բոլոր այն դեպքերում, երբ արդեն իսկ գրանցվել են մարդու իրավունքների խախտումներ, երբ դրանք ընթացքի մեջ են, կամ հավանական է, որ մոտ ապագայում տեղի կունենան: Գործընթացի շրջանակներում համապատասխան պետության կառավարությանն ուղարկվում է նամակ, որում մատնանշվում են ենթադրյալ խախտումների փաստերը, և արտահայտվում է մանդատառուի մտահոգությունն առկա հանգամանքների վերաբերյալ: Նամակով մանդատառուն կառավարությանը խնդրում է քայլեր ձեռնարկել իրավունքի հավանական խախտումը կանխարգելելու նպատակով, իսկ եթե այն արդեն տեղի է ունեցել, իրականացնել համապատասխան հետաքննություն: Հաղորդումները կարող են վերաբերել մարդու իրավունքների խախտումների անհատական դեպքերին, ընդհանուր միտումներին, կոնկրետ խմբին կամ համայնքին առնչվող դեպքերին, գոյություն ունեցող կամ նախագծման փուլում գտնվող օրենսդրական ակտերին, որոնք ամբողջությամբ չեն համապատասխանում մարդու իրավունքների միջազգային չափանիշներին:

Հատուկ ընթացակարգերի մեխանիզմները երկու տեսակի մանդատ են ունենում՝ ըստ երկրների և ըստ թեմաների: Ըստ երկրների մանդատները տրվում են տվյալ երկրում մարդու իրավունքների զանգվածային և շարունակական խախտումների դեպքում, երբ անհրաժեշտություն է առաջանում առավել հանգամանալից տեղեկատվություն հավաքելու իրավիճակի վերաբերյալ և հարկ եղած դեպքում միջամտելու: Վերջին տարիներին հատուկ զեկուցողներ են նշանակվել հետևյալ երկրներում՝ Բելառուս, Կամբոջա, Էրիտրեա, Իրան, Մալի, Մյանմար, Սուդան, Սիրիա, պաղեստինյան օկուպացված տարածքներ:

Թեմատիկ մանդատները բազմազան են: Դրանք հիմնականում նշանակվում են որևէ խմբի իրավունքների խախտումների ուսումնասիրության, պարբերական զեկուցման անհրաժեշտության դեպքում

միջամտության նպատակով: Թեմատիկ մանդատներ ունեն բնիկ ժողովուրդների, ներգաղթյալների, փոքրամասնությունների իրավունքների, իրավաբանների ու դատավորների անկախության, կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների ու հետևանքների թեմաներով հատուկ զեկուցողները, սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիման վրա բռնության ու խտրականության պաշտպանության հատուկ փորձագետը և այլն: Թեմատիկ զեկուցողներին կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ ուղարկելով էլեկտրոնային նամակ և նկարագրելով այդ մանդատին առնչվող խնդիրները որևէ երկրում: Ստանալով տեղեկատվություն՝ հատուկ զեկուցողն ինքն է որոշում՝ միջամտել, թե ոչ: Միջամտության համար գոյություն ունեն չափանիշներ, որոնք վերաբերում են աղբյուրի հուսալիությանը և ստացված տեղեկության վստահելիությանը, ներկայացված մանրամասներին ու մանդատի ընդգրկմանը:

Արդարադատության միջազգային դատարանը

Արդարադատության միջազգային դատարանը Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր դատական մարմինն է: ՄԱԿ-ի կանոնադրությունը սահմանում է, որ Միավորված ազգերի կազմակերպության յուրաքանչյուր անդամ պարտավորվում է կատարել Արդարադատության միջազգային դատարանի վճիռներն այն գործերով, որոնց մասնակից է: Եթե գործի մասնակից կողմը չի ցանկանում կամ թերանում է կատարել դատարանի կայացրած վճռով իր վրա դրված պարտականությունները, մյուս կողմն իրավունք ունի դիմելու Անվտանգության խորհրդին՝ ակնկալելով, որ վերջինս կարող է հանձնարարականներ տալ կամ որոշել այն միջոցառումները, որոնց պետք է դիմել դատարանի վճիռն ի կատար ածելու համար: Դատարանը, բացի միջազգային վեճերի քննումից, ունի նաև խորհրդակցական առաքելություն: Ցանկացած իրավական հարցի վերաբերյալ խորհրդակցական վճիռ ստանալու համար Արդարադատության միջազգային դատարան կարող է դիմել Գլխավոր ասամբլեան կամ

Անվտանգության խորհուրդը: Միջազգային վեճի դեպքում նրան կարող են դիմել ՄԱԿ-ի այն անդամ պետությունները, որոնք համաձայնել են իրենց խնդրի լուծումը ստանալ Արդարադատության միջազգային դատարանում: Դատարանը քննում է այնպիսի գործեր, ինչպիսիք են երկու պետությունների միջև սահմանային վեճերը, սահմանային ջրային ռեսուրսների օգտագործման և տնօրինման վեճերը, զինված բախումները և այլն:

1.5.2. ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգի պայմանագրային մարմինները

ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգում կարևոր նշանակություն ունեն պայմանագրային մարմինները: ՄԱԿ-ի պայմանագրերը մարդու իրավունքների բազմակողմ միջազգային դաշնագրեր ու կոնվենցիաներ են, որոնք պայմանագրեր են: Այդ պայմանագրերով երաշխավորվում են մարդու իրավունքները, իսկ պետությունների կողմից այդ իրավունքների նկատմամբ հարգանքն ու պաշտպանությունը մշտադիտարկելու նպատակով ստեղծվել են հատուկ մարմիններ՝ կոմիտեներ: Պայմանագրերի իրավասությունը տարածվում է միայն այն պետությունների վրա, որոնք ստորագրել և վավերացրել են դրանք:

Հայաստանը ստորագրել և վավերացրել է ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների գրեթե բոլոր կարևոր կոնվենցիաներն ու դաշնագրերը, հաճախ՝ դրանց կամընտիր արձանագրություններով (թվով 18): Այս ենթագլխի շրջանակներում մենք կքննարկենք դրանցից վեցը՝ ուսումնասիրելով դրանց պաշտպանական մեխանիզմները:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր»
(International Covenant on Civil and Political Rights)

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը» մարդու իրավունքներին վերաբերող ամենահեղինակավոր փաստաթղթերից է: Այն ուժի մեջ է մտել 1976 թվականին: Դաշնագիրը ստորագրել է 179, վավերացրել 173 պետություն: Ստորագրելու և վավերացնելու միջև որոշակի ժամանակահատված է ընկած: Պետության կառավարության ներկայացուցիչը ստորագրում է փաստաթուղթը, իսկ օրենսդիր մարմինը՝ վավերացնում: Պայմանագիրը տվյալ պետությունում ուժի մեջ է մտնում միայն վավերացումից հետո: Հայաստանում այն ուժի մեջ է մտել 1993 թվականին:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» նախաբանում նշված է, որ մարդու իրավունքները ծագում են մարդու բնածին արժանապատվությունից՝ ընդգծելով, որ իրավունքների ճանաչումը ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմքն է:

Դաշնագրի առաջին հոդվածը սահմանում է ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, մի իրավունք, որը դաշնագրի ստեղծման ժամանակաշրջանում մի շարք երկրներում դեռևս հարգված ու պաշտպանված չէր: Դաշնագիրը նաև երաշխավորում է առաջին սերնդի իրավունքներ՝ կյանքի, խոշտանգումներից զերծ լինելու, ազատության, օրենքի առջև հավասարության, ընտրության, անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքները, խղճի, մտքի, կրոնի, կարծիք արտահայտելու ազատությունը և այլն: Դաշնագրով ստեղծվել է Մարդու իրավունքների կոմիտեն, և սահմանվել են դրա աշխատանքի պայմանները:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր

Հոդված 40. 1. Սույն դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են զեկույցներ ներկայացնել սույն դաշնագրով ճանաչվող իրավունքների կենսագործման ուղղությամբ իրենց կողմից ձեռնարկված միջոցների մասին և այդ իրավունքների օգտագործման բնագավառում ձեռք բերված առաջադիմության մասին.

ա) սույն դաշնագրի՝ ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ համապատասխան մասնակից պետությունների վերաբերյալ.

բ) դրանից հետո՝ բոլոր այն դեպքերում, երբ դա կպահանջի Կոմիտեն (սովորաբար 4 տարին մեկ):

4. Կոմիտեն ուսումնասիրում է սույն դաշնագրի մասնակից պետությունների կողմից ներկայացվող զեկույցները: Նա մասնակից պետություններին է ուղարկում իր զեկույցները և ընդհանուր կարգի այնպիսի դիտողություններ, որոնք ինքը նպատակահարմար կհամարի:

(Աղբյուրը՝ www.arlis.am)

Մասնակից պետության ներկայացրած զեկույցի վերաբերյալ կոմիտեն հարցեր է ուղղում կառավարություններին, հետևում է առկա խնդիրների ուղղությամբ կատարվող փոփոխություններին և իր դիրքորոշումն է հայտնում դրանց վերաբերյալ: Բացի մասնակից պետությունների զեկույցները քննելուց՝ Մարդու իրավունքների կոմիտեն նաև ընդհանուր մեկնաբանություններ (general comments) է անում սույն դաշնագրի հոդվածների իրագործման վերաբերյալ՝ պարզաբանելով ու հստակեցնելով դրանց պահանջները:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» կամընտիր արձանագրության՝ ուժի մեջ մտնելուց հետո (116 երկիր վավերացրել է կամընտիր արձանագրությունը, այդ թվում՝ Հայաստանը) Մարդու իրավունքների կոմիտեին իրավունք է վերապահվել նաև ընդունելու և քննելու անհատների ներկայացրած գանգատները արձանագրությունը վավերացրած պետությունների դեմ՝ դաշնագրով երաշխավորված իրավունքների խախտման վերաբերյալ: Գանգատներն ընդունվում են, երբ քաղաքացիները դիմել են ներպետական բոլոր ատյաններին և բավարար հիմնավորել են իրենց հաղորդագրությունները (communications): Ստացված գանգատների մասին Մարդու իրավունքների կոմիտեն տեղյակ է պահում մասնակից պետությանը և բացատրություն պահանջում, որը տվյալ երկրի կառավարությունը պետք է ներկայացնի 6 ամսվա ընթացքում: Այնուհետև նա խնդրի վերաբերյալ իր տեսակետն է ներկայացնում տվյալ պետությանն ու գանգատ ներկայացրած անհատին: Մարդու իրավունքների կոմիտեն (ինչպես նաև ՄԱԿ-ի միջազգային պայմանագրերի հիման վրա ստեղծված մյուս կոմիտեները) անհատներից ստացած հաղորդագրությունների հիման վրա, եթե դրանք ընդունելի են ճանաչվում, և արձանագրվում են դաշնագրի հոդվածների խախտումներ, տալիս է տվյալ գործին վերաբերող, ինչպես նաև ընդհանուր հանձնարարականներ: Վերջիններս հիմնականում վերաբերում են նման դեպքերի կրկնության բացառմանն ու պետական մարմինների աշխատանքի համապատասխանեցմանը դաշնագրի պահանջներին: Մարդու իրավունքների կոմի-

տեն չի սահմանում փոխհատուցման չափ հաղորդագրություն ներկայացրած անձի համար, սակայն ընդհանուր առմամբ մասնակից պետությանը հանձնարարում է վերացնել իրավունքի խախտումն ու փոխհատուցել հասցված վնասը:

Մարդու իրավունքների կոմիտեն իրավասու է նաև քննելու միջպետական գանգատներ. այս դեպքում մասնակից պետության դեմ գանգատ է ներկայացնում ոչ թե անհատը, այլ մեկ այլ պետություն:

2017-2018 թվականներին Հայաստանից երկու անհատական հաղորդագրություններ են ուղարկվել Մարդու իրավունքների կոմիտեին. երկուսն էլ՝ խոսքի ազատության խախտման հիմքով (Սարի թաղում 2016 թվականին լրագրողների նկատմամբ կիրառված բռնությունների գործով): Կոմիտեն չի ընդունել գանգատները՝ ներպետական ատյանները սպառած չլինելու հիմքով: Բացի այդ՝ Մարդու իրավունքների կոմիտեն ևս մեկ գանգատ է ստացել ընդդեմ Հայաստանի: ՀՀ քաղաքացի Սվետլանա Խաչատրյանն իր գանգատն ուղարկել էր 2001 թվականին, իսկ դիմումն անընդունելի ճանաչելու մասին որոշումը կայացվել է միայն 2005 թվականին: Կոմիտեն գտել է, որ քաղաքացու ներկայացրած գանգատը բավարար չափով հիմնավորված չէ:

«Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր»

(International Covenant on Economic, Social and Cultural Rights)

Երկրորդ սերնդի իրավունքները սահմանող այս միջազգային պայմանագիրն ուժի մեջ է մտել 1976 թվականին: Այն ստորագրել է 174, վավերացրել է 170 պետություն: Այս դաշնագիրը «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» և «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» հետ կազմում է Մարդու իրավունքների միջազգային օրինաշարը: «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը» երաշխավորում է աշխատանքի, սոցիալական ապահովագրության, բավարար կենսամակարդակի, սովից պաշտ-

պանված լինելու, առողջությունն առավելագույնս ապահովելու, կրթություն ստանալու և մշակութային կյանքին մասնակցելու իրավունքները: Այն հատուկ պաշտպանություն է սահմանում մայրերի համար և արգելում է խտրականությունը: Դաշնագրի 2-րդ հոդվածը մասնակից պետություններին հնարավորություն է տալիս երաշխավորվող իրավունքներն ապահովելու ոչ թե անմիջապես, այլ աստիճանաբար: Ընդ որում, զարգացող երկրներին թույլատրվում է տարբերակված մոտեցում ցուցաբերել ոչ քաղաքացիների նկատմամբ:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր

Հոդված 2. 1. Սույն դաշնագրին մասնակցող յուրաքանչյուր պետություն պարտավոր է անհապաղական կարգով և միջազգային օգնության ու համագործակցության կարգով, մասնավորապես, տնտեսական և տեխնիկական բնագավառներում ***եղած ռեսուրսների առավելագույն սահմաններում*** *միջոցներ ձեռնարկել այն բանի համար, որպեսզի* ***աստիճանաբար****, բոլոր հարկ եղած եղանակներով ներառյալ, մասնավորապես, օրենսդրական միջոցների ընդունումը, ապահովի մարդու՝ սույն դաշնագրում ճանաչվող իրավունքների լրիվ իրականացումը:*

3. Զարգացող երկրները կարող են մարդու իրավունքների և իրենց ժողովրդական տնտեսության հարկը եղած հաշվառմամբ որոշել, թե նրանք որ չափով պետք է երաշխավորեն սույն դաշնագրի մեջ ճանաչվող տնտեսական իրավունքներն այն անձանց համար, ովքեր չեն հանդիսանում նրանց քաղաքացիները:

(Աղբյուրը՝ www.arlis.am)

1985 թվականին ստեղծված Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն վերահսկում է մասնակից պետությունների կողմից սույն դաշնագրով երաշխավորված իրավունքների պաշտպանության մշտադիտարկումը (նախկինում այդ լիազորությունը պատկանում էր Տնտեսական, սոցիալական և մշակութային խորհրդին): Սկսած 2008 թվականից՝ դաշնագրի կամընտիր արձանագրության հաստատումից հետո, կոմիտեն ընդունում ու քննարկում

է նաև անհատական հաղորդագրություններ (գանգատներ) արձանագրությունը վավերացրած պետությունների դեմ: 2019 թվականի դրությամբ՝ նշված կամընտիր արձանագրությունը վավերացրել է ընդամենը 24 պետություն: Սա վկայում է այն մասին, որ շատ երկրներ դեռ պատրաստ չեն լիարժեք ապահովելու երկրորդ սերնդի իրավունքների պաշտպանությունը և չեն ցանկանում հնարավորություն տալ միջազգային կոմիտեին քննելու իրենց դեմ ուղարկված անհատական գանգատները: Հայաստանը 2009 թվականին ստորագրել է կամընտիր արձանագրությունը, սակայն մինչ օրս չի վավերացրել այն:

«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա»

(Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women)

Կանանց իրավունքների ամենահեղինակավոր ու կարևոր փաստաթուղթը «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան» է, որն ընդունվել է 1979 թվականին: Դաշնագիրը ստորագրել է 191, վավերացրել է 189 պետություն: Հայաստանն այն վավերացրել է 1993 թվականին: Կոնվենցիայում բացատրվում է, թե ինչ է կանանց նկատմամբ խտրականությունը:

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա

*Հոդված 1. Սույն Կոնվենցիայի նպատակների համար «**կանանց նկատմամբ խտրականություն**» հասկացությունը նշանակում է սեռի հատկանիշով ցանկացած տարբերություն, բացառություն կամ սահմանափակում, որն ուղղված է տղամարդկանց և կանանց իրավահավասարության հիման վրա քաղաքական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում Մարդու իրավունքներից և հիմնական ազատություններից կանանց օգտվելու թուլացմանը կամ ի չիք դարձնում դրանց ճանաչումը, օգտագործումը կամ իրականացումը՝ անկախ նրանց ընտանեկան դրությունից:*

(Աղբյուրը՝ www.arlis.am)

Կոնվենցիան թույլ է տալիս սեռերի միջև որոշակի տարբերակված մոտեցում՝ հօգուտ կանանց՝ հռչակելով, որ դա խտրականություն չէ: Խոսքը հասարակական, տնտեսական ու քաղաքական կյանքում կանանց մասնակցությունը խթանելու համար ժամանակավորապես ներդրված միջոցների մասին է, որոնցից է, օրինակ, ընտրությունների ժամանակ կիրառվող քվոտայի համակարգը:

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա

Հոդված 4. 1. Մասնակից պետությունների կողմից տղամարդկանց և կանանց միջև փաստական հավասարության սահմանման արագացմանն ուղղված՝ ժամանակավոր հատուկ միջոցների ընդունումը չի համարվում խտրական, ինչպես դա սահմանվում է սույն կոնվենցիայով, սակայն այն ոչ մի կերպ չպետք է հանգեցնի անիրավահավասար կամ շերտավորված չափորոշիչների պահպանմանը, այդ միջոցները պետք է վերացվեն, երբ ձեռք բերվեն հնարավորությունների և իրավահավասար վերաբերմունքի նպատակները:

(Աղբյուրը՝ www.arlis.am)

Կոնվենցիայով ստեղծվել է Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե (CEDAW Committee): Այն, ինչպես մյուս կոմիտեները, ունի երեք հիմնական գործառույթ. 1) ընդունում և քննում է մասնակից պետությունների պարբերական զեկույցները սույն կոնվենցիայի պահանջների իրագործման վերաբերյալ, 2) ընդհանուր հանձնարարականներ է տալիս, 3) ընդունում է գանգատներ անհատներից: Վերջին լիազորությամբ այն օժտվել է 2000 թվականից ուժի մեջ մտած կամընտիր արձանագրությամբ: Հայաստանը վավերացրել է կամընտիր արձանագրությունը 2006 թվականին, սակայն, 2019 թվականի փետրվարի դրությամբ, որևէ գանգատ Հայաստանի դեմ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն չի ստացել:

«Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա»
(Convention on the Rights of the Child)

«Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան» ուժի մեջ է մտել 1990 թվականին: Այն վավերացրել են ՄԱԿ-ի բոլոր անդամ պետությունները, բացառությամբ Միացյալ Նահանգների, որը միայն ստորագրել է այն (ամերիկյան Սենատում ընդդիմադիր խմբակցության անդամները դեմ են քվեարկել կոնվենցիայի վավերացմանը, քանի որ, նրանց կարծիքով, այն հարվածի տակ է դնում ԱՄՆ-ի ինքնիշխանությունը. կոնվենցիայի որոշ հոդվածներ հակասում են մի քանի նահանգների օրենսդրությանը):

Այս կոնվենցիայով երեխա է համարվում 18 տարեկան չդարձած յուրաքանչյուր մարդկային էակ: Դրա նպատակն է առավելագույնս ապահովել երեխայի շահերը: Այն երաշխավորում է երեխայի կյանքի, զարգացման, կրթության և առողջության իրավունքները, մտքի, խղճի ու կրոնի ազատությունը և այլ իրավունքներ: Կոնվենցիան մասնակից պետությունների առջև երեխաների սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների ապահովման բացարձակ պահանջ չի դնում, այլ պարտավորեցնում է առավելագույնս ներդնել առկա ռեսուրսները:

Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա

ՀՈԴՎԱԾ 4. Մասնակից պետությունները չեռնարկում են անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական և այլ միջոցները սույն կոնվենցիայով ճանաչված իրավունքների իրականացման համար: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների վերաբերյալ մասնակից պետություններն այդպիսի միջոցներ չեռնարկում են իրենց տրամադրության տակ եղած ռեսուրսների առավելագույն չափի և, անհրաժեշտության դեպքում, միջազգային համագործակցության շրջանակներում:

(Աղբյուրը՝ www.arlis.am)

Կոնվենցիան սահմանում է, որ հանուն երեխայի լավագույն շահի երեխային կարելի է բաժանել ծնողներից գործող օրենքների և ընթացակարգերի համաձայն, ինչպես նաև մասնակից պետություններին պարտավորեցնում է կոնվենցիայի սկզբունքների և դրույթների մասին լայնորեն իրազեկել մեծահասակներին և երեխաներին:

Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա

ՀՈԴՎԱԾ 9. Մասնակից պետություններն ապահովում են, որպեսզի երեխան, հակառակ ծնողների ցանկության, չբաժանվի նրանցից, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավասու մարմինները, դատարանի որոշման, գործող օրենքի և ընթացակարգի համաձայն, սահմանում են, որ այդպիսի բաժանումն անհրաժեշտ է երեխայի շահերը լավագույնս պաշտպանելու տեսակետից: Նման որոշում կարող է անհրաժեշտ լինել այս կամ այն կոնկրետ դեպքում, օրինակ, երբ ծնողները դաժանորեն են վարվում երեխայի հետ կամ հոգ չեն տանում նրա մասին, կամ երբ ծնողներն առանձին են ապրում և հարկ է վճիռ կայացնել երեխայի բնակության վայրի վերաբերյալ:

ՀՈԴՎԱԾ 19. 1. Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական, սոցիալական և լուսավորչական միջոցները ծնողների, օրինական խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից երեխային ֆիզիկական կամ հոգեկան ճնշման ենթարկելու բոլոր ձևերից, վիրավորանքներից կամ չարաշահումներից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից, ներառյալ սեռական չարաշահումը, պաշտպանելու նպատակով:

(Աղբյուրը՝ www.arlis.am)

Կոնվենցիայով ստեղծվել է Երեխաների իրավունքների կոմիտեն, որն էլ մշտադիտարկում է մասնակից պետությունների ստանձնած պարտավորությունների կատարումը: Երրորդ կամընտիր արձանագրության՝ ուժի մեջ մտնելով՝ Երեխաների իրավունքների կոմիտեին լիազորվել է նաև անհատական հաղորդագրություններ ընդունել այն վավերացրած պետությունների դեմ: 2019 թվականի

դրությամբ՝ տվյալ արձանագրությունը վավերացրել է 44 երկիր: Հայաստանը չի ստորագրել և չի վավերացրել այն: Իսկ, օրինակ, հարևան Վրաստանը վավերացրել է: Այսպիսով, Երեխաների պաշտպանության կոմիտեին լիազորված չէ ընդունել անհատական հաղորդագրություններ (գանգատներ) Հայաստանի դեմ:

«Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի տեսակների դեմ կոնվենցիա»

(Convention against Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment)

«Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի տեսակների դեմ կոնվենցիան» ուժի մեջ է մտել 1987 թվականին: Այն ստորագրել է 173 և վավերացել է 167 պետություն: Հայաստանն այն վավերացրել է 1993 թվականին: Կոնվենցիայում նախ սահմանվում է, թե ինչ է խոշտանգումը, ապա՝ խոշտանգումների բացարձակ արգելքը՝ ընդգծելով, որ խոշտանգումը որևէ իրավիճակում չի կարող արդարացվել, լինի դա պատերազմական դրություն կամ պատերազմի վտանգ, ներքին քաղաքական անկայունություն կամ ցանկացած այլ արտակարգ իրավիճակ: Խոշտանգման արդարացում չի կարող լինել նաև վերադաս պետի կողմից տրված հրամանը: Կոնվենցիան պարտավորեցնում է մասնակից պետություններին քրեականացնել խոշտանգումը՝ ընդունելով համապատասխան օրենք:

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի տեսակների դեմ կոնվենցիա

*ՀՈԴՎԱԾ 1. 1. Համաձայն սույն Կոնվենցիայի նպատակների, «**խոշտանգում**» սահմանումը նշանակում է ցանկացած գործողություն, որի միջոցով պետական պաշտոնյա անձը կամ պաշտոնապես հանդես եկող այլ*

մարդ, կամ նրանց հրահրմամբ և գիտությամբ կամ լռելյայն համաձայնությամբ, որևէ անձի մտածված կերպով հասցնում է ուժեղ ցավ կամ տառապանք՝ մարմնական կամ մտավոր, նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, իր կամ երրորդ անձի կատարած հանցանքի կամ այն գործած լինելու մեջ կասկածելու համար, ինչպես նաև նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ամեն մի այլ պատճառով: Այս բնորոշման մեջ չեն մտնում այն ցավն ու տառապանքը, որոնք ծագում են սոսկ օրինական սանկցիաների պատճառով, անքաժանելի են այդ սանկցիաներից կամ ծագել են դրանցից՝ պատահականորեն:

(Աղբյուրը՝ www.arlis.am)

Մասնակից պետությունները նաև պետք է խոշտանգումների արգելքին վերաբերող ուսումնական նյութերն ու տեղեկատվությունը ներառեն այն մարմինների կրթական ծրագրերում, որոնք կարող են որևէ կապ ունենալ մարդկանց ձերբակալության, կալանքի կամ բանտարկության, հարցաքննության հետ: Այդ նյութերը պետք է ներառվեն նաև վերոնշյալ մարմինների ծառայողական կանոններում:

Կոնվենցիայով ստեղծվել է Խոշտանգման դեմ կոմիտե, որն ընդունում է մասնակից պետությունների զեկույցները և գնահատում դրանք: Այն ընդունում է նաև հաղորդագրություններ անհատներից՝ ընդդեմ այն մասնակից պետությունների, որոնք պաշտոնապես հայտարարել են, որ ճանաչում են կոմիտեի այդ իրավասությունը: Հայաստանը նման հայտարարություն չի արել, ուստի անհատները նրա դեմ գանգատներ չեն կարող ներկայացնել Խոշտանգումների դեմ կոմիտեին: 2006 թվականին Հայաստանը վավարեցրել է կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը, որով ստեղծվել է Կանխարգելման ենթակոմիտե: Այն առանձնահատուկ գործառույթ ունի՝ կատարել պարբերական այցեր կալանավայրեր և մարդկանց ժամանակավոր պահելու այլ փակ տարածքներ (նման գործառույթ է իրականացնում նաև Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն, որը Եվրոպայի խորհրդի պայմանագրի հիման

վրա ստեղծված մարմին է): Ենթակոմիտեի անդամներն իրավունք ունեն հանդիպելու դատապարտյալների հետ և ճշտելու՝ արդյոք նրանք ենթարկվե՞լ են խոշտանգումների: Ենթակոմիտեն զեկույցներ է ներկայացնում Խոշտանգման դեմ կոմիտեին և հանձնարարություններ է տալիս մասնակից պետություններին: Ենթակոմիտեի հաղորդակցությունը մասնակից պետության կառավարության հետ սովորաբար չի հրապարակվում, քանի դեռ վերջինս համագործակցում է ենթակոմիտեի հետ: Ի դեպ, կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը պարտավորեցնում է մասնակից պետություններին ստեղծել խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմներ (դիտորդական խմբեր) և թույլ տալ նրանց պարբերաբար այցելել կալանավայրեր ու մարդկանց պահելու այլ փակ տարածքներ:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա»

(Convention on the Rights of Persons with Disabilities)

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան» թեև մյուս պայմանագրերի համեմատ բավականին ուշ է ընդունվել (2006 թվականին), սակայն կարճ ժամանակահատվածում այն վավերացրել է ՄԱԿ-ի անդամ պետությունների ճնշող մեծամասնությունը՝ 180 երկիր (ևս 9-ը՝ ստորագրել, բայց դեռ չեն վավերացրել): Հայաստանն այն վավերացրել է 2010 թվականին: Կոնվենցիայի առաջին հոդվածում նշվում է դրա նպատակը, այն է՝ աջակցել ու պաշտպանել հաշմանդամություն ունեցող անձանց, որպեսզի նրանք կարողանան լիարժեքորեն և հավասարապես օգտվել մարդու իրավունքներից ու հիմնարար ազատություններից: Ընդգծվում է նաև հարգանքը նրանց արժանապատվության նկատմամբ: Ինչպես «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան», այս պայմանագիրը ևս տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ապահովման համար բավականին մեղմ պահանջներ է ներկայացնում մասնակից պետություններին:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա

Հոդված 4. 2. Ինչ վերաբերում է տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներին, յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավոր է քայլեր ձեռնարկել իր առկա միջոցների առավելագույն չափով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև միջազգային համագործակցության շրջանակներում, նպատակ ունենալով ***աստիճանաբար*** *հասնել այդ իրավունքների լիակատար իրականացմանը՝ չխախտելով սույն Կոնվենցիայով սահմանված պարտավորությունները, որոնք ենթակա են անհապաղ կատարման՝ միջազգային իրավունքի համաձայն:*

(Աղբյուրը՝ www.arlis.am)

Այս կոնվենցիայի կարևոր պահանջներից մեկը հաշմանդամություն ունեցող անձանց համար կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ու մատչելիություն ապահովելն է՝ ձեռնարկելով արդյունավետ միջոցներ ինքնուրույն տեղաշարժվելու համար: Այն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում հաշմանդամություն ունեցող երեխաների և կանանց իրավունքներին՝ հաշվի առնելով, որ վերջիններս ենթարկվում են խտրականության բազմաթիվ ձևերի: Կոնվենցիան երաշխավորում է հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական, քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքները՝ բացառելով խտրականությունը նրանց նկատմամբ:

Կոնվենցիայով հիմնվել է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե, որը քննում է մասնակից պետություններից ստացված զեկույցները՝ կոնվենցիայով երաշխավորված իրավունքների պաշտպանության վերաբերյալ: Կոնվենցիայի կամընտիր արձանագրության՝ ուժի մեջ մտնելուց հետո այն նաև հաղորդագրություններ է ստանում անհատներից: Կամընտիր արձանագրությունը ստորագրել է 123, վավերացրել 95 պետություն: Հայաստանը 2007 թվականին ստորագրել, սակայն մինչ օրս չի վավերացրել կամընտիր արձանագրությունը, ուստի Հայաստանի դեմ անհատները գանգատներ չեն կարող ներկայացնել այս կոմիտեին:

1.6. Մարդու իրավունքների միջազգային շարժումները

Մարդու իրավունքների պաշտպանության համար մղվող պայքարն ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակում շարունակական գործընթաց է: Նախորդ դարերում ծավալված և առ այսօր շարունակվող մի շարք շարժումներ հսկայական ազդեցություն են ունեցել ինչպես անհատի, ժողովուրդների, կանանց, էթնիկ ու ռասայական և այլ խմբերի իրավունքների պաշտպանության, այնպես էլ այսօրվա իրավապաշտպան գաղափարախոսության զարգացման մեջ: Դրանցից նշանավոր են բանվորական, հակագաղութային, ընդդեմ ստրկության և ռասիզմի, կանանց իրավունքների և այլ շարժումները: Այս բոլոր շարժումների ժամանակ կիրառվել են պայքարի՝ ներկայումս իրավապաշտպանության մեջ հայտնի ձևերն ու մեթոդները՝ ապստամբություն, խաղաղ անհնազանդություն, բողոքի ցույցեր, հանրահավաքներ, գործադուլներ, նստացույցեր, բոյկոտներ, գրական և լրագրողական նյութերի տպագրություն, տեղեկատվության տարածում, ստորագրահավաքներ և այլն:

Բանվորական շարժումը

Բանվորական շարժումն աշխարհում տնտեսական ու սոցիալական իրավունքների համար մղվող առաջին պայքարն է եղել: Այն սկիզբ է առել 1830-40-ական թվականներին զարգացող և արդյունաբերական պետություններում, որտեղ բանվոր դասակարգի շահագործումը կապիտալիստների կողմից մշտական բնույթ էր կրում: Ընդ որում, շահագործվում էին ոչ միայն չափահաս տղամարդիկ և կանայք, այլև երեխաները՝ սկսած 5-6 տարեկանից: 19-րդ դարում Անգլիայի աշխատանքային տեսուչների կազմած արձանագրությունները բացահայտում են այն սահմռկեցուցիչ տեսարանները, որոնք իշխում էին այդ ժամանակվա գործարաններում: Արձանագրվել են այնպիսի փաստեր, ինչպիսիք են երիտասարդ կնոջ՝ 36 ժամ

անդադար աշխատանքը, 12 տարեկան տղաներին քնելու համար ընդամենը 3 ժամ հատկացնելը, աշխատավայրում մահվան դեպքերն ու առաջացած առողջական խնդիրները: 1863 թվականին անգլիական թերթերում լուրեր հրապարակվեցին 20 տարեկան բանվորուհի Մերի Անն Վալկլիի մահվան մասին: Նյութերից մի քանիսը վերնագրված էին «Մահ՝ պարզ գերաշխատանքից» (“Death from Simple Overwork”): Մերին իր հասակակից աղջիկների հետ աշխատելիս է եղել պալատական ձևարհեստանոցում: Աղջիկներն այստեղ միջինում 16.5 ժամ էին աշխատում, իսկ երբեմն՝ մինչև 30 ժամ: Մերին աշխատել էր 26.5 ժամ գերլցված սենյակում և քնել էր վատ օդափոխված ննջասենյակում, ինչի հետևանքով մահացել էր: Մերիի մահվան դեպքը որքան էլ ցնցող, բայց և սովորական երևույթ էր: «Morning Star»-ն այս և այլ դեպքերի առիթով 1863 թվականի հունսիսի 23-ի համարում գրել է. «Մեր սպիտակամորթ ստրուկները չափազանց շատ աշխատելուց գերեզմանի դուռն են հասնում և ոչնչանում ու մեռնում են առանց ձայն ու ծպտուն հանելու»:

Տարիներ շարունակ անգթորեն շահագործվելուց հետո բանվոր դասակարգը սկսել է պայքարել հանուն իր իրավունքների:

Ընդհանուր գործադուլ, Մեծ Բրիտանիա, 1926 թ.

19-20-րդ դարերում տարբեր պետությունների արդյունաբերական քաղաքներում բանվոր դասակարգը դիմել է գործադուլների և բողոքի ակցիաներ է կազմակերպել՝ երբեմն իբրև ըմբոստության նշան վնասելով գործարանների գույքը, ինչի համար ակտիվ դերակատարները հաճախ մահապատժի են դատապարտվել: Զանգվածային ըմբոստությունները հաճախ ճնշվել են պետության ու գործարանատերերի կողմից՝ դառնալով հազարավոր մարդկանց մահվան պատճառ: Այնուամենայնիվ, այդ շարունակական պայքարի շնորհիվ պետություններն աստիճանաբար սկսեցին օրենքներ ընդունել աշխատօրվա ու ընդմիջման տևողության, աշխատանքային պայմանների և անչափահասներին աշխատեցնելու սահմանափակումների վերաբերյալ:



1945 թվականին Աֆրիկայում ընդամենը 4 անկախ պետություն կար, այսօր՝ 54:

1919 թվականին հիմնադրվեց Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ), որը ՄԱԿ-ի ստեղծումից հետո դարձել է դրա առաջին մասնագիտացված գործակալությունը: ԱՄԿ-ն միջազ-

գային աշխատանքային ստանդարտներ է սահմանում, որոնց պարտավոր են հետևել կազմակերպությանն անդամակցող բոլոր պետությունները (2019 թվականի դրությամբ՝ 187 պետություն): Այնուամենայնիվ, աշխատանքային իրավունքները շարունակում են խախտվել երկրագնդի գրեթե բոլոր անկյուններում, և աշխատողների իրավունքների համար պայքարը շարունակվում է տարբեր արհեստակցական միությունների, հասարակական կազմակերպությունների և ակտիվիստների կողմից:

Հակագաղութային շարժումը

15-րդ դարից սկսած՝ ամերիկյան մայրցամաքները և Աֆրիկան նվաճվել ու գաղութացվել են եվրոպական պետությունների կողմից՝ Պորտուգալիա, Իսպանիա, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Նիդերլանդներ, Գերմանիա, Բելգիա, Իտալիա: Գրեթե ամենուր գաղութարար պետություններն իրենց իշխանությունը արյամբ են հաստատել՝ հաճախ բնաջնջելով տեղի բնակչությանը կամ ստրկացնելով նրան: Ճնշումներին ու կոտորածներին հետևել է հակագաղութային շարժումը, որի շնորհիվ այսօր աշխարհում որևէ գաղութ պաշտոնապես գոյություն չունի, սակայն նախկին գաղութները շարունակում են տնտեսապես, քաղաքապես և մշակութապես կախված մնալ գաղութարար պետություններից: Այս երևույթն անվանում են **նեոգաղութացում**[5]: Հանուն ինքնորոշման և ինքնիշխանության համար մղվող պատերազմները հաճախ տևել են տասնյակ տարիներ՝ պատճառ դառնալով բազմաթիվ մահերի ու զրկանքների: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո ազատագրական շարժումները մեծ թափ առան Եգիպտոսում, Իրաքում, Հնդկաստանում, Վիետնամում, Իռլանդիայում և այլուր:

---

[5] «Նեոգաղութացում» (Neo-Colonialism) եզրույթն առաջին անգամ գործածել է Գանայի նախագահ, հեղափոխական Քվամե Նկրումահը (Kwame Nkrumah) «Neo-Colonialism, the Last Stage of Imperialism» գրքում:

Գաղութացման դեմ պայքարում մեծ ներդրում են ունեցել ինչպես բազմաթիվ ազատամարտիկներ, քաղաքական գործիչներ, այնպես էլ լրագրողներ, գրողներ և այլք: Չնայած տասնամյակներ շարունակ մղած արյունալի պայքարին՝ գաղութացումն ավարտվեց միայն ՄԱԿ-ի ստեղծումից հետո: «Գաղութացված երկրներին ու մարդկանց անկախություն շնորհելու մասին» հռչակագրի ընդունումից հետո գաղութարար պետություններին ոչինչ չէր մնում անելու, քան անկախություն շնորհել ստրկացված, հարստահարված ու թալանված բնակչությանը: Բայց և այնպես, ապագաղութացման գործընթացը շարունակվեց մինչև 1980-ականները:

Թեև հակագաղութային պայքարը հաճախ դիտարկվում է որպես ազգային-ազատագրական շարժում, սակայն իրականում այն ժողովուրդների ինքնորոշման իրավունքի համար մղվող պայքար էր: Այդ պայքարների շնորհիվ միջազգայնորեն ընդունվեցին ինքնորոշվելու և ինքնակառավարվելու, բնական ռեսուրսներն ինքնուրույն տիրապետելու, էթնիկ լեզուն ու մշակույթը պահպանելու և այլ իրավունքներ:

Ընդդեմ ստրկության և ռասիզմի շարժումները

Ռասայական խտրականությունն ու դրա դեմ պայքարը նույնքան հին են, որքան գաղութացումն ու ստրկացումը: Ամերիկաների և Աֆրիկայի հայտնաբերումից հետո սկսվել են բնիկ ժողովուրդների կոտորածն ու ստրկացումը եվրոպացիների կողմից: Աֆրիկա մայրցամաքից հարյուր հազարավոր սևամորթներ էին ստրկացվում և տեղափոխվում Հյուսիսային Ամերիկա (ներկայիս ԱՄՆ): Այստեղ ստրուկներին վաճառում էին սպիտակամորթների, որոնք իրավունք ունեին շահագործելու նրանց՝ տնօրինելով նրանց կյանքը: 18-րդ դարում Հյուսիսային Ամերիկայի խոշոր քաղաքների պատերին կարելի էր հանդիպել սևամորթ ստրուկների աճուրդի վերաբերյալ հայտարարությունների: Ստրուկներին սովորաբար բաժանում էին իրենց ընտանիքի անդամներից՝ հանձնելով նրանց տարբեր տերերի, որոնք էլ


Charlestown, July 24th, 1769.

TO BE SOLD,

On THURSDAY the third Day of AUGUST next,

A CARGO OF NINETY-FOUR PRIME, HEALTHY

NEGROES,

CONSISTING OF

Thirty-nine MEN, Fifteen BOYS, Twenty-four WOMEN, and Sixteen GIRLS.

JUST ARRIVED,

In the Brigantine DEMBIA, *Francis Bare*, Master, from SIERRA-LEON, by

DAVID & JOHN DEAS.

Ստրուկների աճուրդի հայտարարություն, Հարավային Կարոլինա, 1769 թ.

իրենց հերթին իրավունք ունեին վերավաճառելու նրանց իբրև գույք: Ստրուկներին ապստամբելու հնարավորությունից զրկելու համար գործում էին ստրուկներին հսկող պարեկներ, որոնք զգալիորեն բարդացնում էին հանուն ազատության պայքարը: Ստրկության վերացման հարցում մեծագույն դերակատարում է ունեցել Աբոլիցիոնիզմը (*abolitionism*, անգլ. *abolish*՝ «վերացնել»)՝ ստրկության վերացմանն ուղղված շարժումը: Այն ծավալվել է թե՛ եվրոպական գաղութարար երկրներում, թե՛ Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Շարժմանը մասնակցել են ինչպես սևամորթներ, այնպես էլ բազմաթիվ սպիտակամորթ բանվորներ, մտավորականներ և քաղաքական գործիչներ: Պետությունները դժվարությամբ են հասել ստրկության վերացմանը, օրինակ՝ ԱՄՆ-ում ստրկության վերացման դեմ հանդես եկող նահանգներն անգամ քաղաքացիական պատերազմ սկսեցին կենտրոնական իշխանության դեմ:

Սակայն, ինչպես ցույց տվեց պատմությունը, ստրկության վերացումն ավելի հեշտ տրվեց մարդկությանը, քան ռասայական խտրականության արգելումը: Ստրկության վերացմամբ ռասայական խտրականությունը չվերացավ, որն ի սկզբանե դրսևորվել էր բնիկ ժողովուրդների և Աֆրիկայից տեղափոխված սևամորթների նկատմամբ: ԱՄՆ-ում խտրականությունն ու սեգրեգացիան օրինական են եղել մինչև 1960-ականները: Ռասայական խտրականության դեմ պայքարում էական դերակատարում է ունեցել քաղաքացիական իրավունքների ակտիվիստ Մարթին Լյութեր Քինգը, ով հետագայում

դարձավ հանուն հավասարության պայքարը խորհրդանշողներից մեկը: Մարթին Լյութեր Քինգը շրջում էր քաղաքից քաղաք՝ կոչ անելով սևամորթներին պայքարելու խտրականության դեմ: Նրա ելույթները ոգևորում էին հազարավոր մարդկանց՝ նրանց դուրս բերելով փողոց՝ խաղաղ ցույցերի: Լյութեր Քինգի գլխավորած քաղաքային տրանսպորտի բոյկոտը մտել է պատմության մեջ՝ որպես խաղաղ դիմադրության լավագույն օրինակներից մեկը: 1955 թվականին Ալաբամա նահանգի մայրաքաղաք Մոնթգոմերում մի սևամորթ կնոջ դիմադրությունը ճակատագրական նշանակություն է ունեցել ռասայական սեգրեգացիան վերացնելու հարցում: Այդ ժամանակ ԱՄՆ-ում տրանսպորտը, ինչպես հանրային այլ ծառայություններ, տարբերակված էր «սպիտակների» և «գունավորների»՝ «ոչ սպիտակների»: Ավտոբուսների առաջին շարքերը զբաղեցնելու իրավունք ունեին միայն սպիտակամորթները, հետևինները՝ «գունավորները»: Սակայն եթե սպիտակամորթների համար նախատեսված նստատեղերը չէին բավականացնում նրանց, ապա ոչ սպիտակամորթը պետք է իր տեղը զիջեր «գերագույն» ռասային պատկանող անձին: Ռոզա Փարքսը աշխատանքից հետո զբաղեցրել էր սևամորթներին հատկացված նստատեղը: Շուտով ավտոբուս են բարձրանում սպիտակամորթներ, որոնց համար նախատեսված տեղերն արդեն իսկ զբաղեցված էին այլ սպիտակամորթների կողմից: Ավտոբուսի վարորդը պահանջում է սևամորթներին զիջել իրենց տեղը նրանց: Բոլորը հնազանդվում են վարորդի պահանջին՝ բացի Ռոզա Փարքսից: Վերջինիս ձերբակալում են և մեղավոր ճանաչում հասարակական կարգը խախտելու մեջ՝ սահմանելով դրամական տուգանք: Սա առիթ է դառնում, որպեսզի քաղաքացիական իրավունքի ակտիվիստները հայտարարեն համատարած բոյկոտ՝ հրաժարվելով ըստ գույների բաժանված հանրային տրանսպորտից օգտվելուց: Այս շարժումը ղեկավարում է Մարթին Լյութեր Քինգը՝ կազմակերպելով նաև խաղաղ երթեր և այլ ակցիաներ: Բոյկոտը տևում է 382 օր, որի ընթացքում սևամորթները բազմաթիվ ճնշումների և բռնությունների են ենթարկվում: Մարթին Լյութեր Քինգի դեմ ևս լինում են հարձակումներ:

Ռոզա Փարքսից մատնահետք են վերցնում ուսիկանական բաժանմունքում:

Միաժամանակ աֆրոամերիկյան համայնքը դատական գործընթաց է սկսում՝ ռասայական սեգրեգացիան հակասահմանադրական ճանաչելու նպատակով: Երկարատև պայքարից հետո Մոնթգոմերիի քաղաքային իշխանությունները ստիպված են լինում վերացնել ռասայական սեգրեգացիան հանրային տրանսպորտում:

Մարթին Լյութեր Քինգն ունեցել է ավելի քան 200 ելույթներ, գրել է 5 գիրք և բազմաթիվ հոդվածներ՝ կոչ անելով սևամորթներին և այլ ռասաների պայքարելու խտրականության դեմ: Նա 1964 թվականին արժանացել է Նոբելյան խաղաղության մրցանակի: Հայտնի ակտիվիստը, երբ տեղեկացել է մրցանակ ստանալու մասին, հայտարարել է, որ դրամական պարգևը (մոտ 50.000 ԱՄՆ դոլար) ծառայեցնելու է քաղաքացիական իրավունքների պաշտպանության հետագա պայքարին: Իր կյանքի ընթացքում Մարթին Լյութեր Քինգը բազմիցս ձերբակալվել ու բռնությունների է ենթարկվել, իսկ 1968 թվականին սպանվել է: Նա ինչպես կենդանության օրոք, այնպես էլ մահից հետո

համարվել է ոչ միայն հանուն սեամորթների, այլև առհասարակ քաղաքացիական իրավունքների համար պայքարող ամենահայտնի դեմքերից մեկը: Նրա նման անհատների շնորհիվ է, որ ԱՄՆ-ի և այլ պետությունների օրենսդրություններում վերացվել է ռասայական խտրականությունը. այն արգելված է նաև միջազգային օրենսդրությամբ: Ռասայական խտրականությունը, այնուամենայնիվ, մարտահրավեր է, որը բազմաթիվ հասարակություններ այսօր էլ դեռևս չեն հաղթահարել:

Կանանց իրավունքների շարժումը

Կանանց նկատմամբ խտրականությունն առավել տարածված է եղել, քան ռասայական և էթնիկ անհավասարությունը: Անգամ առաջադեմ հասարակություններում, որոնցում ընդունվել են մարդու իրավունքների հռչակագրեր, կանանց նկատմամբ եղել է խտրականություն. այդ հռչակագրերի շահառուները հիմնականում տղամարդիկ էին:

Կանանց իրավունքների համար մղվող պայքարն ակտիվացել է 19-րդ դարի կեսից, երբ ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում կին ակտիվիստները սկսել են պահանջել հավասար իրավունքներ աշխատանքում, սեփականությունը տնօրինելիս, երեխայի խնամակալության հարցում, քաղաքական ընտրություններում, կրթական և այլ ոլորտներում:

Մի շարք երկրներում ծագած սուֆրաժիստական շարժման շնորհիվ կանայք աստիճանաբար ձեռք բերեցին ընտրական իրավունք: Նոր Զելանդիան առաջին պետությունն էր, որտեղ կանայք կարող էին մասնակցել համապետական ընտրություններին՝ սկսած 1893 թվականից: Ընտրական իրավունքի համար պայքարը, սակայն, հեշտ չէր ընթանում: Կին ակտիվիստները թիրախավորվում էին և ենթարկվում բռնությունների, տարատեսակ ճնշումների ու ծաղրի: Նրանցից շատերը բազմիցս ձերբակալվել են, մերժվել իրենց ընտա-

նիքների ու հարազատների կողմից՝ կրելով բազմաթիվ զրկանքներ՝ երբեմն զոհելով իրենց կյանքը:

Կանանց՝ ընտրելու իրավունքի համար մղվող պայքարը

Ձեռք բերելով ընտրական իրավունք՝ կանանց շարժումը կենտրոնացավ անձնական և ներընտանեկան հարաբերություններում գենդերային անհավասարությունը վերացնելու, կանանց գենդերային հիմքով բռնությունից ազատելու, սեռական ու վերարտադրողական առողջության և այլ իրավունքների վրա: Այդ շարժման շնորհիվ աշխարհի բազմաթիվ երկրներում թույլատրվեց հղիության արհեստական ընդհատումը, օրինական վաճառքի հանվեցին հակաբեղմնավորիչ հաբերն ու այլ միջոցներ: Կանանց և տղամարդկանց իրավահավասարության համար մղվող պայքարը, որը նաև անվանում են ֆեմինիզմ, աստիճանաբար բազմաթիվ ուղղություններ ու ճյուղավորումներ է ստացել և մինչ օրս էլ շարունակում է ստանալ: Դարեր շարունակ փաստացի գործող անհավասարությունը վերացնելու նպատակով ներկայումս կանանց միջազգային և ազգային մակարդակում խրախուսում են առավել ակտիվ դերակատարում ստանձնել հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում: Տնտեսական կյանքին կանանց մասնակցությունը խրախուսելու

նպատակով տրամադրվում են դրամաշնորհներ, իսկ քաղաքական մասնակցությունը խթանելու համար բազմաթիվ պետություններում կիրառվում է քվոտաների համակարգը, որը զսպող միջոց է խորհրդարաններում և/կամ կառավարությունում տղամարդկանց ճնշող գերակայությունը մեղմելու համար:

Կանանց իրավունքների համար մղվող պայքարն ամենաբարդն է իսլամիստական պետություններում, որտեղ կինը ստորադասված է տղամարդուն Ղուրանի օրենքներով: Բազմաթիվ երկրներում, եթե ոչ օրենսդրորեն, ապա փաստացի կանայք շարունակում են համարվել տղամարդկանց սեփականությունը. նրանք ստորադասի, ենթարկվողի կարգավիճակում են: Ոչ միայն իսլամիստական հասարակություններում, այլև ամբողջ աշխարհում փաստացի անհավասարության և գենդերային խտրականության բոլոր տեսակների վերացման համար դեռ երկար տարիներ կպահանջվեն:

ԳԼՈՒԽ 2. Մարդու իրավունքների պաշտպանության տարածաշրջանային և ազգային գործիքները

2.1. Եվրոպայի խորհուրդը

Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մեխանիզմներից բացի՝ գործում են նաև տարածաշրջանային կազմակերպություններ, որոնց իրավասություններն ու լիազորությունները տարածվում են այն աշխարհամասերում, որոնց սահմաններում դրանք ստեղծվել են (Եվրոպայի խորհուրդը հիմնադրվել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով, Աֆրիկյան միությունը՝ Մարդու և ժողովուրդների իրավունքների Աֆրիկյան խարտիայով, Ամերիկյան պետությունների կազմակերպությունը՝ Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայով): Այս գլխի շրջանակներում մենք կուսումնասիրենք մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական փորձը Եվրոպայի խորհրդի[6] օրինակով: Մարդու իրավունքների եվրոպական ամենամեծ կազմակերպությունը հիմնադրվել է 1949 թվականին Արևմտյան Եվրոպայի տասը երկրների կողմից՝ Մեծ Բրիտանիա, Իռլանդիա, Ֆրանսիա, Բելգիա, Նիդերլանդներ, Լյուքսեմբուրգ, Դանիա, Շվեդիա, Նորվեգիա, Իտալիա: Հետագայում կազմակերպությունն ընդլայնվել է: Ներկայումս այն ունի 47 անդամ պետություն: Հայաստանը Եվրոպայի խորհրդի անդամ է դարձել 2001 թվականին: Կազմակերպության կանոնադրության նախաբանում նշված է, որ հիմնադիր երկրները վերահաստատում են «իրենց հավատարմությունը հոգեկան և բարոյական այն արժեքներին, որոնք իրենց ժողովուրդների ընդհանուր ժա-

---

[6] Եվրոպայի խորհուրդը (ԵԽ) չպետք է շփոթել Եվրոպական միության (ԵՄ) կամ նրա հիմնական մարմիններից մեկի՝ Եվրոպական խորհրդի հետ: ԵԽ-ն ունի 47, իսկ ԵՄ-ն՝ 28 անդամ պետություն: Հայաստանն անդամակցում է Եվրոպայի խորհրդին և չի անդամակցում Եվրոպական միությանը: ԵԽ և ԵՄ մարմինները ևս պետք է տարբերել միմյանցից. ԵԽ օրենսդիր մարմինը Խորհրդարանական վեհաժողովն է, իսկ ԵՄ-ինը՝ Եվրոպական պառլամենտը:

ռանգությունն են և անհատի ազատության, քաղաքական ազատության և իրավունքի գերակայության աղբյուրը. սկզբունքներ, որոնց վրա հիմնվում է իսկական ժողովրդավարությունը»[7]: Կազմակերպության ստեղծման նպատակն էր «հասնել ավելի սերտ միասնության իր անդամների միջև՝ ընդհանուր ժառանգություն կազմող գաղափարների և սկզբունքների պաշտպանությանն ու զարգացմանը և նրանց սոցիալական ու տնտեսական առաջընթացին նպաստելու համար»[8]: Իսկ այս նպատակների իրագործման միջոց, ի թիվս այլ միջոցների, պետք է լիներ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը:

Եվրոպայի խորհուրդն ունի աշխատանքային 3 հիմնական մարմիններ՝ Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը և Մարդու իրավունքների եվրոպական դատարանը:

1) **Նախարարների կոմիտեն** Եվրոպայի խորհրդի գործադիր մարմինն է, որի կազմում են բոլոր 47 անդամ երկրների արտգործնախարարները կամ նրանց տեղակալները: Քվեարկությունների ժամանակ բոլոր անդամ պետությունների ներկայացուցիչներն ունեն հավասար՝ մեկ ձայնի իրավունք: Նախարարների կոմիտեն կառավարական մարմին է, որը վերահսկում է անդամ պետությունների ստանձնած պարտավորությունների կատարումը, քննարկում է Եվրոպայում առկա խնդիրների հնարավոր լուծումները՝ պաշտպանելով ԵԽ-ի հռչակած հիմնական արժեքները:

2) **Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը** (ԵԽԽՎ) Եվրոպայի խորհրդի օրենսդիր մարմինն է, որը կազմված է 47 անդամ պետությունների խորհրդարանների կողմից ընտրված ներկայացուցիչներից: ԵԽԽՎ-ում ներկայացված ԵԽ անդամ պետության պատգամավորների թիվը կախված է տվյալ պետության

---

[7] Եվրոպայի Խորհրդի կանոնադրության նախաբան, http://www.irtek.am/views/act.aspx?aid=47272 (մուտք՝ 20.02.2020 թ.):
[8] Նույն տեղում:

բնակչության թվից (2 ներկայացուցիչ՝ բնակչության նվազագույն թվաքանակ ունեցող անդամ պետությունից, 18 ներկայացուցիչ՝ բնակչության առավելագույն թվաքանակ ունեցող անդամ պետությունից): Վեհաժողովում ազգային պատվիրակությունները կազմված են այնպես, որ ապահովեն իրենց խորհրդարաններում քաղաքական կուսակցությունների կամ խմբակցությունների արդար ներկայացվածությունը: Հայաստանը ԵԽԽՎ-ում ունի 8 ներկայացուցիչ, որոնցից 5-ը՝ «Իմ քայլը», 2-ը՝ «Բարգավաճ Հայաստան», 1-ը՝ «Լուսավոր Հայաստան» խմբակցություններից:

3) **Մարդու իրավունքների եվրոպական դատարանը** (ՄԻԵԴ) Եվրոպայի խորհրդի դատական մարմինն է: Այն աշխարհում մարդու իրավունքների պաշտպանության առաջին և ամենահեղինակավոր դատարանն է, որին անհատները գանգատներ են ներկայացնում իրենց իրավունքները խախտած պետությունների դեմ: Դատարանը ստեղծվել է «**Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի**» հիման վրա (առավել հայտնի է որպես **Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա**): Կոնվենցիան ստեղծվել է 1950 թվականին, երբ մարդու իրավունքները միջազգայնորեն պաշտպանելու գաղափարը նոր էր զարգանում: Կոնվենցիայում մարդու իրավունքների վերաբերյալ ի սկզբանե տեղ է գտել ընդամենը 18 հոդված, սակայն իրավունքների պաշտպանությունը հետագայում ընդլայնվել է ընդունված լրացուցիչ արձանագրությունների շնորհիվ: Կոնվենցիայի հիմնական տեքստով երաշխավորվում են կյանքի, խոշտանգումներից զերծ լինելու, ազատության և անձնական անձեռնմխելիության, արդար դատաքննության, ամուսնության, անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքները, ստրկության և հարկադիր աշխատանքի արգելքը, արտահայտվելու, մտքի, խղճի, կրոնի, հավաքների ազատությունը և քաղաքական ու քաղաքացիական այլ իրավունքներ, իսկ լրացուցիչ արձանագրություններով՝ նաև սեփականության, կրթության, տեղաշարժման ազատության, ազատ ընտրությունների և այլ իրավունքներ: ԵԽ անդամ բոլոր պետությունների համար Մար-

դու իրավունքների եվրոպական կոնվենցիային միանալը պարտադիր պայման է: Կոնվենցիայի երկրորդ գլխում շարադրված են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ստեղծման և դրա աշխատանքների կազմակերպման պայմանները: ՄԻԵԴ-ում պատասխանող կողմը միշտ անդամ պետություններից որևէ մեկի կառավարությունն է, իսկ գանգատատուն կա՛մ անհատ է, կա՛մ մեկ այլ պետություն: Եվրոպայի խորհրդի պատմության մեջ հազվադեպ են գրանցվել դեպքեր, երբ պետություններն են գանգատ ներկայացրել մեկ այլ պետության դեմ, փոխարենը անհատների կողմից հարյուր հազարավոր գանգատներ են ստացվել: Իր հիմնադրումից առ այսօր ՄԻԵԴ-ը կայացրել է շուրջ 22.000 վճիռ, որոնց 40 %-ը եղել է ընդդեմ երեք անդամ պետությունների՝ Թուրքիայի, ՌԴ-ի և Իտալիայի: 2001 թվականից Հայաստանի դեմ ևս կարելի է գանգատներ ուղարկել ՄԻԵԴ: Մինչ օրս ընդդեմ Հայաստանի Հանրապետության մոտ 100 վճիռ է կայացվել ՄԻԵԴ-ի կողմից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գործը կարող է քննության առնել, եթե.

1) Գանգատն անանուն չէ, ներկայացված է ֆիզիկական անձի կողմից կամ նրա անունից համապատասխան ներկայացուցչի միջոցով.

2) Դատարանը նախկինում չի քննել այդ հարցը (կամ քննել է, սակայն գանգատը բովանդակում է գործին առնչվող նոր տեղեկություններ).

3) Խնդիրը չի քննվել միջազգային մեկ այլ դատարանի կամ այլ մարմնի կողմից, օրինակ՝ ՄԱԿ-ի կոնվենցիաների հիման վրա ստեղծված կոմիտեների.

4) Գանգատաբեր կողմը սպառել է իրավունքների պաշտպանության ներպետական բոլոր ատյանները.

5) Գանգատն անհամատեղելի չէ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի կամ դրա լրացուցիչ արձանագրությունների դրույթների հետ.

6) Գանգատը հիմնավորված է և գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահում չէ:

Ներպետական ատյանները սպառելու պայման առաջադրելով՝ Եվրոպայի խորհուրդն ազգային դատարաններին է տալիս մարդու իրավունքների խախտումը վերացնելու առաջնահերթությունը: Սակայն բացառիկ դեպքերում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կարող է գանգատներ ընդունել առանց այդ պայմանի առկայության: Եթե դատարանը գանգատը քննելիս գտնում է, որ խախտվել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի կամ լրացուցիչ արձանագրությունների հոդվածներից մեկը, ապա արձանագրում է այդ խախտումը և սահմանում դրամական փոխհատուցում, որը ներառում է անհատի կրած վնասը (այդ թվում՝ և բարոյական), ինչպես նաև գանգատի ներկայացմանն առնչվող ծախսերը: Փոխհատուցում սահմանելիս դատարանը հաշվի է առնում տվյալ պետության տնտեսական վիճակը: Անկախ նրանից, թե գանգատ ներկայացրած անձը որքան փոխհատուցում է խնդրում դատարանին սահմանել, վերջինս ինքն է որոշում փոխհատուցման չափը: Դատարանի կայացրած վճիռները պարտադիր են բոլոր անդամ պետությունների համար: Բացառիկ դեպքերում պետությունը կարող է Պալատի վճռից հետո պահանջել գործը փոխանցել Մեծ պալատին, որն ընդունում է գործը միայն հիմնավորվածության դեպքում: Վճիռների իրագործումը ազգային մակարդակում վերահսկում է ԵԽ բարձրագույն քաղաքական մարմինը՝ Նախարարների խորհուրդը:

Բացի հիմնական երեք մարմիններից՝ Եվրոպայի խորհրդում գործում է նաև **Մարդու իրավունքների հանձակատարի** գրասենյակը, որն առանձնահատուկ դեր ունի իրավունքների պաշտպանության և առաջխաղացման գործում: Այն հիմնադրվել է 1999 թվականին՝ ԵԽ Նախարարների կոմիտեի ընդունած բանաձևի համաձայն: Հանձնակատարն անկախ մարմին է, որի առաքելությունն է ապահովել մարդու իրավունքների առաջխաղացումն անդամ պետություններում՝ խորհրդատվության և տեղեկատվության տրամադրման, քաղաքացիական կրթության և օմբուդսմենի գրասենյակների հետ սերտ հա-

մագործակցության միջոցով: Հանձնակատարն այցելում է անդամ պետություններ, հանդիպում է շահագրգիռ կողմերի հետ, հավաքում է տեղեկատվություն տվյալ երկրում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ, ապա հրապարակում է զեկույց իր այցի վերաբերյալ:

Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչը Հայաստան է այցելել 2018 թվականին: Այցի վերաբերյալ զեկույցը հանձնակատարը հրապարակել է 2019 թվականին: Այն կենտրոնանում է կանանց իրավունքների, գենդերային հավասարության ու ընտանեկան բռնության, անապահով ու խոցելի խմբերի մարդկանց իրավունքների և մարդու իրավունքների նախկինում գրանցված խախտումների վերաբերյալ հաշվետվողականության հարցերի վրա: Այս տեսակ զեկույցներն ազդակ են իշխանությունների համար՝ մարդու իրավունքների պաշտպանության ջանքերը ճիշտ ուղղությամբ կենտրոնացնելու համար:

Քննարկում լսարանում

Ո՞ր դեպքերում է թույլատրելի օրինականորեն խախտել մարդու կյանքի իրավունքը:

Մարդու իրավունքների մեծ մասը բացարձակ չէ, ինչը նշանակում է, որ որոշակի դեպքերում դրանց խախտումը կարող է համարվել օրինական: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան նախատեսել է իրավունքից օրինականորեն զրկելու պայմաններ. դա կարող է լինել բացառապես այն դեպքերում, երբ նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության, բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Փաստորեն, մարդուն կյանքի իրավունքից կարելի է զրկել օրինականորեն: Սակայն դրա համար ևս գոյություն ունեն հստակ պայմաններ, որոնց պետք է խստիվ հետևել: ՄԻԵԿ-ի 2.2 հոդվածը սահմանում է, որ կյանքից զրկելը սույն հոդվածի խախտում չէ, եթե այն հետևանք է ուժի գործադրման, ինչը բացարձակապես անհրաժեշտ է.

ա. ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար,

բ. օրինական ձերբակալում իրականացնելու կամ օրինական հիմքերով կալանավորված անձի փախուստը կանխելու համար,

գ. խռովությունը կամ ապստամբությունը ճնշելու նպատակով օրենքին համապատասխան գործողություն ձեռնարկելու համար:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ ցանկացած անձի իրավունքից զրկելը պետք է.

- սահմանված լինի օրենքով,
- հետապնդի լեգիտիմ նպատակ,
- լինի անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում,
- լինի համաչափ:

Հայաստանյան օրինակ. ոստիկանությունն ունի՞ արդյոք կյանքից զրկելու իրավունք

Երևանում երիտասարդ կնոջը պատանդ վերցրած տղամարդը

2017 թվականի օգոստոսին Երևանի Էրեբունի վարչական շրջանի բիլիարդանոցներից մեկում երիտասարդ տղամարդը, դանակը ձեռքին, պատանդ էր վերցրել մի աղջկա՝ ներկայացնելով հստակ պահանջներ: Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ ոստիկանությունը փորձել է տղամարդու հետ բանակցությունների միջոցով հարթել իրավիճակը, սակայն, համոզվելով, որ բանակցություններն արդյունք չեն տալիս, դիմել է դիպուկահարի միջոցով նրան վնասազերծելու գործողության:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան երաշխավորում է յուրաքանչյուրի կյանքի իրավունքը: Սա պետության համար ստեղծում է նեգատիվ և պոզիտիվ պարտավորություններ: Նեգատիվի դեպքում պետությունը պարզապես պետք է զերծ մնա որևէ մեկի կյանքն ապօրինաբար խլելուց, իսկ պոզիտիվի դեպքում պետությունը պարտավոր է ապահովել իր իրավասության տակ գտնվող սուբյեկտների կյանքի իրավունքը: Էրեբունիում տեղի ունեցած միջադեպի ընթացքում, փաստորեն, **պետության այս երկու պարտավորությունները բախվել են**: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է, որ պետությունները կարող են կիրառել բացառապես անհրաժեշտ չափով ուժ, որպեսզի պաշտպանեն երրորդ անձի կյանքը: Դատարանը նաև չափանիշներ է սահմանել, համաձայն որոնց.

- Ուժի կիրառումը պետք է լինի բացառապես անհրաժեշտ.
- Դրա անհրաժեշտությունը հետագայում պետք է դառնա պատշաճ և արդյունավետ քննության առարկա.
- Քննությունը պետք է լինի անկողմնակալ և անկախ:

ՀՀ իրավապահ համակարգը իրականացրե՞լ է արդյոք արդյունավետ քննություն՝ պարզելու, թե կիրառված ուժն անհրաժեշտ ու համաչա՞փ է, և այդ քննությունն արդյոք անկախ ու անկողմնակա՞լ է: Այս հարցերի պատասխանը կարող է տալ նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, եթե այդ տղայի սպանության գործով երբևէ գանգատ ուղարկվի ՄԻԵԴ:

Ի դեպ, Վասիլևսկան և Կալուցկան ընդդեմ Լեհաստանի[9] գործով ՄԻԵԴ-ը քննել է կյանքից զրկելու օրինականության ու համաչափության հարցը: Ոստիկանների՝ փախուստի դիմող զինված խմբի վրա արձակած կրակոցներից մահացել էր խմբի անդամ Պրժեմիսլավ Կալուցկին: Եվրոպական դատարանը վճռել է, որ պետությունը խախտել է վերջինիս կյանքի իրավունքը, քանի որ արձակված կրակոցը համաչափ չի եղել տվյալ իրավիճակում: Համաչափության միանշանակ սահմանում չկա: Ցանկացած գործով դատարանը քննում է գործի հանգամանքները, որից հետո միայն եզրակացնում՝ կիրառված ուժը համաչա՞փ էր, թե՞ ոչ:

[9] WASILEWSKA AND KAŁUCKA v. POLAND, (Applications no. 28975/04 and 33406/04, https://hudoc.echr.coe.int/eng#{"fulltext":["WASILEWSKA%20AND%20KAŁUCKA"],"itemid":["001-97410"]} (մուտք՝ 02.20.2020):

2.2. Գենդերային (ան)հավասարությունն ու ընտանեկան բռնությունը

Ընտանեկան բռնությունը ֆիզիկական, սեռական, հոգեբանական և տնտեսական բռնության մի տեսակ է, որը կարող է կիրառվել ընտանիքի ցանկացած անդամի կողմից մյուսի նկատմամբ: Բռնության հիմնական զոհերը կանայք և երեխաներն են: Կանանց նկատմամբ բռնությունը հաճախ անվանում են նաև գենդերային, քանի որ բռնության հիմքը գենդերային խտրականությունն է կանանց նկատմամբ: Այն նաև գենդերային խտրականության դրսևորման ամենաբիրտ ձևն է: Կանանց և տղամարդկանց միջև առկա փաստացի անհավասարությունը հաճախ տղամարդկանց վստահություն է ներշնչում, թե իրենց կիրառած բռնությունը լեգիտիմ է, օրինաչափ է, ավելին՝ նրանք իրենց արարքները հաճախ չեն էլ գիտակցում որպես բռնարարք, որը քրեորեն պատժելի է: Կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունը մարդու իրավունքների ամենատարածված խախտումներից է: Միևնույն ժամանակ այն գենդերային հավասարության հաստատման մեծագույն խոչընդոտներից է: Ընտանեկան բռնություն առկա է ցանկացած մշակույթում և հասարակությունում. այն ոչ թե լոկալ, այլ գլոբալ երևույթ է: Ըստ ՄԱԿ-ի տվյալների՝ աշխարհում, միջին հաշվով, ամեն երրորդ կին ենթարկվում է ընտանեկան բռնության որևէ տեսակի:

Հայաստանում ընտանեկան բռնության տարածվածության վերաբերյալ որոշ հետազոտություններ կան, որոնց արդյունքները տարբերվում են միմյանցից: Ամեն դեպքում որևէ հետազոտություն չի կարող լիարժեքորեն արտացոլել ընտանեկան բռնության տարածվածության իրական պատկերը, քանի որ բազմաթիվ կանայք պարզապես չեն խոստովանում (հաճախ չեն էլ գիտակցում), որ ենթարկվել են ընտանեկան բռնության: Այնուամենայնիվ, ամենաթարմ հարցման տվյալներով, Հայաստանում կանանց 45.9 %-ը խոստովանել է, որ ենթարկվում է հոգեբանական բռնության զուգընկերոջ կողմից: Հարցման մասնակիցների 21.3 %-ը պատասխանել է, որ են-

թարկվում է տնտեսական բռնության, իսկ 12.5 %-ը՝ ֆիզիկական բռնության[10]:

Ընտանեկան բռնությունը վաղուց դադարել է անձնական կամ ներընտանեկան խնդիր լինելուց. այն պետության կարգավորման առարկաներից է: Սակայն միջազգային իրավունքի համատեքստում այն համամետաբար նոր երևույթ է: Միջազգային հանրությունը խնդրին պատշաճ ուշադրություն սկսել է դարձնել 20-րդ դարի վերջերին: 1979 թվականին, երբ ընդունվեց «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին« ՄԱԿ-ի կոնվենցիան, ընտանեկան բռնությունը դեռևս բավարար ուշադրության չէր արժանացել: Սակայն ընտանեկան բռնության կանխարգելման միջազգային ստանդարտների մշակման հարցում էական դեր ունեցավ կոնվենցիայի մշտադիտարկման մարմինը՝ ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն (CEDAW Committee): Այն իրականացնում է երեք հիմնական գործառույթներ.

1) Ընդունում և քննում է մասնակից պետությունների պարբերական զեկույցները՝ կոնվենցիայի պահանջների իրագործման վերաբերյալ.
2) Ընդհանուր հանձնարարականներ է տալիս.
3) Սկսած 2000 թվականից՝ ընդունում է նաև գանգատներ անհատներից:

Ընդհանուր հանձնարարականներից կարևոր է հիշատակել թիվ 19 հանձնարարականը, քանի որ այն ամրագրեց, որ ընտանեկան բռնությունը կանանց նկատմամբ դրսևորվող խտրականության ձև է: Այս հանձնարարականով Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն ընդլայնեց վերոնշյալ կոնվենցիայի լիազորությունները՝ պետություններին պատասխանատվության կանչելով երրորդ անձի կողմից կիրառվող բռնությունների համար: Թիվ 19

[10] Ներկայացված են ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի նախաձեռնությամբ իրականացված «Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում» սոցիոլոգիական հետազոտության տվյալները:

հանձնարարականը նաև դատական և իրավապահ համակարգի ներկայացուցիչների համար գենդերային զգայուն դասընթացներ անցկացնելու պահանջ ներկայացրեց մասնակից պետություններին:

Անհատական գանգատների շրջանակներում եզրակացություններ անելով՝ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն ոչ միայն տվյալ պետության համար է հանձնարարականներ տալիս, այլև այդպիսով սահմանում է կանանց ընտանեկան բռնությունից պաշտպանելու՝ պետական պատասխանատվության չափանիշները: Հայաստանը, ստորագրելով «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի» կամընտիր արձանագրությունը, լիազորել է անհատներին պետության դեմ հաղորդագրություններ ներկայացնել CEDAW կոմիտեին: Մինչ օրս Հայաստանից որևէ գանգատ չի քննվել CEDAW կոմիտեի կողմից, սակայն մյուս մասնակից պետությունների դեմ ներկայացված հաղորդագրությունների վերաբերյալ եզրակացություններն ու հանձնարարականները պետք է ուղենշային լինեն կոնվենցիայի բոլոր մասնակից պետությունների համար:

Վերջին տարիներին Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն քննել է ընտանեկան բռնության վերաբերյալ մի շարք գործեր (Ա. Թ.-ն ընդդեմ Հունգարիայի, Գոեկչեն ընդդեմ Ավստրիայի, Յիլդիրիմն ընդդեմ Ավստրիայի, Իքսն ու Իգրեկն ընդդեմ Վրաստանի և այլն): Այս գործերի փաստական հանգամանքները գրեթե նույնական են. կինը ենթարկվել է բռնության իր զուգընկերոջ կողմից, դիմել է պետական մարմիններին (ոստիկանություն, դատախազություն, դատարաններ)՝ պաշտպանություն ստանալու ակնկալիքով, սակայն պետությունը բավարար քայլեր չի ձեռնարկել քաղաքացուն պաշտպանելու և բռնարարին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Վերոնշյալ գործերում CEDAW կոմիտեն մասնակից պետություններին հանձնարարել է **պատշաճ ջանասիրություն հանդես բերել** բռնության կրկնությունը կանխելու, ընտանեկան բռնության ցանկացած բողոք քննելու և բռնության ենթարկված անձին օգնություն

ցուցաբերելու համար: Երբ նշված պահանջները չեն կատարվել, CEDAW կոմիտեն արձանագրել է «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի» մի շարք հոդվածների խախտումներ: Բացի տվյալ գործին վերաբերող հանձնարարականներից՝ CEDAW կոմիտեն սովորաբար տալիս է նաև ընդհանուր հանձնարարականներ, որոնք վերաբերում են հիմնականում նման դեպքերի կրկնության բացառմանը և իրավապահ մարմինների ու դատական համակարգի աշխատանքի համապատասխանեցմանը նշված կոնվենցիայի պահանջներին:

Տարածաշրջանային մակարդակում ընտանեկան բռնության կանխարգելման չափանիշներ է սահմանել Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Դատարանն իր վճիռները կայացնելիս հիմնվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հոդվածների վրա: Այն ընդունվել է ավելի քան կես դար առաջ՝ 1950 թվականին: Այդ ժամանակաշրջանում ընտանեկան բռնությունը դեռևս արտացոլված չէր իրավական փաստաթղթերում: Ընտանեկան բռնության գործերով ՄԻԵԴ-ը հիմնվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հետևյալ հոդվածների վրա.

- Հոդված 2. Կյանքի իրավունք,
- Հոդված 3. Խոշտանգումների արգելում,
- Հոդված 8. Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք,
- Հոդված 14. Խտրականության արգելում:

Վերոնշյալ հոդվածները պետության համար նեգատիվ պարտավորություններ են սահմանում՝ պահանջելով զերծ մնալ իր իրավասության տակ գտնող անձանց իրավունքները խախտելուց: Սակայն ՄԻԵԴ-ն իր նախադեպային վճիռներով սահմանել է, որ պետություններն ունեն նաև պոզիտիվ պարտավորություններ՝ պաշտպանելու իրենց իրավասության ներքո գտնվող անձանց իրավունքները երրորդ անձի ոտնձգություններից: Սա չափազանց կարևոր է հատկապես ընտանեկան բռնությանն առնչվող գանգատները քննելու համար, քանի որ բոլոր դեպքերում բռնարարը ոչ թե պետության

ներկայացուցիչն է, այլ երրորդ անձը, և, սահմանելով պետության պոզիտիվ պարտավորությունը, ՄԻԵԴ-ը հնարավորություն է ընձեռել բռնության ենթարկված կանանց գանգատ ներկայացնելու պետության դեմ:

Սկսած 2007 թվականից՝ ՄԻԵԴ-ն ընտանեկան բռնության մի շարք գործեր է քննել: Ուսումնասիրված շուրջ երկու տասնյակ գործերի փաստական հանգամանքները հիմնականում կրկնվում են. գանգատ ներկայացնողը կին է, որը պարբերաբար բռնության է ենթարկվել ամուսնու կամ զուգընկերոջ կողմից: Նա դիմել է իրավապահ մարմիններին, հաճախ՝ նաև դատարան՝ հաղորդելով բռնարարի արարքների վտանգավորության և իրեն սպառնացող վտանգների մասին: Հաճախ բռնարարի ճնշմամբ կինը հետ է վերցրել իր բողոքը, և քրեական հետապնդումները դադարեցվել են: Արդյունքում բռնությունների շղթան շարունակվել է, և կինը ստիպված է եղել կրկին դիմելու իշխանություններին՝ պաշտպանության համար: Թեև գործերի մեծ մասի դեպքում իշխանությունները չեն ցուցաբերել բացարձակ անգործություն, բայց և այնպես, նրանց ձեռնարկած միջոցները բավարար չեն եղել կանանց հետագա բռնություններից պաշտպանելու համար, ինչի հետևանքով ՄԻԵԴ-ն արձանագրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտումները և վճիռներ է կայացրել ընդդեմ անդամ պետությունների՝ պարտավորեցնելով նրանց պետական բյուջեից դրամական փոխհատուցումներ հատկացնել գանգատ ներկայացնողներին (հիմնականում՝ 4.000-40.000 եվրոյի շրջանակներում՝ պայմանավորված դեպքի հանգամանքներով և տվյալ երկրի տնտեսական վիճակով): Նշենք, որ ՄԻԵԴ-ն իր վճիռներում հողում է կատարում տվյալ երկրում կանանց իրավունքների վերաբերյալ հետազոտություններին, քննում է կանանց վիճակը և հաշվի է առնում դա:

Իր վճիռներով ՄԻԵԴ-ն ընտանեկան բռնության գործերի քննության չափանիշներ է սահմանել: Դրանցից ամենակարևորն այն է, որ ***իշխանությունները, տեղյակ լինելով բռնության փաստի մասին, պարտավոր են պատշաճ ջանասիրությամբ քննել գործը, պատասխանատվության ենթարկել բռնարարին և պաշտպանել բռնության զոհին ու նրա երեխաներին*** *(եթե ընտանիքում կան երեխաներ):*

Ընտանեկան բռնությունների գործերից նախադեպային է Օփուզն ընդդեմ Թուրքիայի գործը[11]: Բռնություններով լի միջադեպերը տեղի էին ունեցել 2002 թվականին Թուրքիայում: Դատարան գանգատ ներկայացրած Օփուզի ամուսինը դաժան ծեծի էր ենթարկել նրան և սպանել նրա մորը: Նախքան սպանությունը Օփուզի ամուսինը տարիներ շարունակ բռնությունների էր ենթարկել թե՛ նրան, թե՛ նրա մորը, սպառնացել էր, թե կոչնչացնի նրանց, փորձել էր մեքենայով վրաերթի ենթարկել, պատճառել էր բազմաթիվ մարմնական վնասվածքներ (Օփուզի գործի հանգամանքները բավականին նման են Հայաստանում տեղի ունեցած՝ Թագուհի Մանսուրյանի նկատմամբ ընտանեկան բռնության գործի հանգամանքներին): Բռնության ենթարկված կանայք մի քանի անգամ դիմել էին ոստիկանություն, սակայն բռնարարի համար ամեն անգամ նվազագույն պատիժներ էին սահմանվել՝ տուգանք կամ ընդամենը մի քանի շաբաթվա կալանք: Ամեն անգամ ազատության մեջ հայտնվելով՝ բռնարար տղամարդը սպանության սպառնալիքով Օփուզին ստիպել էր հետ վերցնել բողոքը, և նրա նկատմամբ քրեական հետապնդումները դադարեցվել էին:

Օփուզն ու իր մայրը հետագայում տեղյակ էին պահել տարածքային դատախազությանը, որ իրենք ստիպված էին եղել հետ վերցնել իրենց բողոքը սպառնալիքների պատճառով, և իշխանություններից պաշտպանություն էին խնդրել: Օփուզը նաև դիմել էր դատարան՝

---

[11] OPUZ v. TURKEY (Application no. 33401/02), https://hudoc.echr.coe.int/eng?i=001-92945 (մուտք՝ 20.02.2020):

ամուսնալուծության նպատակով: Դատախազության և քննչական մարմինների ոչ պատշաճ արձագանքի հետևանքով բռնարարը շարունակել էր ազատության մեջ մնալ և ճնշել կնոջն ու նրա մորը: Ի վերջո, բռնարար ամուսնուն ձերբակալեցին միայն այն ժամանակ, երբ նա ի կատար էր ածել իր սպառնալիքը՝ սպանել էր զոքանչին:

ՄԻԵԴ-ի գնահատմամբ՝ Թուրքիայի իշխանությունները չեն կատարել իրենց՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով նախատեսված պարտավորությունը, համաձայն որի՝ պետությունը պատասխանատու է իր քաղաքացիների կյանքի և անվտանգության համար և պետք է պաշտպանի նրանց՝ խոշտանգումներից ու անմարդկային վերաբերմունքից զերծ լինելու իրավունքը: Դատարանին չի բավարարել իշխանությունների այն փաստարկը, թե քրեական հետապնդումները դադարեցվել էին, քանի որ կինը հետ էր վերցրել իր բողոքը: Ըստ օրենքի՝ բռնության դեպքերը կարող են քննվել միայն բողոքի առկայության դեպքում: Դատարանը գտնում է, որ դատախազությունն ուներ բավարար հիմքեր՝ քննությունը շարունակելու համար, նույնիսկ երբ կինը հետ էր վերցրել բողոքը՝ հանուն քաղաքացիների անվտանգության և հասարակական շահի: ՄԻԵԴ-ը վճռել է, որ թեև քաղաքացիները չեն խոշտանգվել և չեն սպանվել պետության ներկայացուցչի կողմից, սակայն պետությունը չի կատարել իր դրական պարտավորությունը՝ նրանց պաշտպանելու համար, ուստի խախտվել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածները (կյանքի իրավունք և խոշտանգումների արգելում): Դատավճռով Թուրքիան պետական բյուջեից 36.500 եվրո վճարեց ընտանեկան բռնության ենթարկված և մորը կորցրած կնոջը:

Վերոնշյալ դատավճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդլայնել է պետության պատասխանատվությունը ընտանեկան բռնության զոհերի պաշտպանության առնչությամբ: Դատարանը պետություններին պարտավորեցնում է քայլեր ձեռնարկել տուժողի բողոքի բացակայության պայմաններում ևս՝ բռնության կրկնության կանխարգելման նպատակով: Ըստ ՄԻԵԴ-ի՝ դիմումի

բացակայության պայմաններում քրեական հետապնդումը շարունակելու համար պետք է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

- իրավախախտման լրջությունը,
- զոհը հոգեբանակա՞ն, թե՞ մարմնական բռնությունների է ենթարկվել,
- բռնարարը զենք գործածե՞լ է, թե՞ ոչ,
- բռնարարն արդյոք սպառնալիքներ հնչեցրե՞լ է գրանցված դեպքից հետո,
- բռնարարն արդյոք ծրագրե՞լ է հարձակում,
- ընտանիքում երեխաների առկայությունն ու իրավիճակի ազդեցությունը նրանց վրա,
- հետագա բռնությունների հավանականությունը,
- զոհի և բռնարարի հարաբերությունների բնույթը, դրանց հնարավոր ազդեցությունը զոհի կողմից դիմումը հետ վերցնելու վրա,
- հարաբերությունների նախապատմությունը և դրանում բռնության առկայությունը,
- բռնարարի քրեական անցյալը (եթե կա):

Այդպիսով ՄԻԵԴ-ը սահմանում է մի շարք կետեր, որոնցով հետագայում ևս ստուգելու է ընտանեկան բռնության գործերով քրեական վարույթի դադարեցման նպատակահարմարությունը:

Ընտանեկան բռնության գանգատներից ուշագրավ է նաև Երեմիան ընդդեմ Մոլդովայի գործը[12]: Այս դեպքում առաջին անգամ ՄԻԵԴ գանգատ էր ներկայացրել ոչ միայն բռնության ենթարկված կինը, այլ նաև նրա երեխաները: Երեմիայի դուստրերն առանձին գանգատ էին ներկայացրել պետության դեմ՝ նշելով, որ մոր զուգընկերոջ կողմից բանավոր վիրավորանքները (հայհոյանքները) և այն,

[12] EREMIA v. THE REPUBLIC OF MOLDOVA (Application no. 3564/11), https://hudoc.echr.coe.int/eng#{"fulltext":["eremia%20v%20moldova"],"itemid":["001-119968"]}, (մուտք՝ 20.02.2020):

որ իրենք ականատես են եղել իրենց մոր նկատմամբ կիրառված բռնություններին, խախտել են իրենց՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված իրավունքը՝ խոշտանգումների արգելքը: Սակայն ՄԻԵԴ-ը գանգատը քննել էր ոչ թե հոդված 3-ի, այլ հոդված 8-ի հատկանիշներով (դատարանն ունի նման իրավասություն)՝ փաստորեն խուսափելով պատասխանելուց, թե հայհոյանքներ լսելը և բռնությունների ականատես լինելը կարո՞ղ են արդյոք խոշտանգում համարվել: Այնինչ սա կարող էր լավ նախադեպ դառնալ բռնության միջավայրում ապրող մարդկանց, հատկապես՝ երեխաների իրավունքների պաշտպանության տեսակետից: Այնուամենայնիվ, դատարանն արձանագրել էր իրավունքի խախտումը (հոդված 8-ի շրջանակներում)՝ նշելով, որ Երեմիայի դուստրերի անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքն է խախտվել:

Թեև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բավականին առաջընթաց է արձանագրել ընտանեկան բռնության գործերի քննության հարցում, որոշ տեսաբաններ և դատավորներ դեռևս քննադատում են նրան բավարար գենդերային զգայունություն չցուցաբերելու համար: ՄԻԵԴ-ի դատավոր Պինտո դե Ալբուքյուերքյուն Վալուլիենեն ընդդեմ Լիտվայի գործով[13] չի համաձայնել ՄԻԵԴ-ի վճռի հետ և իր առանձին կարծիքում նշել է, որ դատարանը ընտանեկան բռնության գործերը քննելիս պետք է ավելի շատ գենդերային զգայունություն ցուցաբերի, հաշվի առնի տղամարդկանց և կանանց միջև առկա անհավասարությունը, ինչպես նաև կանանց կարգավիճակը: Դատավորը մեկ քայլ առաջ է գնում՝ գրելով, որ անգամ մեկ հարվածը, ապտակը կամ մարդու վրա մեկ անգամ թքելը հավասար է նրան նվաստացնելուն ու դեգրադացնելուն և կարող է հանգեցնել

[13] CASE OF VALIULIENĖ v. LITHUANIA (Application no. 33234/07), https://hudoc.echr.coe.int/eng#{"fulltext":["valiuliene%20v%20lithuania"],"itemid":["001-117636"]} (մուտք՝ 20.02.2020):

մարդու իրավունքների խախտման՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի շրջանակներում:

Եվրոպայի խորհրդում ընտանեկան բռնության դեմ պայքարն էլ ավելի կարևորվեց «**Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիայի**» ընդունումից հետո (առավել հաճախ անվանում են **Ստամբուլյան կոնվենցիա**, քանի որ այն բացվել է ստորագրությունների համար հենց այդ քաղաքում): Այն ուժի մեջ է մտել 2014 թվականին: Մինչ օրս այն վավերացրել են Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետություններից 34-ը: Հայաստանն այն ստորագրել է 2018 թվականին և առաջիկայում հավանաբար կվավերացնի:

Ստամբուլյան կոնվենցիայի նպատակներն են կանանց բռնության բոլոր տեսակներից պաշտպանելը, կանանց նկատմամբ բռնությունն ու ընտանեկան բռնությունը կանխարգելելն ու պատժելը, կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացմանը նպաստելը և կանանց ու տղամարդկանց միջև իրական հավասարության հաստատումը խթանելը և այլն:

Ստամբուլյան կոնվենցիան սահմանում է բռնության տեսակները և պարտավորեցնում մասնակից պետություններին պաշտպանել կանանց բռնությունից հասարակական և անձնական հարաբերություններում: Այն նաև սահմանում է, որ մասնակից պետությունները պետք է գենդերային զգայուն քաղաքականություն մշակեն՝ հիմնելով պաշտոնական համակարգող մարմին և տրամադրելով ֆինանսական միջոցներ:

Այս կոնվենցիայով ստեղծվել է կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի հարցերով զբաղվող փորձագիտական խումբը՝ ԳՐԵՎԻՈ-ն (Group of experts on action against violence against women and domestic violence - GREVIO), որը պատասխանատու է մասնակից պետությունների կողմից սույն կոնվենցիայի կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար: Վերահսկողությունն իրականացվում է մասնակից պետությունների կողմից ներկայացված պարբերական զեկույցների քննու-

թյամբ և դրանց վերաբերյալ առաջարկությունների ու հանձնարարականների ներկայացմամբ: ԳՐԵՎԻՈ-ն զեկույցներ է ստանում նաև ոչ պետական մարմիններից, հիմնականում՝ կանանց իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպություններից: Ինչպես և CEDAW կոմիտեն, ԳՐԵՎԻՈ-ն ևս ընդհանուր հանձնարարականներ է տալիս սույն կոնվենցիայի հոդվածների իրագործման վերաբերյալ, սակայն նրան դեռևս լիազորված չէ գանգատներ ընդունել մասնակից պետությունների դեմ անհատներից: Այնուամենայնիվ, «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիան» հսկայական ներուժ ունի ընտանեկան բռնության և գենդերային անհավասարության դեմ պայքարում հիմնական գործիքներից մեկը դառնալու համար:

Հայաստանյան պրակտիկա

Հայաստանյան քննչական մամիները և դատարանները արդեն իսկ քննել են ընտանեկան բռնությանը վերաբերող մի շարք քրեական գործեր, որոնցով կայացվել են դատավճիռներ: 2015-16 թթ. քննված Հասմիկ Խաչատրյանի, Դիանա Նահապետյանի, Նարինե Զոհրաբյանի և Հեղինե Դաբուզյանի գործերն ապացուցում են, որ հայաստանյան իրավապահ մարմինների գործելաոճը չի համապատասխանում պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին:

Դիանա Նահապետյանի գործը դատական համակարգի կողմից կնոջ զոհարկման (վիկտիմիզացիայի) վառ օրինակ է: Դիանայի զուգընկերը՝ նախ ծեծել, ապա դանակի բազմաթիվ հարվածներով սպանել էր նրան երեխաների աչքի առաջ: Արարքը նախ որակվել էր որպես սպանություն, որի համար նախատեսված է 6-12 տարվա ազատազրկում: Դատաքննության ընթացքում մեղադրանքը փոփոխվել է երկու անգամ: Նախ արարքը վերաորակվել է որպես առանձնակի դաժանությամբ սպանություն, որի համար նախատեսված է 8-15 տարվա ազատազրկում: Ապա այն ևս մեկ անգամ վերաորակվել է

որպես հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանություն, որի համար նախատեսված է մինչև 4 տարվա ազատազրկում: Հետաքրքրական է, որ գործը քննող դատավորն ավելի արժանահավատ է համարել մեղադրյալի ցուցմունքները, չնայած որ վերջինիս մեկ այլ ցուցմունք դատարանը համարել էր ոչ արժանահավատ, քանի որ Դիանայի դուստրերը նրա ցուցմունքը հերքող վկայություններով էին հանդես եկել: Դիանայի ցուցմունքի բացակայության պարագայում, փաստորեն, դատարանը արժանահավատ է համարում այն անձի ցուցմունքը, որը կեղծ ցուցմունք է տվել սույն գործի մեկ այլ դրվագով, և այդ կեղծիքը, փաստորեն, բացահայտվել է և արձանագրվել դատարանում: Ավելին՝ դատավորն իրեն թույլ է տվել մեղադրական գնահատական հնչեցնել սպանված կնոջ հասցեին: «....այսպիսով, դատարանն ապացուցված է համարում, որ Վոլոդյա Մուրադյանը սպանությունը կատարել է **տուժողի կողմից դրսևորած պարբերաբար հակաբարոյական վարքագծի** կապացությամբ առաջ եկած երկարատև հոգեճնշող իրավիճակի հետևանքով հանկարծակի առաջացած հոգեկան խիստ հուզմունքի վիճակում…»[14]: Արդյունքում մարդասպանություն գործած անձը դատապարտվել է ընդամենը 3.5 տարվա ազատազրկման

Հասմիկ Խաչատրյանի գործով ևս մեղադրյալը չափազանց մեղմ պատժի է արժանացել, իսկ դատավորը չի ցուցաբերել գենդերային զգայունություն գործի համար էական հանգամանքի վերաբերյալ որոշում կայացնելիս: Հասմիկին տարիներ շարունակ ծեծի ենթարկած ամուսինը նախ մեղադրվում էր իրենից նյութական կամ այլ կախվածություն ունեցող անձի նկատմամբ խոշտանգում կատարելու մեջ: Դատարանը, սակայն, գտել է, որ Հասմիկը որևէ կախվածություն չի ունեցել ամուսնուց, քանի որ նրանք վերջին երկու տարիներին փաստացի ամուսնական կյանքով չեն ապրել, և Սարգիսը ֆինանսապես չի աջակցել Հասմիկին: Դատարանը հաշվի չի առել երկ-

---

[14] Դատական Գործ N: ԱՎԴ/0043/01/13, էջ 24:

րում կանանց կարգավիճակը, ուշադրություն չի դարձրել գյուղական համայնքում ապրող երիտասարդ կնոջ դրությանը՝ ընդունելով, թե իբրև վերջինս կարող էր անկախ լինել ամուսնուց՝ ապրելով ամուսնու ծնողների հետ: Արդյունքում բռնարարը դատապարտվել է ընդամենը 1.5 տարվա ազատազրկման, սակայն պատիժը չի կրել. ազատ է արձակվել համաներմամբ:

Նարինե Զոհրաբյանի գործով կնոջը ծեծած ամուսնու համար տուգանք է սահմանվել՝ 50.000 դրամ: Դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ բռնությունը կրկնվել է, և դա չի դիտարկել որպես հանցանքը ծանրացնող հանգամանք: Գործը քննող դատախազը որոշում էր կայացրել քրեական հետապնդում չիրականացնելու ամուսնու նկատմամբ՝ բռնության կրկնության փաստով, քանի որ երկրորդ միջադեպի ընթացքում ամուսինը միայն մեկ հարված էր հասցրել (հիշենք ՄԻԵԴ դատավոր Պինտո դե Ալբուքյուերքյուի կարծիքը կնոջը մեկ անգամ հարվածելու մասին):

Ոչ միայն դատախազության և դատարանների, այլ նաև ոստիկանության թերացումներն ի հայտ են գալիս **Հեղինե Դաբուզյանի** գործի դեպքում: Գործի հանգամանքներից պարզ է դառնում, որ նախքան սպանությունը Հեղինե Դաբուզյանը մի քանի անգամ դիմել էր ոստիկանություն՝ ահազանգելով իր նկատմամբ կիրառվող ճնշումների և սպառնալիքների մասին, սակայն բռնարարի հանդեպ քրեական հետապնդում չի իրականացվել: Նա շարունակել է մնալ ազատության մեջ և իրագործել է իր մտադրությունը՝ սպանել է կնոջը:

Վերոնշյալ գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանը չի կատարում իր միջազգային պարտավորությունները՝ պատշաճ քննություն չի իրականացնում ընտանեկան բռնության գործերով, չի պաշտպանում կանանց բռնությունից, համապատասխան պատիժներ չի սահմանում բռնարարների համար: 2018 թվականի հուլիսի 1-ից Հայաստանում ուժի մեջ է մտել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը, որն էլ ավելի է հստակեցրել պետու-

թյան պարտավորությունները իր քաղաքացիներին ընտանեկան բռնությունից պաշտպանելու առումով և նոր լիազորություններ է սահմանել ոստիկանության համար՝ ընտանեկան բռնությունը կանխարգելելու նպատակով: Այնուամենայնիվ, օրենքի առկայությունն ինքնին չի կարող ապահովել պետության ստանձնած պարտավորությունների կատարումը, քանի որ ընտանեկան բռնությունը կանխելու համար նախևառաջ քաղաքական կամք է անհրաժեշտ, ինչպես նաև գենդերային կարծրատիպերից ու նախապաշարումներից զերծ պաշտոնյաներ, հատկապես՝ իրավապահ մարմիններում և դատական համակարգում: Նման հանձնարարական Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն տվել է դեռևս 90-ականներին:

2.3. Ներպետական գործիքներ. ՀՀ Սահմանադրություն

Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մեխանիզմները որքան էլ զարգանան, անհատի իրավունքների պաշտպանությունը չի կարող արդյունավետորեն իրականացվել, եթե ազգային մակարդակում ստեղծված չեն դրա երաշխիքներն ու գործիքակազմը: Գոյություն չունի համաշխարհային պետություն՝ իր միջազգային ոստիկանությամբ, որը կպաշտպանի մարդու իրավունքները, ուստի հատկապես երրորդ անձանց կողմից իրենց իրավունքների խախտումը կանխարգելելու և պաշտպանություն ստանալու համար անհատները նախևառաջ պետք է դիմեն պետությանը: Իսկ պետության ներսում անհատի իրավունքների գլխավոր երաշխավորը տվյալ երկրի Սահմանադրությունն է: Այսօր աշխարհի գրեթե բոլոր պետություններն ունեն իրեց Սահմանադրությունը, բացառությամբ այն երկրների, որոնք չունեն միասնական համապարփակ փաստաթուղթ: Սակայն նրանք էլ ունեն տարբեր հիմնարար օրենքներ, որոնք ծառայում են որպես սահմանադրական օրենքներ: Այդպիսի երկրներից են Միացյալ Թագավորությունը, Կանադան, Նոր Զելանդիան, Իսրայելը, Սան Մարինոն, Սաուդյան Արաբիան: Սահմանադրությունը սահմանում է տվյալ պետության կառուցվածքը, իրավական համակարգն ու արժեքները: Այն թեև հիմնային փաստաթուղթ է, սակայն ենթակա է փոփոխությունների. որոշ երկրներում, ինչպիսին է, օրինակ, Չինաստանը, Սահմանադրությունը հաճախակի է փոփոխվել և լրացվել (վերջին փոփոխությունը կատարվել է 2018 թվականին), իսկ, օրինակ, ԱՄՆ-ում առ այսօր գործում է 1787 թվականին ընդունված Սահմանադրությունը, որը, իհարկե, հետագայում լրացվել է՝ ընդլայնելով քաղաքացիների իրավունքները:

Հայաստանի առաջին Սահմանադրությունն ընդունվել է 1922 թվականին, երբ երկիրը Խորհրդային Միության կազմում էր: Խորհրդային Հայաստանի Սահմանադրությունն ամբողջովին համապատասխանեցված էր Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ

Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրությանը, ուստի ազգային սահմանադրություն չէր: 1991 թվականին Հայաստանի անկախացումից տարիներ անց՝ 1995 թվականի հուլիսի 5-ին, համաժողովրդական հանրաքվեով ընդունվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը: Այդ օրը հռչակվել է պետական տոն՝ Սահմանադրության օր: ՀՀ Սահմանադրությունը փոփոխություններին է ենթարկվել երկու անգամ՝ 2005 և 2015 թվականներին: Փոփոխությունները հիմնականում վերաբերել են պետական համակարգին և իշխանության բաժանմանը. զգալիորեն կրճատվել են ՀՀ նախագահի լիազորությունները, փոխարենն ավելացել են ՀՀ Ազգային ժողովի և վարչապետի լիազորությունները:

ՀՀ Սահմանադրությունը երկու կարևորագույն խնդիր է լուծում.

- Երաշխավորում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները.
- Բաժանում է իշխանությունը դրա տարբեր ճյուղերի միջև՝ սահմանելով զսպումների և հակակշիռների մեխանիզմներ:

ՀՀ Սահմանադրությունը երկրի մայր օրենքն է, ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և մնացած օրենքներն ու իրավական ակտերը պետք է համապատասխանեցվեն դրան, հակառակ դեպքում ՀՀ Սահմանադրական դատարանը իրավասու է այդ փաստաթղթերը ճանաչելու որպես հակասահմանադրական: ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը: Հետևաբար ստացվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության հետևյալ աստիճանակարգումը.



ՀՀ Սահմանադրությունը բաղկացած է 16 գլուխներից, որոնցից առաջինում ներկայացվում են Սահմանադրական կարգի հիմունքները: Առաջին երկու հոդվածները հռչակում են, որ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է, իշխանությունը պատկանում է ժողովրդին, իսկ իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է: ՀՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ և 3-րդ հոդվածները որևէ հանրաքվեով փոփոխման ենթակա չեն. դա արգելված է 203-րդ հոդվածով, որը ևս փոփոխման ենթակա չէ:

ՀՀ Սահմանադրություն

Հոդված 3. Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները

1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

(Աղբյուրը՝ www.concourt.am)

ՀՀ Սահմանադրության 2-րդ գլուխն ամբողջությամբ (58 հոդված) նվիրված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին ու ազատություններին, իսկ երրորդ գլխում ամրագրված սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների երաշխիքները ներկայացված են ընդամենը 6 հոդվածով (երկրորդ գլխում ևս կան սոցիալ-տնտեսական իրավունքներին վերաբերող մի քանի հոդվածներ): 4-6-րդ գլուխները սահմանում են ՀՀ Ազգային ժողովի, նախագահի և Կառավարության, 7-8-րդ գլուխները՝ ՀՀ դատական համակարգի և դատախազության, 9-րդը՝ տեղական ինքնակառավարման մարմինների, 10-րդը՝ Մարդու իրավունքների պաշտպանի, 11-րդը՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի, 12-րդը՝ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի, 13-րդը՝ Հաշվեքննիչ պալատի, 14-րդը՝ Կենտրոնական բանկի լիազորությունները: Վերջին երկու գլուխներում ներառված են նաև հոդվածներ Սահմանադրության ընդունման ու փոփոխությունների վերաբերյալ և անցումային դրույթներ: ՀՀ Սահմանադրության 2-րդ և 3-րդ գլուխները ներկայացված են Հավելված 2-ում:

2.4. Մարդու իրավունքների հայաստանյան շարժումները

Հայաստանի անկախացումից և Երրորդ հանրապետության ստեղծումից հետո եղել են մի շարք շարժումներ, որոնց հիմքում ոտնահարված իրավունքների վերականգնումն էր: Այդ շարժումներից շատերը հաճախ չեն հռչակվել որպես մարդու իրավունքների պաշտպանության շարժումներ. երբեմն ունեցել են ավելի շատ քաղաքական բնույթ և շարժառիթներ, սակայն ստեղծել են հանուն իրավունքների հանրային պայքարի մշակույթ: Այս գլխում ներկայացվում են այդ շարժումներից մի քանիսը, որոնք նշանակալի ազդեցություն են ունեցել հայաստանյան իրավապաշտպան միջավայրի ձևավորման վրա:

Բնապահպանական շարժումներ

Պայքար ընդդեմ Թեղուտի հանքի շահագործման

Առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունքի համար բազմաթիվ պայքարներ են կազմակերպվել Հայաստանում, որոնցից ոչ բոլորն են հաղթական ավարտ ունեցել: 2007 թվականին ՀՀ Կառավարությունը որդեգրեց տնտեսական նոր քաղաքականություն. հանքարդյունաբերությունը (կամ կորզիչ տնտեսությունը (extractive economy)) հայտարարվեց գերակա ուղղություն: 2005 թվականից սկսած՝ հանքերի հետախուզման և արդյունահանման հարյուրավոր թույլտվություններ տրվեցին Հայաստանի փոքր տարածքում. շահագործման հանձնվեցին 400-ից ավելի հանքեր, որոնցից 27-ը՝ մետաղական: Անկախացումից հետո ամենախոշոր ծրագիրը Թեղուտում պղնձամոլիբդենային հանքի շահագործումն էր, որը քննադատության և բողոքի մեծ ալիք բարձրացրեց: Հենց այդ ժամանակ՝ 2007-2008 թվականներին, առավել ակտիվացան բնապահպանական շարժումները, որոնք, բնական միջավայրի պաշտպանությունից բացի, սկսեցին ցույց տալ նաև համաշխարհային տնտեսության և սոցիալական հարցերի հետ բնապահպանության սերտ կապերը: Հանուն

Թեղուտի փրկության սկսված պայքարը շատ բարդ ընթացք ուներ, քանի որ այդ տարիներին հանրության մեջ գերիշխող էին խորհրդային ժամանակի պատկերացումներն այն մասին, որ հանքերը պետական են, հանքանյութը կորզումից հետո մշակման փուլեր է անցնում և տնտեսության այլ ճյուղեր զարգացնում, աշխատողները բարձր են վճարվում և աշխատանքային արտոնություններ ունեն և այլն: Ավելին՝ այդ շրջանում քաղաքացիական անկախ նախաձեռնություններ գրեթե չկային, և հանրությունը դեռևս վստահություն չէր տածում պայքարող անկախ քաղաքացիների խմբերի նկատմամբ. շատերը վստահ էին, որ նախաձեռնությունը ֆինանսավորվում է կուսակցությունների կողմից, ակտիվիստները վճարովի աշխատանք են կատարում և այլն:

Այնուամենայնիվ, բնապահպան ակտիվիստների մի փոքր խմբի հաջողվեց մոբիլիզացնել բազմաթիվ քաղաքացիների ինչպես մայրաքաղաք Երևանում, այնպես էլ այլ համայնքներում:

Հանքին ամենամոտ գտնվող համայնքի բնակիչների մեծամասնությունը դժկամությամբ էր ընդունում հանքավայրի տարածք այցելող բնապահպաններին, անգամ թշնամաբար էր տրամադրված նրանց հանդեպ: Նրանք պնդում էին, որ հանքավայրի շահագործման շնորհիվ իրենց համար կստեղծվեն աշխատատեղեր, իսկ առանց դրա իրենք չեն կարողանա հոգալ ամենօրյա ծախսերը և ստիպված կլինեն արտագաղթել: Որոշ ժամանակ անց բնապահպաններին հաջողվեց որոշ աջակիցներ գտնել տեղական համայնքներում և նրանց ևս ներգրավել հանքարդյունաբերության դեմ կազմակերպված բողոքի ակցիաներում:

«Փրկենք Թեղուտը» քաղաքացիական նախաձեռնությունը պայքարի շատ բազմազան գործիքներ է կիրառել՝ ամենշաբաթյա կրկնվող բողոքի ակցիաներ Կառավարության շենքի դիմաց, երթեր անտառում ապրող և ոչնչացման եզրին գտնվող կենդանիների դիմակներով, ցուցահանդեսներ, հեծանվարշավներ և արշավներ դեպի

Շնող ու Թեղուտ, կոնֆերանսներ, ինչպես նաև հանքի շահագործման օգտին կազմակերպված կոնֆերանսների խափանումներ, վիդեոքարոզարշավներ, հանրահայտ գործիչների ներգրավում՝ ինչպես հայաստանցի, այնպես էլ օտարերկրացի, ներդրողների գրասենյակների դիմաց բողոքի ակցիաներ, հոդվածներ և ելույթներ մամուլում (այդ թվում՝ նաև արտասահմանյան, մասնավորապես՝ ներդրող երկրների), գրավոր բողոքներ ու դիմումներ ներդրողների վերահսկիչ մարմիններում, պաշտոնական և համայնքային հանդիպումներ, ֆիլմերի ու պաստառների պատրաստում, բազմաթիվ հանրամատչելի բացատրական նյութերի ստեղծում հանքերի և կորզիչ տնտեսության պատճառած խոշոր վնասների մասին, գիտական և մասնագիտական անկախ համայնքի մոբիլիզացում, դատական հայցեր, Շնողում և Թեղուտում այլընտրանքային տնտեսության զարգացում և այլն:

Կադր Երևանում կազմակերպված ակցիայից
Լուսանկարը՝ «PanARMENIAN Photo»-ի

Այդուհանդերձ, 2013 թվականին հանքը գործարկվեց: 2018 թվականի փետրվարին հանքի շահագործումը դադարեցվեց այն շահա-

գործող «Վալլեքս» ընկերությունների խմբի վարկավորման դադարեցման պատճառով՝ վեր հանելով բնապահպանական ռիսկեր: 2019 թվականի հուլիսին հանքավայրը վերագործարկվեց: «Փրկենք Թեղուտը» նախաձեռնությունը Հայաստանի ամենաերկարակյաց բնապահպանական շարժումն է, որը շուրջ 13 տարվա ընթացքում վերելքներ ու վայրէջքներ է ունեցել: Եղել են նաև համեմատաբար ավելի պասիվ փուլեր, սակայն անվիճելի է, որ այն օրինակ է ծառայել հետագա մի շարք բնապահպանական ու քաղաքացիական այլ նախաձեռնությունների համար: Թեղուտի շարժումը թեև չկարողացավ դադարեցնել հանքի շահագործումը, սակայն նրա աշխատանքի շնորհիվ մեծ փոփոխություն տեղի ունեցավ Հայաստանի հանրության գիտակցության մեջ: Թեղուտից հետո գրեթե բոլոր համայնքները, որոնց հանքարդյունաբերական նախագծեր են առաջարկվել, մերժել են դրանք և տարբեր ձևերով դիմադրել՝ գիտակցելով հանքարդյունաբերության մեծ վնասները, որոնք արդյունահանողներն ու պետության պատկան մարմինները թաքցնում են քաղաքացիներից:

Թռչկանի ջրվեժի փրկությունը

2011 թվականին վտանգված էր Թռչկանի ջրվեժը, որի վրա «Ռոբշին» ՍՊԸ-ն պատրաստվում էր հիդրոէլեկտրակայան կառուցելու: Մի խումբ բնապահպաններ արագ արձագանքեցին ստեղծված իրավիճակին՝ փորձելով կանխել հէկ-ի կառուցումը: Նրանք մեկնեցին տարածք և խոչընդոտեցին շինարարական աշխատանքները, փակեցին այն հորերը, որոնք շինարարներն էին փորել՝ վեճի բռնվելով տեղում աշխատող բանվորների հետ: Բնապահպանները վտանգի ենթարկեցին իրենց՝ պառկելով տրակտորների և այլ ծանր մեքենաների անիվների տակ՝ արգելափակելով դրանց աշխատանքը:

Կադր Երևանում կազմակերպված բողոքի ակցիայից
Լուսանկարը՝ «PanArmenian Photo»-ի

Ջրվեժի մոտ շուրջօրյա հերթապահություն-նստացույց անելուց բացի՝ քաղաքացիները բողոքի ակցիաներ կազմակերպեցին ՀՀ Կառավարության շենքի դիմաց: Շուրջ երկու շաբաթվա պայքարի շնորհիվ Թռչկանի ջրվեժի վրա հէկ-ի կառուցման աշխատանքները դադարեցվեցին, իսկ ջրվեժի տարածքը ճանաչվեց հատուկ պահպանման գոտի:

Հանուն Ամուլսարի փրկության շարժումը

Ամուլսարում ոսկու հանքի շահագործման դեմ բնապահպանները հանդես էին գալիս 2012 թվականից, սակայն նրանց գործողությունները առավել ակտիվացան 2016 թվականից, երբ ՀՀ Կառավարությունը հաստատեց հանքի շահագործման թույլտվությունը: Նախքան 2018 թվականը առավել տեսանելի էր հանքի շահագործման դեմ հանդես եկող մի խումբ բնապահպանների ու ակտիվիստների շար-

ժումը, իսկ 2018 թվականի թավշյա հեղափոխությունից հետո տեղի բնակչությունը վճռորոշ գործողությունների դիմեց՝ փակելով դեպի հանքավայր տանող ճանապարհները:

Կադր Ջերմուկում կազմակերպված հանրահավաքից
Լուսանկարը՝ «Hetq.am»-ի

Տեղում քսանչորսժամյա հերթափոխ իրականացնելու շնորհիվ քաղաքացիները հանքը շահագործելու թույլտվություն ստացած ընկերությանը ավելի քան 400 օր փաստացի զրկեցին հանքավայրում որևէ գործողություն իրականացնելու հնարավորությունից: Տեղի բնակչության համառությունն ու անկոտրում պայքարը տեսնելով՝ բազմաթիվ քաղաքացիներ Երևանից և այլ մարզերից ավտոերթեր կազմակերպեցին դեպի Ամուլսար՝ մասնակցելով Ջերմուկ քաղաքում կազմակերպվող միջոցառումներին, երթեր կազմակերպվեցին Երևանում և այլ համայնքներում:

Ամուլսարի հանքի շահագործման դեմ պայքարը գրավել է ինչպես տեղական, այնպես էլ միջազգային մամուլի ուշադրությունը: Օտարերկրացի բազմաթիվ լրագրողներ են այցելել Ամուլսարի «պոստեր»՝ պայքարի օջախներից ռեպորտաժներ պատրաստելու նպատակով:

2019 թվականի օգոստոսին Նիկոլ Փաշինյանի ղեկավարած կառավարությունը սկսեց հանդես գալ հանքի շահագործման օգտին, որին հետևեց ջերմուկցիների և բազմաթիվ այլ քաղաքացիների կոշտ արձագանքը՝ «հանքը չի՛ բացվելու»: Հանքի շահագործման հարցը և դրա դեմ տարվող պայքարի ճակատագիրը սույն ձեռնարկի տպագրության պահին դեռևս վերջնականապես որոշված չէին:

Քաղաքական-քաղաքացիական շարժումներ

2008 թվականի հետընտրական շարժումը

2008 թվականի փետրվարին Հայաստանում տեղի ունեցած հերթական նախագահական ընտրություններից հետո երկրում սկսվեցին շուրջօրյա հանրահավաքներ, որոնց գլխավոր պահանջը Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի գլխավորած իշխանության հեռացումն էր: Այս շարժումը մեծապես քաղաքականացված էր. հիմնական պահանջն իշխանափոխությունն էր: Դրա պատճառ էին դարձել տարիներ շարունակ մարդու իրավունքների կոպտագույն խախտումները, որոնցից հիմնականը ազատ ընտրությունների իրավունքի և քաղաքական ազատությունների ոտնահարումն էր: Հարյուր հազարավոր քաղաքացիներ դուրս էին եկել պայքարի՝ վստահ լինելով, որ ընտրություններն անցել են խախտումներով, համատարած ընտրակաշառք բաժանելու, ճնշումների և սպառնալիքների մթնոլորտում: Շուրջ տասը օր տևած հանրահավաքներն ու նստացույցերն ավարտվեցին մարտի 1-ի լուսաբացին ուժային կառույցների հատուկ գործողություններով և գործադրված բռնություններով, որոնց հետևանքով նույն օրը՝ երեկոյան, տասը մարդ զոհվեց, ավելի շատ մարդիկ վիրավորվեցին և ձերբակալվեցին: Երկրում արտակարգ

դրություն հայտարարվեց: Այդ 20 օրերի ընթացքում կտրուկ սահմանափակվեց խաղաղ հավաքների և մամուլի ազատությունը: Արտակարգ դրությանը հաջորդեցին քաղաքական հայացքների համար քաղաքացիների նկատմամբ քրեական հետապնդումներն ու դատավարությունները: Սա մոբիլիզացրեց մի խումբ երիտասարդների («Հիմա» շարժումը), որոնք սկսեցին տարատեսակ բողոքի ակցիաներ կազմակերպել պետական մարմինների շենքերի դիմաց, դատարանների մոտ՝ պահանջելով ազատ արձակել քաղաքական բանտարկյալներին:

«Ազատություն քաղբանտարկյալներին» պաստառը պարզվել է նաև դեպի Հայոց ցեղասպանության հուշահամալիր երթի ժամանակ, Երևան, 24 ապրիլի 2008 թ.

Ընդդիմության հանրահավաքներն ու բողոքի ակցիաներն աստիճանաբար դադարեցվեցին և նոր թափ ստացան 2013 թվականի

նախագահական ընտրություններին հաջորդած շրջանում, երբ քաղաքացիները դարձյալ պայքարում էին ընտրությունները կեղծելու դեմ: Թե՛ 2008, թե՛ 2013 թվականի պայքարները չկարողացան հասնել իրենց առջև դրած հիմնական նպատակին՝ իշխանափոխությանը, սակայն հատկապես 2008 թվականի համաժողովրդական շարժումը մեծ նպաստ ունեցավ քաղաքական և քաղաքացիական շարժումների կազմակերպման ու ամրապնդման գործում:

«Բանակն իրականում» նախաձեռնությունը

Այս նախաձեռնության նպատակը խաղաղ պայմաններում հայոց բանակում տեղի ունեցող սպանությունները, խոշտանգումները, տարատեսակ բռնություններն ու ապօրինությունները կանխարգելելն է, արդեն տեղի ունեցած դեպքերով արդարացի դատաքննությունների հասնելն ու զինծառայողների իրավունքների պաշտպանությունը: Նախաձեռնությունը հատկապես ակտիվ է եղել 2011-2014 թվականներին՝ կազմակերպելով բողոքի ակցիաներ, երթեր, մամուլի ասուլիսներ, քննարկումներ, պաշտոնական հարցումներ և բանակում մարդու իրավունքների ջատագովության այլ միջոցառումներ:

Բողոքի ակցիա ՀՀ Կառավարության շենքի դիմաց
Լուսանկարը՝ «Photolure.am»-ի

«Բանակն իրականում» նախաձեռնության գործունեությանը նպաստել է մի շարք իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների ակտիվ աշխատանքը, ինչպես նաև լրագրող, իրավապաշտպան Ժաննա Ալեքսանյանի հոդվածները՝ բանակում տեղի ունեցող սպանությունների և բռնությունների վերաբերյալ: Առանձնահատուկ նշանակություն են ունեցել բանակում խաղաղ պայմաններում սպանված զինծառայողների ծնողների բողոքի ակցիաները ՀՀ Կառավարության շենքի և նախագահական նստավայրի դիմաց:

Քաղաքացիական նախաձեռնությունը մեծ ազդեցություն ունեցավ բանակում տեղի ունեցող՝ մարդու իրավունքների կոպիտ խախտումների վերհանման ու լուսաբանման գործում: Տեղի տալով նախաձեռնության պահանջներին՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը որոշակի առերևույթ քայլեր ձեռնարկեց բանակը հանրության համար առավել բաց դարձնելու ուղղությամբ, որոնք, սակայն, բավարար չէին ներսում տեղի ունեցող հանցագործությունները կանխարգելելու համար: Ավելին, ակտիվիստների գնահատմամբ, այդ քայլերն ավելի ձևական, քան բովանդակային բնույթ ունեին:

«Բանակն իրականում» նախաձեռնության անդամները բազմիցս թիրախավորվել են իրենց գործունեության համար: Նրանց հաճախ անվանում էին «ազգի դավաճաններ» և պետական անվտանգության դեմ գործողներ: Չնայած տարատեսակ ճնշումներին՝ նախաձեռնությունը մինչ օրս շարունակում է բարձրաձայնել բանակում մարդու իրավունքների խախտումների մասին, թեև վերջին տարիներին այն առավելապես ակտիվ է միայն առցանց տիրույթում:

Մաշտոցի պուրակի պայքարը

Հաջողված քաղաքացիական շարժման օրինակ է Մաշտոցի պուրակի պայքարը, որը պսակվել է ակտիվիստների հաղթանակով: 2011 թվականին Երևանի քաղաքապետարանը որոշում կայացրեց Աբովյան փողոցից ապամոնտաժված առևտրային տաղավարները տեղափոխելու Մաշտոցի պողոտային հարակից պուրակի հանրային

տարածք: Այս որոշումից դժգոհ մի խումբ ակտիվիստներ կազմակերպեցին բողոքի ակցիաներ՝ հանրային տարածքը հանրության համար պահպանելու նպատակով: 2012 թվականի փետրվար-մայիս ամիսներին տասնյակ ակտիվիստներ, իրենց վտանգի ենթարկելով, խափանեցին պուրակի տարածքում տաղավարների մոնտաժումը: Բողոքի ակցիաները մշտապես լուսաբանվում էին ԶԼՄ-ների կողմից՝ հանրային ուշադրությունը բևեռելով այս պայքարի վրա: Մաշտոցի պուրակի՝ որպես հանրային տարածքի վերանվաճման գործում առանձնահատուկ դեր խաղացին երիտասարդ կանայք, որոնք մշտապես հերթապահում էին այգում: Մարտի 8-ին նրանք, ճեղքելով ոստիկանական պատնեշը, ներխուժեցին մոնտաժված տաղավարներից մեկը՝ դրա ապակիներին փակցնելով պաստառներ և գրելով կոչեր:

Պայքարի ընթացքում քանիցս ոստիկանությունը փորձել է ուժ կիրառել ակտիվիստների նկատմամբ՝ նրանց տարածքից հեռացնելու նպատակով: Ակտիվիստներից շատերը ֆիզիկական վնասվածքներ են ստացել, սակայն միշտ պահպանել են խաղաղ անհնազանդության կանոնները՝ չտրվելով սադրանքների:

Ակտիվիստին բերման են ենթարկում Մաշտոցի պուրակից
Լուսանկարը՝ «hetq.am»-ի

Ապրիլի 29-ին ոստիկանությունը բերման ենթարկեց 6 քաղաքացիների, սակայն 3 ժամ անց ազատ արձակեց նրանց: Դրան հաջորդեց մայիսի 1-ին ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի և Երևանի նախկին քաղաքապետ Տարոն Մարգարյանի այցը Մաշտոցի պուրակ, որի ընթացքում Սարգսյանը, ըստ էության, ցուցում տվեց քաղաքապետին ապամոնտաժելու տաղավարները:

Քաղաքացիական պայքարի շնորհիվ փաստացի հնարավոր եղավ պահպանել հանրային սեփականությունը: Մաշտոցի պուրակի պայքարը ինչպես հանրային շահի պաշտպանության, այնպես էլ բնապահպանական շարժում էր, որը դրական ազդեցություն է ունեցել Հայաստանում քաղաքացիական գիտակցության ամրապնդման գործում:

Կանանց իրավունքների պաշտպանության շարժումը

Կանանց իրավունքների մասին Հայաստանում ավելի բուռն սկսեցին խոսել 2000-ական թվականների կեսերից, երբ ակտիվացան այդ ոլորտում գործող հասարակական կազմակերպությունները: Սակայն 2010 թվականի հոկտեմբերի 1-ին տեղի ունեցած մի դեպք վճռորոշ նշանակություն ունեցավ ոլորտում գործող կազմակերպությունների ու անհատների մոբիլիզացիայի համար: Այդ օրն իր ամուսնու և սկեսուրի կողմից սպանվել է 20-ամյա Զարուհի Պետրոսյանը: Նրա պատմությունը գրավեց ԶԼՄ-ների ուշադրությունը և խթանեց կանանց նկատմամբ բռնությունների դեմ պայքարը: Այդ դեպքից հետո կանանց իրավունքներով զբաղվող 7 հասարակական կազմակերպություններ միավորեցին իրենց ջանքերը՝ ստեղծելով «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան», որը հետագայում ընդարձակեց իր շարքերը և գրանցվեց որպես առանձին հասարակական կազմակերպություն:

Կոալիցիայի և մի շարք այլ խմբերի ու կազմակերպությունների ակտիվ գործունեության շնորհիվ կանանց իրավունքներն ու մասնավորապես կանանց նկատմամբ ընտանեկան բռնության խնդիրը

դարձան հանրային քննարկման առարկա: Կոալիցիայի անդամները հոկտեմբերի 1-ը հայտարարեցին Ընտանեկան բռնության դեմ պայքարի ազգային օր և ամեն տարի այդ օրը սկսեցին հանրային միջոցառումներ կազմակերպել՝ հանրության իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով: Կանանց իրավունքների պաշտպանները նախաձեռնեցին ու նպաստեցին մի շարք օրենսդրական փոփոխությունների, որոնցից կարևոր էր «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ու «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքների ընդունումը:



Կաղը կանանց նկատմամբ բռնության մասին իրազեկման ակցիայից
Լուսանկարը՝«epress.am»-ի

Կանանց իրավունքների պաշտպանության շարժումը չի սահմանափակվում «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա»-ի գործունեությամբ: Ֆեմինիստների չգրանցված խմբերը ևս տարաբնույթ գործունեություն են ծավալում, որը միտված է կանանց իրավունքների պաշտպանությանը: Այդ ոչ պաշտոնական խմբերը մարտի 8-ին սովորաբար երթեր են կազմակերպում, ստեղծում են ֆեմինիստական գրականություն և արվեստ, կատարում են ֆեմինիստական տեքստերի թարգմանություններ:

Մարտի 8-ին նվիրված երթ Երևանում
Լուսանկարը՝ «ankakh.com»-ի

Հայաստանում կանանց շարժման համար նշանակալի էր 2018 թվականին Երևանում ֆեմինիստական գրադարանի ստեղծումը, որն իր տեսակով եզակի է ոչ միայն Հայաստանում, այլև ողջ Կովկասում: Կանանց իրավունքների առաջխաղացման մեջ իր հսկայական ներ-

դրումն է ունեցել նաև «Կինը և հասարակությունը» հանդեսը, որին մենք կանդրադառնանք հաջորդ գլխում:

Կանանց իրավունքների պաշտպաններն ու ֆեմինիստներն ամենից հաճախ են թիրախավորվում Հայաստանում: Նրանց նկատմամբ առցանց հարձակումներ են տեղի ունենում գրեթե ամեն օր, նրանք բազմաթիվ սպառնալիքներ են ստանում ազգայնական-պահպանողական ուժերի կողմից: Այնուամենայնիվ, կանանց իրավունքների պաշտպանության շարժումն այսօր Հայաստանի ամենակայացած, կազմակերպված և հզոր շարժումներից է, որը հավակնում է փոխելու ոչ միայն օրենքներ ու համակարգեր, այլև հանրային կարծիքն ու կարծրատիպային մտածելակերպը:

ԳԼՈՒԽ 3. Մարդու իրավունքների լուսաբանումը

3.1. Մարդու իրավունքների լուսաբանումը միջազգային զանգվածային լրատվամիջոցներում

Մարդու իրավունքների խնդիրները մշտապես եղել են լրագրողների ուշադրության կենտրոնում: Զանգվածային լրատվամիջոցները հսկայական դեր են ունեցել մարդու իրավունքների ցանկացած շարժման կայացման գործում: Դրանք ոչ միայն լուսաբանել են հանուն իրավունքների պաշտպանության կազմակերպված պայքարները, այլև հաճախ լրագրողական հետաքննությունների միջոցով իրենք են խթանել տարատեսակ շարժումները: ԶԼՄ-ների հետևողական հրապարակումները մեծ դերակատարում ունեն ինչպես քաղաքա-տնտեսական, այնպես էլ իրավական ոլորտի բարեփոխումների հարցում:

Միջազգային հեղինակավոր ԶԼՄ-ներն այսօր ավելի մեծ ուշադրություն են դարձնում մարդու իրավունքների լուսաբանմանը՝ պատրաստելով այդ թեմայի վերաբերյալ փաստավավերագրական ֆիլմեր, հատուկ ռեպորտաժներ, հոդվածներ, էսսեներ և այլ լրագրողական նյութեր: Իհարկե, դեռևս ոչ բոլոր ԶԼՄ-ների համար է այս թեման առաջնահերթությունների շարքում, սակայն տարեցտարի մարդու իրավունքների վերաբերյալ հրապարակումները միջազգային մամուլում ավելանում են: Այս ենթագլխում ներկայացվում են մի քանի հեղինակավոր ԶԼՄ-ներում մարդու իրավունքների լուսաբանման օրինակներ, որոնք բացահայտում են աշխարհում առկա ընդհանուր միտումները:

«The Boston Globe» թերթի հայտնի հետաքննությունը

Կաթոլիկ եկեղեցու հոգևորականների կողմից երեխաների նկատմամբ սեռական բռնությունների ու ոտնձգությունների՝ ամերիկյան «The Boston Globe» թերթի հետաքննությունը լրագրողական գործունեության միջոցով մարդու իրավունքների պաշտպանության

լավագույն օրինակներից մեկն է: Թերթի հետաքննող խմբի կողմից արված բացահայտումների հետևանքով մոտ 250 հոգևորականներ հանրայնորեն մեղադրվեցին երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրելու մեջ: 2002 թվականին թերթը հարյուրավոր հրապարակումներ արեց սեռական բռնությունների վերաբերյալ՝ բացահայտելով, որ մանկապիղծ հոգևորականների պատճառով տուժել է ավելի քան 1000 մարդ: Լրագրողների աշխատանքը քաջալերեց հազարավոր մարդկանց՝ բարձրաձայնելու հոգևորականների կողմից իրենց նկատմամբ կատարված ոտնձգությունների մասին ոչ միայն Ամերիկայի տարբեր նահանգներում, այլև մի քանի տասնյակ երկրներում: 2003 թվականին «The Boston Globe»-ն արժանացավ Պուլիցերյան մրցանակի: 2015 թվականին հետաքննող լրագողների կատարած աշխատանքի մասին պատմող «Spotlight» ֆիլմը ևս մրցանակների է արժանացել:

Համատարած խնդիրը մեկ սպանության օրինակով

ԱՄՆ-ում և աշխարհում մեծ ազդեցություն ունեցող «The New York Times» թերթն իր թեմատիկ բաժինների շարքում առանձնացրել է «Մարդու իրավունքներ և մարդու իրավունքների խախտումներ» խորագիրը կրող բաժին, որի ներքո թերթի լրագրողներն ամենօրյա պարբերականությամբ լուսաբանում են մարդու իրավունքներին վերաբերող իրադարձություններ, ինչպես նաև պատրաստում են հեղինակային հոդվածներ: Այն ուշադրության կենտրոնում է պահում մարդու իրավունքների խնդիրն ինչպես Միացյալ Նահանգներում, այնպես էլ ամբողջ աշխարհում: Ավելի քան 140 երկրներում գործող արտասահմանյան թղթակիցների միջոցով «The New York Times»-ը հաճախ վեր է հանում այլ հասարակություններում և մշակույթներում առկա խնդիրները, որոնք լուրջ խոչընդոտ են մարդու իրավունքների պաշտպանության համար: Այդպիսի օրինակ է թերթի թղթակից Էլլեն

Բարրիի (Ellen Barry) հոդվածը՝[15] Հնդկաստանի գյուղերից մեկում տեղի ունեցած կնասպանության և այդ առնչությամբ ոստիկանության անգործության վերաբերյալ: Գիտայի ամուսինը նրան սպանել էր համագյուղացիների աչքի առաջ, որոնք որևէ կերպ չէին միջամտել, բացառությամբ մի հարևանուհու, որն էլ լրագրողին պատմել էր, թե ինչպես է տեղի ունեցել դեպքը: Ամուսինը փայտով բազմաթիվ հարվածներ էր հասցրել կնոջ գլխին, որը տեղում մահացել էր: Լրագրողը հնարավորություն էր ունեցել նաև հարցազրույց վերցնելու Գիտայի ամուսնուց, որը դեպքից մեկ տարի անց դեռ շարունակում էր ազատության մեջ մնալ և հասցրել էր երկրորդ անգամ ամուսնանալ: Լրագրողը նկարագրում է տեղական ոստիկանության անգործությունը, գյուղապետի ներգրավվածությունը սպանվածի մորը լռեցնելու, նրա կողմից բողոք չներկայացնելու հարցը լուծելու գործում: Գիտայի սպանության ու դրան հաջորդած իրադարձությունների նկարագրությունը բացահայտում է, թե որքան անպաշտպան են կանայք Հնդկաստանում, հատկապես՝ ոչ մեծ քաղաքներում:

Անձնական կյանքի պատմությունը՝ մարդու իրավունքների խախտումների լուսաբանման միջոց

Հեղինակավոր «The Atlantic» ամերիկյան ամսագիրը թեև առանձին խորագիր չունի՝ նվիրված մարդու իրավունքներին, այնուամենայնիվ, մարդու իրավունքների շուրջ աշխարհում տեղի ունեցող զարգացումները հանդեսի ուշադրության կենտրոնում են: «The Atlantic»-ի էջերում 2013-2014 թվականներին տարբեր երկրներում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ հոդվածաշարով հանդես է եկել «Human Rights Foundation»-ի հիմնադիր Թոր Հալվորսենը (Thor Halvorssen): 2019 թվականին «The Atlantic»-ը հանդես

[15] “How to Get Away With Murder in Small-Town India”, 19 օգոստոսի 2017 թ., https://www.nytimes.com/2017/08/19/world/asia/murder-small-town-india.html (մուտք՝ 20.02.2020):

եկավ հատուկ նախագծով՝ նվիրված ԱՄՆ-ում կանանց ընտրական իրավունքի 100-ամյա հոբելյանին: Սակայն ամսագրի՝ մարդու իրավունքների վերաբերյալ ամենահնչեղ հրապարակումը Պուլիցերյան մրցանակակիր, ֆիլիպինա-ամերիկացի հայտնի լրագրող Ալեքս Տիզոնի «Իմ ընտանիքի ստրուկը»[16] էսսեն էր: Տիզոնը էսսեում բացահայտել է սեփական ընտանիքի կողմից ստրկացված ֆիլիպինցի կնոջ պատմությունը՝ հանրայնացնելով իր անձնական կյանքի բազմաթիվ էջեր:

Լրագրողի զինվորական պապիկը 18-ամյա Լոլային (այդպես է Տիզոնի ընտանիքը կոչել իր ստրուկին) նվիրել էր իր դստերը, երբ վերջինս ընդամենը 12 տարեկան էր: Այդ օրվանից Լոլան դարձել էր լրագրողի մոր, հետագայում նաև իր և իր եղբայրների ու քույրերի դայակը, օգնականն ու ծառան: Նա ստիպված է եղել ընտանիքի հետ տեղափոխվել Ամերիկայի Միացյալ Նահանգներ, որտեղ 5 տարի բնակվելուց հետո սպառել է երկրում օրինական գտնվելու կարգավիճակը, սակայն լրագրողի ընտանիքը չի ցանկացել զրկվել իր ստրուկից և Լոլային գաղտնի է պահել իր տանը, որպեսզի վերջինս շարունակի անվճար ծառայություններ մատուցել իրենց: Լոլային թույլ չեն տվել հեռանալ ԱՄՆ-ից անգամ նրա ծնողների մահանալու ժամանակ: Ավելին, ինչպես դա հաճախ պատահել է ստրուկների հետ, նրա նկատմամբ բռնություն ու ճնշումներ են կիրառվել, որպեսզի նրա մտքով չանցնի ընդդիմանալ իր տերերին: Ալեքս Տիզոնը, որը մեծ եղբորից է առաջին անգամ լսել, որ Լոլան փաստացի իրենց ստրուկն է, իր ընտանիքի կողմից իրականացված այս ոճիրը նկարագրում է զգացմունքային ու սրտաբուխ տեքստով՝ ընդունելով սեփական մեղքի բաժինը Լոլային ժամանակին չազատագրելու մեջ:

Ալեքս Տիզոնի էսսեն թեև ամբողջությամբ հիմնված է անձնական պատմության վրա, և դրանում որևէ ընդհանրացում չի արվում,

---

[16] “My Family’s Slave”, հունիս, 2017 թ. https://www.theatlantic.com/magazine/archive/2017/06/lolas-story/524490/ (մուտք՝ 20.02.2020):

այնուամենայնիվ, այն աշխատողների շահագործման խնդիրը քննարկման առարկա դարձնելու առիթ է եղել: «Իմ ընտանիքի ստրուկին» ի պատասխան՝ «The Atlantic»-ում հրապարակվել են մեկնաբանություններ և վերլուծություններ, որոնք Լոլայի պատմությունը կապում են ժամանակակից ստրկացման՝ աշխատողների շահագործման հետ՝ օրինակ բերելով ֆիլիպինցի և ինդոնեզիացի հազարավոր կանանց, որոնք իրենց և իրենց ընտանիքի օրահացը վաստակելու համար ստիպված են լինում լքել երկիրը և դառնալ հարուստ ընտանիքների տնային աշխատողներ: Վերջիններս հազվադեպ են տեսնում իրենց ընտանիքներին, հաճախ՝ երկու տարին մեկ անգամ, կարճ ժամանակով:

«Al Jazeera»-ի հեղինակային նյութերը

«Al Jazeera Media Network»-ի մաս կազմող, անգլերենով թողարկվող «Al Jazeera English»-ն ունի «Մարդու իրավունքներ» խորագրով բաժին, որտեղ լուսաբանում է մարդու իրավունքների խախտումների դեպքեր՝ ինչպես սեփական թղթակիցների հաղորդած տեղեկատվության, այնպես էլ այլ ԶԼՄ-ների հրապարակած լուրերի հիման վրա: Այստեղ հաճախակի են լուսաբանվում զանգվածային իրադարձությունները, ինչպիսիք են երթերն ու հանրահավաքները: «Al Jazeera English»-ը հաճախ հոդվածներ է պատրաստում սեփական նախաձեռնությամբ, առանց տեղեկատվական առիթի: Նման օրինակ է 2019 թվականին լույս տեսած հոդվածը[17], որը բարձրաձայնում է Կենտրոնական Ամերիկայի երկրներից մեկում՝ Էլ Սալվադորում, դեռահասների շրջանում հղիության, սեռական բռնության և սեռական կրթության բացակայության խնդիրները: Հեղինակը մի 13-ամյա աղջնակի բռնաբարության և ծննդաբերության պատմության

[17] “The 'vicious cycle' driving teen pregnancy in El Salvador”, 22 հուլիսի 2019 թ., https://www.aljazeera.com/indepth/features/vicious-cycle-driving-teen-pregnancy-el-salvador-190708154954220.html (մուտք՝ 20.02.2020):

միջոցով բացահայտում է երկրում տիրող վիճակը՝ ներկայացնելով դեռահասների շրջանում հղիության ապշեցնող ցուցանիշները: Էլ Սալվադորում արգելված է հղիության արհեստական ընդհատումը, որի պատճառով բռնաբարության հետևանքով հղիացած դեռահասները ստիպված են լինում ծննդաբերել: Արդյունքում բազմաթիվ դեռահաս աղջիկներ դուրս են մնում դպրոցից՝ չստանալով անգամ միջնակարգ կրթություն: Բացի հղիության արհեստական ընդհատման արգելքից՝ հոդվածում ներկայացված են նաև Էլ Սալվադորում սեռական կրթության բացակայությունն ու պահպանողական հասարակությունում առկա գենդերային կարծրատիպերը, որոնք ևս պատճառ են դառնում, որ բռնության ենթարկված աղջիկները լքեն ուսումնական հաստատությունները:

«Al Jazeera» հեռուստաալիքը ևս առանձնակի ուշադրություն է հատկացնում մարդու իրավունքներին: Մասնավորապես «The Stream» հաղորդման շրջանակներում հաճախակի քննարկվում են մարդու իրավունքներին վերաբերող խնդիրներ: Քննարկումը կազմակերպվում է հեռակա կարգով՝ տեսազանգի միջոցով: Հաղորդավարները կապ են հաստատում տարբեր երկրներում գտնվող անձանց հետ՝ նրանց հետ քննարկելու որևէ արդիական խնդիր: «The Stream»-ի եթերում հաճախ են լինում իրավապաշտպաններ, վերլուծաբաններ, տարբեր ոլորտների փորձագետներ, ինչպես նաև քաղաքացիական ակտիվիստներ և քննարկման առարկա խնդրին բախված անձինք: Հաղորդումը թողարկվում է ուղիղ եթերում, ինչը հնարավորություն է տալիս երբեմն եթերում ընթերցելու տվյալ պահին սոցիալական ցանցերում թեմայի շուրջ գրված մեկնաբանությունները: Հաղորդման նպատակն է քննարկել խնդիրը՝ ներկայացնելով տարբեր կարծիքներ:

«Deutsche Welle»-ի վավերագրական ֆիլմերը

Գերմանական «Deutsche Welle»-ի միջազգային թողարկումներում մեծ տեղ են զբաղեցնում մարդու իրավունքների խախտումների

վերաբերյալ նորությունները: ՁԼՄ-ի առցանց անգլալեզու հրապարակումներում գրեթե ամեն օր տեղ են գտնում նորություններ մարդու իրավունքների վերաբերյալ: «Deutsche Welle»-ի լրատվական թողարկումներում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրը հիմնականում որևէ տեղեկատվական առիթով է հիշատակվում, սակայն այն պատրաստում է նաև վավերագրական ֆիլմեր, որոնցում ավելի հանգամանալից ու խորքային անդրադարձ է լինում իրավունքների ոտնահարման դեպքերին աշխարհի տարբեր երկրներում: Նման ֆիլմերը, սակայն, փոքր թիվ են կազմում «Deutsche Welle»-ի վավերագրական ֆիլմերի շարքում:

Մարդու իրավունքների վերաբերյալ փաստավավերագրական աշխատանքի լավ օրինակ է 2017 թվականին թողարկված «For All the World to See. Witnesses of Violence» ֆիլմը, որն անդրադառնում է կանանց նկատմամբ բռնություններին: Ֆիլմի հեղինակը նկարահանումներ է իրականացրել տարբեր երկրներում՝ Բենինում, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում, Բանգլադեշում: Բոլոր երկրներում էլ նկարահանող խմբին հաջողվել է գտնել կանանց, որոնք տեսախցիկների առջև պատմել են իրենց նկատմամբ կիրառվող սեռական ու ֆիզիկական բռնությունների մասին: Այդ պատմությունները այնքան սարսափելի են, որ եթե փաստեր չներկայացվեին (մարմնի վրա առկա բռնության հետքեր, խոշտանգված մարմնի լուսանկարներ), դիտողը դժվարությամբ կհավատար, որ մեր օրերում նման բռնություններ են տեղի ունենում: Ֆիլմում պատկերված են նաև տղամարդիկ, որոնք ասում են, որ կանայք իրենց սեփականությունն են և իրավունք չունեն ինքնուրույն որոշումներ կայացնելու: Ֆիլմը հրաշալիորեն վավերագրում է այն իրականությունը, որում կանայք ստորադասված են տղամարդկանց: «Deutsche Welle»-ի այս թողարկումն ապացուցում է, որ կանանց նկատմամբ բռնությունն ամենուր է՝ անկախ երկրի մշակույթից, տնտեսական վիճակից և քաղաքական կառուցվածքից:

BBC-ի կրթական գործառույթը

Բրիտանական BBC-ն գրեթե ամենօրյա հաճախականությամբ լուսաբանում է մարդու իրավունքներն ամբողջ աշխարհում: Բացի իրադարձային ու հեղինակային նյութերից՝ BBC-ն նաև կրթական ծրագիր ունի մարդու իրավունքների վերաբերյալ: Իր «Կրոնական ուսումնասիրություններ» խորագրի ներքո ՁԼՄ-ի կայքը ներկայացնում է մարդու իրավունքները տարբեր կրոններում՝ կենտրոնանալով սոցիալական արդարության, խտրականության ու նախապաշարմունքների, հարստության և աղքատության վրա: Այսպիսով, BBC-ն ոչ միայն լուսաբանում է մարդու իրավունքները, այլև կրթական գործառույթ է իրականացնում:

3.2. Մարդու իրավունքների լուսաբանումը հայաստանյան զանգվածային լրատվամիջոցներում

Հայաստանյան զանգվածային լրատվամիջոցներում մարդու իրավունքների ոտնահարման վերաբերյալ հրապարակումներ լինում են ամեն օր: Թեև դրանք հաճախ չեն ներկայացվում որպես մարդու իրավունքների լուսաբանում, այնուամենայնիվ, բազմաթիվ հրապարակումների հիմքում հենց իրավունքին առնչվող խնդիրներ են: Այդ հրապարակումների մեծ մասի համար հիմք են տեղեկատվական առիթները՝ բողոքի ցույցեր, դատական նիստեր, տարատեսակ ակցիաներ: Փոխարենը սակավաթիվ են սեփական նախաձեռնությամբ պատրաստված հեղինակային նյութերը: Այլ կերպ ասած՝ հայաստանյան ԶԼՄ-ների մեծ մասի համար իրավապաշտպան լրագրությունն առաջնահերթություն չէ:

Սակայն 2000-ականներից սկսած՝ ստեղծվել են ԶԼՄ-ներ, որոնց հրապարակումների զգալի մասի նպատակը Հայաստանում մարդու իրավունքներին առնչվող խնդիրների վրա ուշադրություն հրավիրելն է: Այդ ԶԼՄ-ները հիմնականում ստեղծվել են հասարակական կազմակերպությունների կողմից և չեն պատկանում հիմնահոս (mainstream) ԶԼՄ-ների թվին: Այս ենթագլխում վերլուծվում է ինչպես հիմնահոս, այնպես էլ հատուկ (այս ենթագլխում այսպես կանվանենք ԶԼՄ-ների երկրորդ խումբը) ԶԼՄ-ներում մարդու իրավունքների լուսաբանումը:

Մարդու իրավունքները հայաստանյան հեռուստառադիոալիքների եթերում

Այս խորագրի ներքո ուսումնասիրվել են Հանրային հեռուստաընկերության և ռադիոյի, ինչպես նաև «Ազատություն» ռադիոկայանի, «Արմենիա ԹիՎի» և «Շանթ» հեռուստաալիքների լրատվական թողարկումներն ու մյուս հաղորդումները: Ընդհանուր առմամբ Հանրային հեռուստաընկերությունն ու ռադիոն մարդու իրավունքնե-

րի վերաբերյալ հաղորդումների թվով և բովանդակությամբ դրականորեն տարբերվում են ուսումնասիրված մյուս հեռուստառադիոալիքներից:

Հանրային հեռուստաընկերությունը թողարկում է 2 հաղորդում, որոնց նպատակը թեև մարդու իրավունքների խախտումների մասին ուղղակիորեն բարձրաձայնելը չէ, սակայն դրանց շնորհիվ հանրությունն իրազեկվում է մարդու իրավունքների՝ երկրում առկա խնդիրների, ինչպես նաև պաշտպանական մեխանիզմների մասին: «Մեկ պատուհան» հաղորդման յուրաքանչյուր թողարկում նվիրված է որևէ խնդրի, որին կարող է բախվել ցանկացած քաղաքացի: Խնդիրը ներկայացվում է իրական պատմության միջոցով: Ընտրվում է հաղորդման հերոս՝ տվյալ խնդիրն ունեցող անձ, որի պատմության միջոցով էլ ներկայացվում են իրավիճակը և խնդրի հնարավոր լուծումները: Հաղորդման հերոսը տեսախցիկների առջև ստանում է խորհրդատվություն փաստաբանի և/կամ այլ մասնագետի կողմից: Այդ խորհրդատվությունը ոչ միայն օգնում է լուծելու տվյալ անձի խնդիրը, այլև ուսուցողական բնույթ ունի նմանատիպ իրավիճակում հայտնված հեռուստադիտողների համար:

Հանրային հեռուստաընկերության մեկ այլ՝ «Հանրային քննարկում» հաղորդման շրջանակներում երբեմն խոսվում է մարդու իրավունքների մասին՝ տաղավար հրավիրված հյուրերի հետ քննարկման միջոցով: Հաղորդման թողարկումների մեծ մասը նվիրված է հիմնականում քաղաքական խնդիրներին, որոնք տվյալ պահին արդիական են երկրում, օրինակ, Երեխաների պաշտպանության օրվա առթիվ հաղորդավարը երեխաների էր հրավիրել տաղավար և հենց նրանց հետ էր քննարկել երեխաների իրավունքները, իսկ Մարտի 8-ին տաղավարում հյուրընկալվել էին կանայք՝ քննարկելու կանանց իրավունքները և այլն:

Հանրային հեռուստաընկերության լուրերի թողարկումը խիստ հազվադեպ է անդրադառնում երկրում մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող խնդիրներին. բացառություն է Կառավարության կամ պետական այլ մարմինների կողմից որևէ գործունեության

լուսաբանումը, որը կարող է այս կամ այն կերպ առնչվել մարդու իրավունքներին: Լուրերի թողարկումներում հաճախ տեղ են գտնում տվյալ օրը տեղի ունեցած բողոքի ակցիաները, որոնք հիմնականում լուսաբանվում են մակերեսորեն՝ առանց խնդրի լիարժեք ներկայացման: Առավել հաճախ ներկայացվում են այլ երկրներում մարդու իրավունքների խախտման փաստեր, օրինակ՝ Ադրբեջանում ապրող էթնիկ խմբի՝ թալիշների ինքնորոշման իրավունքի շարունակական խախտումները, միջազգային լրահոսում տեղ գտած՝ մարդու իրավունքներին առնչվող այլ տեղեկություններ:

«**Արմենիա ԹիՎի**»-ի ծրագրում չկա մարդու իրավունքներին նվիրված որևէ հաղորդում, իսկ լուրերի թողարկման շրջանակներում մարդու իրավունքներին սովորաբար անդրադառնում են մակերեսորեն՝ պայմանավորված որևէ իրադարձության, հիմնականում՝ բողոքի ակցիաների լուսաբանմամբ: Մարդու իրավունքների վերաբերյալ առավել մանրամասն և վերլուծական նյութերը հազվադեպ են հանդիպում: Նույնը վերաբերում է նաև «**Շանթ**» հեռուստաընկերությանը, որի լրատվական թողարկումներում, սակայն, երբեմն տեղ են գտնում առողջության իրավունքի, սննդի անվտանգության և առողջ շրջակա միջավայրի վերաբերյալ հարցազրույցներ ու ռեպորտաժներ: Հեռուստաընկերությունը 2017-2018 թվականներին պատրաստել և թողարկել է «Զրույցներ կանանց իրավունքների մասին» հաղորդաշարը, որը ֆինանսավորվել է «Կանանց իրավունքների կենտրոն» հասարակական կազմակերպության ծրագրերից մեկի շրջանակներում: Երբ ֆինանսավորումը դադարեցվել է, դադարեցվել է նաև հաղորդման հեռարձակումը: Ակնհայտ է, որ մասնավոր հեռուստաընկերությունները շահագրգռված չեն սեփական միջոցներ ներդնելու մարդու իրավունքների լուսաբանման համար:

Հանրային ռադիոյի «Ձեր փաստաբանը» հաղորդաշարը բարձրացնում է ունկնդիրների իրազեկվածությունը մարդու իրավունքների մասին: Հաղորդումը նախկինում վարում էր փաստաբան Արամ Վարդևանյանը, որը բացատրում և մեկնաբանում էր մարդու այս կամ այն իրավունքը: Հաղորդավարի փոփոխությունից հետո Հանրային

ռադիոյի տաղավարում հյուրընկալվում են տարբեր ոլորտների մասնագետներ և քննարկում մարդու իրավունքներին առնչվող հարցեր: Հանրային ռադիոյի մեկ այլ՝ «Քո ձայնը» հաղորդման շրջանակներում ևս տաղավար հրավիրված տարբեր բանախոսների հետ երբեմն քննարկվում են մարդու իրավունքներին վերաբերող հարցեր: Իսկ լուրերի թողարկման շրջանակներում հազվադեպ են լուսաբանվում մարդու իրավունքներին վերաբերող թեմաները: Գրեթե բացակայում են սեփական նախաձեռնությամբ պատրաստված ռեպորտաժները:

«Ազատություն» ռադիոկայանի կայքն ունի «Իրավունք» խորագիրը կրող բաժին, որտեղ տեղադրվում են մարդու իրավունքներին առնչվող նյութերը: Դրանք հիմնականում քաղաքական գործիչների ներգրավվածությամբ դատական գործերի լուսաբանումներ են կամ պաշտոնական լրահոսում տեղ գտած լուրեր: Ռադիոկայանը երբեմն սեփական նախաձեռնությամբ անդրադառնում է բանակում մարդու իրավունքների պաշտպանությանը, Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճիռներին և մարդու իրավունքներին վերաբերող այլ թեմաների:

Մարդու իրավունքները առցանց ԶԼՄ-ների հրապարակումներում

Հայաստանյան առցանց լրատվամիջոցներում մարդու իրավունքների լուսաբանումը գրեթե նույնական է բոլոր հիմնահոս լրատվական կայքերում: Դրանցից շատերը թեև ունեն «Իրավունք» խորագիրը կրող բաժին, բայց սեփական նախաձեռնությամբ գրեթե չեն լուսաբանում մարդու իրավունքները Հայաստանում: Փոխարենը դրանցում տեղ են գտնում իրադարձային նորություններ, որոնց մեջ գերակշռում են Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի տարածած հայտարարությունները, ոստիկանության կողմից պատրաստված մամուլի հաղորդագրությունները և պաշտոնական այլ տեղեկատվություններ, որոնց մեծ մասը մարդու իրավունքների հետ ուղղակի կապ չունի: Լրատվական կայքերը հաճախակի լուսաբանում

են դատական նիստեր, սակայն ոչ թե արդար դատաքննության իրավունքին առնչվող հարցեր բարձրաձայնելու նպատակով, այլ որովհետև այդ դատավարություններում ներգրավված են լինում քաղաքական և հասարակական գործիչներ, պետական նախկին ու ներկա պաշտոնյաներ:

Մարդու իրավունքների լուսաբանումը հատուկ ՁԼՄ-ներում

Հայաստանում գործող մի շարք հասարակական կազմակերպություններ ստեղծել են լրատվամիջոցներ, որոնց համար մարդու իրավունքների լուսաբանումն առաջնահերթություն է: Այս լրատվամիջոցները հիմնականում չեն լուսաբանում ամենօրյա իրադարձություններ, ունեն սեփական օրակարգը, որն էլ առաջ են տանում իրենց աշխատանքով: Այդ լրատվամիջոցներն են «forrights.am», «epress.am», «womennet.am» և «hetq.am» կայքերը: Այդպիսի լրատվամիջոց էր նաև «hra.am» կայքը, որը վերջերս դադարեցրել է իր գործունեությունը:

«**Forrights.am**» կայքը Հայաստանում իրավապաշտպան լրագրության լավագույն օրինակներից է: Այս առցանց լրատվամիջոցը լուսաբանում է բացառապես մարդու իրավունքներին առնչվող թեմաներ: Կայքի բոլոր հրապարակումներն ունեն մեկ նպատակ՝ պաշտպանել մարդու իրավունքները լրագրության միջոցով (այդպիսի նպատակ ունի նաև կայքի հիմնադիր «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» հասարակական կազմակերպությունը): Այս լրատվամիջոցի նյութերի մեծ մասը հեղինակային է և հաճախ որևէ առնչություն չունի օրվա արդիական թեմաների հետ:

«Forrights.am»-ն ապահովում է մարդու իրավունքների մարդակենտրոն լուսաբանումը՝ խնդիրը ներկայացնելով այն կրողների պատմությունների միջոցով:

«Forrights.am»-ի ուշադրության կենտրոնում են փակ համակարգերում մարդու իրավունքների խախտումները: Սա միակ լրատվամիջոցն է, որն ամենօրյա ակտիվությամբ լուսաբանում է զինծառայողների և դատապարտյալների իրավունքները՝ հաճախ հանդիպումներ կազմակերպելով մահացած զինվորների և կալանավորված անձանց ընտանիքի անդամների հետ: «Forrights.am»-ի գործունեության շնորհիվ հնարավոր է եղել փրկել մարդկային կյանքեր, աջակցել անձանց առողջության վերականգնման և արդարության հաստատման հարցում, վերականգնել բազմաթիվ անձանց խախտված իրավունքները: Կայքի գլխավոր խմբագիր, լրագրող, իրավապաշտպան Ժաննա Ալեքսանյանը Հայաստանում իրավապաշտպան լրագրության առաջամարտիկներից է:

«Womennet.am» կայքը «Կինը և հասարակությունը» (նախկինում՝ «Կինը և քաղաքականությունը») հանդեսի առցանց տարբերակն է:

«Womennet.am»-ը հայաստանյան միակ ԶԼՄ-ն է, որի գործունեությունն ամբողջությամբ նվիրված է կանանց իրավունքների պաշտպանությանն ու գենդերային անհավասարության վերացմանը:

Թերթի տպագիր տարբերակը լույս է տեսնում ամսական պարբերականությամբ (երբեմն տպագրությունը դադարեցվում է ֆինանսների բացակայության պատճառով) և տարածվում է անվճար: Առցանց տարբերակը շատ ավելի հարուստ է բովանդակությամբ:

«Womennet.am»-ը կանանց իրավունքների վերաբերյալ հայալեզու տեղեկատվության առցանց շտեմարան է: Այստեղ կարելի է գտնել վերլուծություններ, հետազոտություններ, մեկնաբանություններ, հոդվածներ, հարցազրույցներ և ռեպորտաժներ: Այն մեծ ուշադրություն է դարձնում կանանց քաղաքական ու տնտեսական մասնակցությանը: «Womennet.am»-ը միակ ԶԼՄ-ն է, որը մշտապես լուսաբանում է Հայաստանի խոշոր և փոքր համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին առաջադրված կին թեկնածուների գործունեությունը: Կայքն իր գրեթե տասնամյա

աշխատանքով իր նպաստն է ունեցել կարծրատիպեր կոտրելու, կանանց դերակատարումն ընդգծելու, նրանց առաջխաղացումը խրախուսելու հարցերում: «Կինը և հասարակությունը» կայքի ուշադրության կենտրոնում են նաև օրենսդրական բարեփոխումները, որոնք վերաբերում են կանանց և երեխաների իրավունքներին՝ իրազեկելով հանրությանը կարևոր փոփոխությունների մասին: Այն նաև արձագանքում է կանանց նկատմամբ խտրականության դեպքերին, հատկապես երբ դրանք ունենում են հանրային նշանակություն:

«Epress.am» կայքը տարբերվում է իր նյութերի թեմաների ընտրությամբ և բովանդակությամբ: Կայքում տեղ են գտնում այնպիսի թեմաներ, ինչպիսիք են բանակը, բանտը, կանանց իրավունքները, «ԼԳԲՏ+»-ը և այլն: «Epress.am»-ում հրապարակվում են ինչպես սեփական նյութերը, այնպես էլ արտատպումներ, որոնք, սակայն, ոչ թե զուտ իրադարձային, այլ ընտրված նյութեր են՝ պայմանավորված բովանդակությամբ ու նշանակությամբ:

«Epress.am»-ը մի շարք տեսահարցազրույցներ է անցկացրել խոցելի խմբերի ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում խնդրի անմիջական կրողներն իրենք են բարձրաձայնել մարդու իրավունքների խախտումների մասին:

ՁԼՄ-ն ուշադրության կենտրոնում է պահում կանանց իրավունքները՝ հաճախակի լուսաբանելով ընտանեկան բռնության գործերով դատական նիստերը:

«Hetq.am» կայքը «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպության ստեղծած լրատվամիջոցն է: Այն միակն է, որ մշտապես իրականացնում է լրագրողական հետաքննություններ: Դրանք հաճախ ուղղակիորեն չեն առնչվում մարդու իրավունքներին: Դրանց մեծ մասը վերաբերում է հանրային իշխանությունների կողմից թույլ տրված չարաշահումներին, որոնք, սակայն, ինքնին արդյունավետ կառավարման իրավունքի խախտումներ են, կամ առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունքին: Հետքը «Իրավունք» խորագրով բաժնում առանձնացրել է «Մարդու իրավունքներ» ենթաբա-

ժինը, որի ներքո զետեղվում են մարդու իրավունքներին վերաբերող նյութերը: Այստեղ հրապարակվում են ինչպես հեղինակային նյութեր, այնպես էլ իրադարձային լուրեր ու Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հայտարարություններ:

«Hetq.am»-ում նյութեր է հրապարակում նաև ցմահ դատապարտյալ Մհեր Ենոքյանը: Սա բացառիկ երևույթ է հայաստանյան լրագրության մեջ, երբ ԶԼՄ-ն ունի սեփական թղթակիցը կալանավայրում:

«Հետքի» հետաքննությունները բազմիցս նպաստել են քրեական գործերի հարուցմանը, հանցավոր գործարքների բացահայտմանն ու հանրայնացմանը: Կայքի նյութերում խնդիրը խորքային և համակողմանիորեն է ներկայացվում: Այն հաճախակի օգտվում է սեփական աղբյուրներից, որոնք լրագրողներին բացառիկ տեղեկատվություն են փոխանցում:

Վերլուծելով հայաստանյան ԶԼՄ-ներում մարդու իրավունքների լուսաբանումը՝ կարող ենք արձանագրել, որ դրանցում, բացառությամբ հատուկ ԶԼՄ-ների, մարդու իրավունքների լուսաբանումը մշտական և խորքային չէ: Հիմնահոս ԶԼՄ-ներում հազվադեպ են հրապարակվում սեփական նախաձեռնությամբ նյութեր, մարդու իրավունքների լուսաբանման հարցում ակնհայտ է սկզբունքայնության ու հետևողականության պակասը: Հիմնահոս լրատվամիջոցների համար մարդու իրավունքների լուսաբանումն առաջնահերթություն չէ: Այս բացը մասամբ լրացնում են իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների կողմից ստեղծված առցանց ԶԼՄ-ները, որոնք հաճախ ֆինանսական խնդիրներ են ունենում և չեն կարողանում ապահովել լրատվամիջոցի անդադար աշխատանքը:

3.3. Ինչպե՞ս լուսաբանել մարդու իրավունքները. սկզբունքներ և տեղեկատվության աղբյուրներ

Ի՛ վնասիր. սա է մարդու իրավունքների լուսաբանման գլխավոր սկզբունքը: Հաճախ լրագրողները, ցանկանալով օգտակար լինել այս կամ այն անձին իր խախտված իրավունքները վերականգնելու հարցում, անզգուշաբար թույլ են տալիս այնպիսի սխալներ, որոնք վնասում են տվյալ անձնավորությանը: Այդպիսի սխալներից մի քանիսը կապված են տեղեկատվության աղբյուրի բացահայտման հետ, հատկապես երբ խոսքը փակ հաստատություններում կամ փոքր համայնքներում ապրող անձանց մասին է: Օրինակ՝ եթե լրագրողը տեղեկատվություն է ստանում X զորամասի ժամկետային զինծառայողից, որը պատմում է զորամասում տիրող ապօրինությունների մասին, պետք է տեղեկատվությունն այնպես շարադրի, որ անհնարին կամ չափազանց բարդ լինի պարզել, թե որ զինվորից է ստացվել տեղեկատվությունը, օրինակ՝ չպետք է նշի զինծառայողի ստորաբաժանումը: Տեսանյութ կամ ձայնագրություն հեռարձակելիս, բնականաբար, պատկերը և ձայնը պետք է այնպես փոխել, որպեսզի զրուցակիցն անճանաչելի մնա: Նույն սկզբունքը պետք է կիրառել կալանավայրերի վերաբերյալ ստացված տեղեկատվության դեպքում (փակ հաստատություններում մարդու իրավունքների լուսաբանման խնդրին առավել մանրամասն կանդրադառնանք վերջին ենթագլխում): Փոքր գյուղական համայնքներում ապրող մարդկանց պատմությունները լուսաբանելիս ևս պետք է զգույշ լինել, քանի որ նրանք հեշտ ճանաչելի են համագյուղացիների կողմից: Օրինակ՝ երբ լուսաբանվում է որևէ նույնասեռականի իրավունքների խախտումը, և նա չի ցանկանում բացահայտել իր անձը, չպետք է նշել, թե որ գյուղից է նա, քանի որ, ելնելով նրա մյուս տվյալներից (սեռ, տարիք, կրթություն և այլն), համագյուղացիները կարող են հեշտությամբ հասկանալ, թե ով է նա, ինչը կարող է խնդիրներ ստեղծել ինչպես տվյալ անձի, այնպես էլ նրա ընտանիքի համար:

Առանձնակի զգուշություն է պետք ցուցաբերել, երբ խոսքը մարդու կյանքի և առողջության մասին է: Օրինակ՝ եթե որևէ անձի դեմ մահափորձ է կատարվել, սակայն վերջինս ողջ է մնացել, այդ մասին տեղեկատվություն հաղորդելիս ցանկալի չէ նշել, թե կոնկրետ որ բժշկական հաստատությունում է գտնվում նա այդ պահին, քանի որ այդպիսով մահափորձ կատարած անձը կարող է հեշտությամբ գտնել նրան և իր մտադրությունն ավարտին հասցնել: Հաճախ լինում են դեպքեր, երբ ընտանեկան բռնության հետևանքով կինը ստիպված է լինում բառացիորեն փախչել ամուսնուց և ապաստանել որևէ հարազատի կամ ընկերոջ տանը: Այդ կնոջ պատմությունը ներկայացնելիս պետք է խուսափել նրա գտնվելու վայրի մասին որևէ տեղեկատվություն հրապարակելուց, քանի որ փոքրիկ ակնարկն անգամ կարող է օգնել բռնարարին գտնելու նրան և կրկին բռնություն կիրառելու:

Լրագրողը կարող է որոշել անանուն պահել իր աղբյուրը, եթե անգամ վերջինս պատրաստ է հրապարակելու իր տվյալները: Հնարավոր է՝ տվյալ անձը չի պատկերացնում, թե իր և իր ընտանիքի համար ինչպիսի հետևանքներ կարող են լինել, եթե իր անունով հանդես գա և հանրայնացնի իր ունեցած տեղեկատվությունը:

Տվյալ դեպքում շահերի բախում է առաջանում. մի կողմից լրագրողը ցանկանում է, որ իր ընթերցողը/դիտողը/ունկնդիրը վստահի իրեն, մյուս կողմից էլ գիտակցում է, որ աղբյուրի անունը հրապարակելու դեպքում կարող է վնասել վերջինիս: Այս դեպքում որոշում կայացնելիս լրագրողը պետք է առաջնորդվի բարոյական չափանիշներով, գործի իր պատասխանատվության գիտակցությամբ, քանի որ իրավական առումով որևէ մեկը չի կարող նրան պատասխանատվության ենթարկել, եթե զրուցակիցն ինքն է ցանկացել հրապարակել իր անունը (խոսքը չափահաս ու մեղսունակ անձանց մասին է): Սեփական նյութի նկատմամբ հանրային վստահությո՞ւնն է առավել կարևոր, թե՞ տվյալ անձի անվտանգությունը: Գոյություն չունեն պատրաստի պատասխաններ. յուրաքանչյուր դեպքում լրագրողն ինքն է որոշում կայացնում՝ ելնելով իրավիճակից:

Ցանկացած պարագայում լրագրողն ինքն է հրապարակված տեղեկատվության պատասխանատու, ուստի պետք է այնպես գործի, որ իր հրապարակումները չվնասեն որևէ անձի:

Մարդու իրավունքների լուսաբանումը պետք է մարդակենտրոն լինի՝ հիմնված «մարդը բարձրագույն արժեք է» սահմանադրական սկզբունքի վրա: Ցանկացած խնդրի լուսաբանում պետք է ներառի առնվազն մեկ անձի պատմություն, որի իրավունքները խախտվել են, և որը խնդրի կրողն է: Նրա պատմության շնորհիվ մենք կարող ենք բացել խնդիրը՝ անհատականից անցնելով հանրայինի: Ուստի լրագրողի համար թիվ մեկ աղբյուրը մարդն է՝ իր հոգսերով, խնդիրներով, դժվարություններով: Իր նյութի համար հերոս ընտրելիս լրագրողը պետք է փորձի գտնել նոր մարդկանց, որոնք նախկինում որևէ ԶԼՄ-ով չեն ներկայացրել իրենց խնդիրը և հանրությանը ծանոթ չեն: Երբեմն լրագրողները նույն խնդիրը լուսաբանելիս զրուցում են այն անձի հետ, ով նախկինում բազմիցս բարձրաձայնել է դրա մասին: Մի կողմից սա ի ցույց է դնում լրագրողական ծուլությունն ու նոր աղբյուրներ գտնելու անկարողությունը, մյուս կողմից էլ կարող է կասկածի տակ դնել տվյալ խնդրի կարևորությունն ու ընդգրկունությունը. եթե խնդիրն այդքան կարևոր է, ինչո՞ւ է միշտ նույն անձը խոսում այդ մասին, որտե՞ղ են տվյալ խնդրից տուժած այլ անձինք: Իհարկե, անգամ մեկ տուժողի առկայությունն արդեն իսկ բավարար է, որպեսզի լրագրողը լուսաբանի այդ խնդիրը, բայց մարդու իրավունքների խախտումները սովորաբար համատարած բնույթ են կրում, և որքան տեսանելի է տվյալ խնդիրը ներկայացվում լրագրողի նյութում, այնքան ավելի հավանական է, որ այն կլուծվի:

Մարդու իրավունքների լուսաբանման համար էական է հետևողականությունը: Իրավախախտումների վերաբերյալ մեկ հրապարակումն ամենայն հավանականությամբ էական նպաստ չի ունենա առկա խնդիրների լուծման հարցում:

Հատկապես, այն դեպքում, երբ իրավախախտումներն ունեն պարբերական բնույթ, լրագրողը պետք է դրսևորի հետևողականություն և պարբերաբար անդրադառնա դրան՝ մշտապես ներառելով նոր աղբյուրներ:

Մեկ այլ կարևոր սկզբունք է ճիշտ հասցեատերեր գտնելն ու նրանց հարցեր ուղղելը: Մարդու իրավունքների խախտումների կամ դրանց ոչ լիարժեք պաշտպանության պատասխանատուն միշտ պետությունն է: Անգամ երբ մարդու իրավունքները մեկ այլ ֆիզիկական անձի կողմից են խախտվել, դարձյալ դրա պատասխանատուն պետությունն է՝ այն պահից սկսած, երբ պետական մարմիններից որևէ մեկն իրազեկվել է կատարված իրավախախտման մասին: Ուստի ցանկացած պարագայում լրագրողը պետք է դիմի պետական մարմիններին՝ ստանալու պատասխան այս կամ այն իրավունքի խախտման դեպքերի վերաբերյալ: Պետք է ճիշտ կողմնորոշվել, թե ով է կոնկրետ խնդրի պատասխանատուն և դիմել ճիշտ հասցեատիրոջը (օրինակ՝ եթե զինծառայողի իրավունք է խախտվել, դիմել Պաշտպանության նախարարություն կամ զինդատախազություն, եթե դատապարտյալի մասին է խոսքը, դիմել Արդարադատության նախարարություն, երբ մարդկանց կենսապայմաններն են անբավարար, դիմել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, եթե կրթության իրավունքն է խախտվել, դիմել համապատասխան կրթական համալիր կամ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն և այլն): Երբ գտնվում է ճիշտ հասցեատերը և ճիշտ հարցեր է ստանում լրագրողից, իրավիճակն ավելի է պարզաբանվում, ինչը հնարավորություն է ստեղծում իրավախախտումը վերացնելու ու նման դեպքերը հետագայում կանխարգելելու համար: Լրագրողի համար տեղեկատվական կարևոր աղբյուր են ոլորտային հետազոտությունները, զեկույցները, ուսումնասիրությունները, վերլուծություններն ու այլ փաստաթղթեր: Որևէ իրավունք լուսաբանելիս լրագրողը պետք է ուսումնասիրի, թե այդ թեմայով նախկինում ինչ աշխատանքներ են իրականացվել: Մեծ է հավանականությունը, որ նա կգտնի ազգային կամ միջազգային փաստաթղթեր (օրինակ՝ ՀՀ

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կամ որևէ տեղական հասարակական կազմակերպության կողմից իրականացված հետազոտություն, Հայաստանի վերաբերյալ միջազգային կազմակերպությունների և մարմինների զեկույցներ և այլն), որոնցում արտացոլված կլինեն խնդրի ծագման հիմնական պատճառները, և ներկայացված կլինեն դրանք լուծելու առաջարկություններ: Սա կօգնի լրագրողին ընդհանրացնելու խնդիրը, քանի որ վերոնշյալ փաստաթղթերի ստեղծման համար շատ ավելի մեծածավալ ու ընդգրկուն աշխատանք կատարված կլինի, քան լրագրողը կարող է անել մեկ նյութի շրջանակներում:

Խնդրի համատարած լինելու մասին լավագույնս վկայում են վիճակագրական տվյալները: Ցանկալի է, որ դրանք լինեն պաշտոնական՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի, Կառավարության կամ բարձր հեղինակություն ունեցող միջազգային կամ տեղական կազմակերպության կողմից հրապարակված:

Լրագրողի համար մեկ այլ կարևոր աղբյուր են տվյալ ոլորտի մասնագետները/փորձագետները: Հայաստանի Հանրապետությունում և դրանից դուրս գործող իրավապաշտպաններն ու կազմակերպությունները կարող են արժեքավոր տեղեկատվություն տրամադրել և մեկնաբանություն անել խնդրի վերաբերյալ:

Լրագրողը որպես աղբյուր կարող է օգտագործել նաև ազգային և միջազգային օրենսդրությունը: Այսօր մարդու գրեթե յուրաքանչյուր իրավունքի վերաբերյալ ընդունված են միջազգային պայմանագրեր և տեղական օրենքներ: Ցանկալի է նախ հղում կատարել ՀՀ Սահմանադրության համապատասխան հոդվածին՝ որպես մայր օրենքի, ապա՝ մեջբերել միջազգային այն դաշնագրերի և կոնվենցիաների դրույթները, որոնք վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից: Սա կմատնանշի պետության կողմից ստանձնած պարտավորություններն ու սահմանադրական հռչակումները, որոնց խախտումներն արձանագրելն ինքնին երկրում մարդու իրավունքների պաշտպանության ոչ լիարժեք լինելու ապացույց է:

Ինչպես արդեն նշեցինք, լրագրողի պատրաստած նյութը, մարդու իրավունքների խախտումները ներկայացնելուց բացի, պետք է ներառի նաև պատասխանատու կառույցների ու անձանց տեսակետը: Այսպիսով լուծվում է միանգամից երկու խնդիր. նախ՝ նյութը լինում է հագեցած և հնարավորինս օբյեկտիվ, երկրորդ՝ ընդգծում է, թե ովքեր են մարդու իրավունքների պաշտպանության համար պատասխանատուները, և ինչ գործողություններ են նրանք իրականացնում:

Մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ միայն սրտացավ, պրոֆեսիոնալ և հետևողական աշխատանքի շնորհիվ հնարավոր կլինի նպաստել խնդրի կարգավորմանը, խթանել օրենսդրական բարեփոխումները, բարձրացնել մարդկանց իրազեկվածությունն ու օգնել նրանց սեփական իրավունքների պաշտպանության հարցում:

3.4. Խոցելի խմբերի իրավունքների լուսաբանման առանձնահատկությունները

Ձեռնարկի այս ենթագլուխը ստեղծվել է «Նոր սերունդ» մարդասիրական հասարակական կազմակերպության ֆինանսական աջակցությամբ:

Ապագան խոցելի խմբերի իրավունքների լուսաբանմանն անդրադառնալը պետք է հստակեցնել, թե որոնք են խոցելի խմբերը, և առանձնացնել դրանցից մի քանիսը՝ այս և հաջորդ ենթագլուխներում առավել մանրամասն քննության համար: Խոցելի են այն խմբերը, որոնք ավելի շատ պաշտպանության կարիք ունեն՝ պայմանավորված ինչպես օբյեկտիվ հանգամանքներով (օրինակ՝ ի ծնե հաշմանդամությամբ), այնպես էլ հասարակության մեջ գործող սոցիալական նորմերով ու կարծրատիպերով (օրինակ՝ կարծրատիպերի վրա է հիմնված կանանց նկատմամբ խտրական վերաբերմունքը): Խոցելի խմբերի իրավունքները հաճախ խախտվում են որևէ սոցիալական խմբի պատկանելու հիմքով (օրինակ՝ նույնասեռականներինը): Խոցելի խմբերի իրավունքները, որպես կանոն, առավել հաճախակի և կոպտորեն են խախտվում, քան ոչ խոցելի խմբերինը: Խոցելի խմբեր են համարվում երեխաները, կանայք, տարեցները, հաշմանդամություն ունեցող անձինք, փակ հաստատություններում պահվող անձինք, թմրանյութերից կախում ունեցողները, նույնասեռականները, սոցիալապես անապահով խմբերը, փախստականներն ու ներգաղթյալները և այլն: Այս և հաջորդ ենթագլուխներում կանդրադառնանք խոցելի խմբերից մի քանիսի իրավունքների լուսաբանման առանձնահատկություններին:

Երեխաների իրավունքների լուսաբանման առանձնահատկությունները

Երեխաները բոլոր հասարակություններում թերևս ամենախոցելի խումբն են, որոնց իրավունքների խախտման դեպքերը մեծ մասամբ չեն հանրայնացվում: Թեև երեխաների մեծ մասն ունի իր մասին հոգ տանող և իր իրավունքները պաշտպանող ընտանիք, սակայն բազմաթիվ են դեպքերը, երբ նրանց իրավունքները խախտվում են հենց ընտանիքի ներսում: Առավել խոցելի են այն երեխաները, որոնք ապրում են ընտանիքից հեռու՝ խնամքի կենտրոններում և մանկատներում: Երեխայի իրավունքների վերաբերյալ նյութ պատրաստելիս լրագրողը պետք է հանդիպի և զրուցի հենց երեխայի հետ, որպեսզի առաջին ձեռքից ստանա տեղեկատվությունը և ապահովի երեխայի՝ լսելի լինելու, կարծիք արտահայտելու իրավունքը: Ուստի անհրաժեշտ է պահպանել մի քանի կանոններ, որպեսզի գործի «մի՛ վնասիր» սկզբունքը, և պաշտպանվի երեխայի լավագույն շահը:

Նախ և առաջ լրագրողն ինքը պետք է զերծ լինի կարծրատիպերից և երեխային վերաբերվի որպես լիիրավ անձնավորության, հարգի նրա արժանապատվությունը՝ հաշվի առնելով նրա տարիքային առանձնահատկությունները:

Երեխայի հետ հարցազրույցի, նրա լուսա/լուսանկարահանման համար անհրաժեշտ է երեխայի օրինական ներկայացուցչի՝ ծնողների կամ խնամակալների համաձայնությունը: Սակայն միայն նրանց համաձայնությունը բավարար չէ երեխայի անձնական տվյալները հրապարակելու համար:

Լրագրողի համար պետք է առաջնային լինի երեխայի լավագույն շահը, որը հաճախ առաջին հայացքից ակնհայտ չէ, ուստի երեխայի մասին հրապարակումներ անելիս լրագրողը պետք է ցուցաբերի համբերություն և լայնախոհություն: Օրինակ՝ սոցիալական դժվարին պայմաններում ապրող ընտանիքի մասին նյութ պատրաստելիս նա պետք է խուսափի երեխաների դեմքերը ցուցադրելուց՝ գի-

տակցելով, որ թեև երեխաներին ցույց տալը կարող է նպաստել խնդրի արագ կարգավորմանը, այնուամենայնիվ, երեխայի լավագույն շահը պահանջում է չհանրայնացնել նրա անձնական տվյալները: Անգամ երբ ծնողը դեմ չէ, ավելին՝ պահանջում է ցուցադրել իր երեխաներին, լրագրողն ինքն է կրում պատասխանատվությունը, քանի որ նա է որոշում կայացնում՝ առաջնորդվելով երեխայի լավագույն շահով: Մշտապես պետք է հիշել, որ երեխան հաճախում է դպրոց, ունի ուսուցիչներ և դասընկերներ, որոնք գուցե տեղեկացված չեն, թե ինչ պայմաններում է նա ապրում: Սոցիալական խնդիրները ժամանակավոր են և լուծելի, իսկ երեխայի լուսանկարներն ու նրա մասնակցությամբ տեսանյութերը կարող են հավերժ մնալ համացանցում՝ դառնալով խարան նրա ողջ կյանքի համար: Ոչ մի դեպքում չի կարելի հրապարակել սեռական բռնության ենթարկված երեխայի անձնական տվյալները:

Երեխաների հետ զրուցելիս պետք է հարցերն այնպես ձևակերպել, որ նրանց համար պարզ և հասկանալի լինի դրանց բովանդակությունը: Որոշ չափով մտերմիկ, ոչ պաշտոնական խոսելաոճը թույլատրելի է, սակայն ոչ այնչափ, որ երեխան մոռանա, որ լրագրողի հետ է զրուցում, որը պատրաստվում է հրապարակելու իր պատասխանները: Երեխան պետք է իրեն ազատ զգա հարցազրույցի ընթացքում, սակայն միշտ հիշի, որ իր զրուցակիցը լրագրող է:

Երեխաներին առնչվող հարցերի վերաբերյալ հաղորդումների ուղենիշներ և սկզբունքներ է մշակել **Լրագրողների միջազգային ֆեդերացիան**: Այդ սկզբունքները ներկայացվում են ստորև.

«Երեխաների մասին իրենց հաղորդումներում լրագրողներն ու լրատվական կազմակերպությունները պետք է հետևեն վարքի կանոնների բարձր պահանջներին: Մասնավորապես նրանք պարտավոր են.

- Չգտել հասնելու ճշգրտության և նրբանկատության գերազանցության չափորոշիչների, երբ հաղորդում են երեխաներին առնչվող հարցերի մասին,
- Խուսափել այնպիսի ծրագրերի մշակումից և նկարների հրապարակումից, որոնք, հայտնվելով լրատվամիջոցներում, վնասում են երեխաներին,
- Խուսափել կարծրատիպերի օգտագործումից,
- Նկատի առնել, ինչպես հարկն է, երեխաների վերաբերյալ ցանկացած նյութի հրապարակման հետևանքները և նվազեցնել երեխաներին հասցվող վնասը,
- Չեռնպահ մնալ երեխաներին տեսողական կամ այլ կերպ ճանաչման մատնելուց՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա ակնհայտորեն ծառայում է հասարակության շահերին,
- Տալ երեխաներին, երբ հնարավոր է, իրենց սեփական կարծիքը լրատվամիջոցներով հայտնելու հնարավորություն՝ առանց որևէ տեսակի պարտադրանքի,
- Ապահովել երեխաների տրամադրած տեղեկությունների անկախ ճշտում և հատուկ հոգածությամբ ապահովել, որ ճշտումը կատարվի առանց տեղեկությունները տված երեխային վտանգի ենթարկելու,
- Խուսափել երեխաների՝ սեռական բնույթի հրապուրիչ պատկերների օգտագործումից,
- Կիրառել երեխաների նկարների ձեռքբերման արդար, բաց և շիտակ մեթոդներ, իսկ հնարավորության դեպքում դրանք ձեռք բերել երեխայի կամ երեխայի համար պատասխանատու մեծի, խնամակալի կամ խնամատարի գիտությամբ ու համաձայնությամբ,
- Ճշտել ցանկացած կազմակերպության լիազորությունները, որոնք ներկայանում են երեխաների անունից և որպես նրանց շահերի պաշտպան,
- Չվճարել երեխաներին կամ նրանց ծնողներին ու խնամակալներին այնպիսի նյութերի համար, որոնք առնչվում են

երեխաների բարեկեցությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ ակնհայտ է, որ դա երեխայի օգտին է»[18]:

Մամուլում երեխաների անձնական տվյալների հրապարակման վերաբերյալ խորհրդատվական որոշում է հրապարակել ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը: Որոշումը ներկայացված է Հավելված 3-ում:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների լուսաբանման առանձնահատկությունները

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների լուսաբանումը ևս պետք է զերծ լինի կարծրատիպերից և դրանք խորացնող տեքստերից ու արտահայտություններից: Լուսաբանման նպատակը չպետք է լինի մարդկանց մոտ խղճահարություն առաջացնելը, հաշմանդամություն ունեցող անձին որպես անզոր, անկարող էակ ներկայացնելը: Հրապարակումներում հասարակության բոլոր խմբերի իրավունքների պաշտպանության համատեքստում պետք է շեշտադրվի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցը: Բնականաբար, նյութ պատրաստելիս պետք է հարցազրույց վարել հենց հաշմանդամություն ունեցող անձանց հետ: Հարցազրույցի ընթացքում ևս զրուցակիցը չպետք է զգա, որ լրագրողը խղճում է իրեն կամ թերագնահատում է:

Յանկալի է որպես զրուցակից ընտրել դժվարություններ հաղթահարած և հաջողությունների հասած՝ հաշմանդամություն ունեցող անձանց, որոնք իրենց օրինակով կարծրատիպեր են կոտրում:

---

[18] Թարգմանությունը՝ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, http://shirak.mtad.am/files/docs/37485.pdf (մուտք՝ 20.02.2020):

Իհարկե, լրագրողը կարող է և պետք է ներկայացնի հաշմանդամություն ունեցող անձին հանդիպող դժվարությունները, ընդգծի պետության պատասխանատվությունը, սակայն դա պետք է անի առանց ավելորդ հուզականության և առավել ևս պաթոսի՝ հիմնվելով զուտ փաստերի վրա և շեշտադրելով ոչ թե անձի ֆիզիկական կամ մտավոր խնդիրը, այլ միջավայրի անհարմարությունը, անհրաժեշտ պայմանների և պետության կողմից բավարար հոգածության բացակայությունը:

Կարևոր է նաև եզրույթների և արտահայտությունների ընտրությունը, որոնք պետք է խտրական և վիրավորական չլինեն:

Երբ նկարագրում եք հաշմանդամություն չունեցող անձի, չպետք է գործածել «նորմալ» կամ «լիարժեք» բառերը, քանի որ դրանով ավելի եք խոցում հաշմանդամություն ունեցող անձին և ամրապնդում եք այն կարծրատիպերը, որ իրենք «նորմալ» մարդիկ չեն:

Եթե անհրաժեշտ է նշել, որ տվյալ անձը չունի հաշմանդամություն, պարզապես պետք է գործածել «հաշմանդամություն չունեցող» արտահայտությունը: Օրինակ՝ «Մանկատանն ապրում են հաշմանդամություն ունեցող 11 և հաշմանդամություն չունեցող 6 երեխաներ»: Հաշմանդամություն ունեցող անձանց մասին խոսելիս պետք է խուսափել «տառապում է որևէ հիվանդությամբ», «բնածին արատ ունի», «գամված է սայլակին», «մտավոր հետամնաց է» և նմանատիպ այլ ձևակերպումներից: Փոխարենը կարելի է ասել՝ «տվյալ անձն ունի աուտիզմ», «տեղաշարժվում է սայլակի միջոցով» կամ «սայլակ է օգտագործում», «մտավոր խնդիր ունի» և այլն: Կարևոր է նյութերում ընդգծել, որ հաշմանդամություն ունեցող անձինք հասարակության լիարժեք անդամներ են, որոնց իրավունքների լիարժեք պաշտպանության համար որոշակի պայմաններ են անհրաժեշտ, որոնք պետք է ապահովվեն պետության կողմից:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ոլորտում մասնագիտացած «Հույսի կամուրջ» հասարակական կազմակեր-

պությունը պատրաստել է առաջարկների մի ծրագիր՝ «Առաջարկներ լրագրողներին հաշմանդամության խնդրի լուսաբանման համար», որը ներկայացված է Հավելված 4-ում:

Կանանց իրավունքների լուսաբանման առանձնահատկությունները

Կանանց իրավունքների լուսաբանումը վերջին տասնամյակում շատ արդիական է նաև Հայաստանում: Լուսաբանումները հիմնականում վերաբերում են երկու թեմաների՝ կանանց նկատմամբ բռնության ու նրանց քաղաքական մասնակցությանը: Սակայն այսքանով կանանց իրավունքների թեման չի սպառվում. կարևոր է նաև լուսաբանել կանանց վերարտադրողական առողջության վերաբերյալ հարցերը, տնտեսական մասնակցությունն ու հանրային դերակատարումը, նրանց նկատմամբ խտրականությունն աշխատավայրում և ընտանիքում, սեռական շահագործումը, վաղ տարիքում ամուսնությունը և այլ թեմաներ:

Լրագրողը պետք է զերծ լինի գենդերային կարծրատիպերից ու նախապաշարմունքներից, որպեսզի կարողանա լուսաբանել խնդիրը մարդու իրավունքների տեսանկյունից՝ առանց կնոջը որպես թույլ էակ դիտարկելու, որն օգնության և պաշտպանության կարիք ունի:

Այս դեպքում ևս անհրաժեշտ է խուսափել որոշ արտահայտություններից, որոնք խտրական ու վիրավորական են կանանց համար: Չպետք է գործածել «թույլ սեռ», «կնոջ գործ», «կնոջը վայել չէ», «կնոջը հարիր չէ», «կանացի երջանկություն» և նմանատիպ այլ արտահայտություններ: Գուցե լրագրողին թվա, թե ինքը գովաբանում է կնոջը՝ նրան անվանելով «տղամարդ կին» կամ «տղամարդ աղջիկ», սակայն այս արտահայտություններն իրականում խտրական են և ստորադասում են կնոջը՝ ընդգծելով, որ տղամարդն ավելի բարձր, ավելի վեհ է, և ամեն կին չէ, որ կարող է համարվել «տղամարդ կին»: Նույն կերպ կանանց համար վիրավորական է, երբ տղամարդկու-

թյունը, տղամարդ լինելը ներկայացվում են որպես ազնվության, համարձակության և ուղղախոսության հոմանիշ: Առհասարակ պետք է խուսափել մարդու սեռի անտեղի հիշատակումներից: Անտեղի հիշատակումը գրեթե բոլոր դեպքերում սեքսիզմի[19] և խտրականության դրսևորում է, երբ կարևորվում է ոչ թե մարդը, այլ նրա սեռը:

Էական նշանակություն ունի, թե կանանց ինչ միջավայրում, ինչպիսի դերում ենք ներկայացնում: Օրինակ՝ չպետք է կանանց հետ հարցազրույցներ անցկացնել խոհանոցում, առավել ևս՝ նրանց առաջարկել այդ ընթացքում որևէ բան պատրաստել կամ ափսեները լվանալ (չէ՞ որ նման բան երբեք չի արվում տղամարդ զրուցակցի դեպքում), քանի որ այդպիսով էլ ավելի է խորանում այն կարծրատիպը, թե կանանց տեղը խոհանոցում է: Կին քաղաքական գործիչների հետ հարցազրույցներ վարելիս չպետք է հարցնել, թե իր ամուսինը դե՞մ չէ արդյոք, որ նա զբաղվի քաղաքականությամբ, քանի որ այդպիսով ընդգծվում է կնոջ կախումը ամուսնուց, և օրինաչափ է համարվում այն, որ նա պետք է թույլտվություն ստանա հանրային գործունեությամբ զբաղվելու համար: Պատկերացրեք մի իրավիճակ, երբ տղամարդ պատգամավորին հարց ուղղեն. «Իսկ Ձեր կինը դե՞մ չէ, որ Դուք քաղաքականությամբ զբաղվեք»: Այսպիսի հարցեր սովորաբար տղամարդկանց չեն տալիս, իսկ ինչո՞ւ պետք է տալ կանանց: Փոխարենը կին գործիչների հետ պետք է զրուցել նրանց քաղաքական հայացքների, սկզբունքների, պայքարի մասին: Կարծրատիպային է նաև «Իսկ ինչպե՞ս եք համատեղում կարիերան և անձնական կյանքը» հարցը: Այս հարցը ևս տղամարդկանց գրեթե երբեք չեն տալիս, փոխարենը կանանց ամենահաճախ տրվող հարցերից է: Ինչո՞ւ անձնական կյանքը կնոջ համար պետք է խոչընդոտ լինի, իսկ

---

[19] Սեքսիզմը սեռային պատկանելության հիմքով խտրականության գաղափարախոսություն և պրակտիկա է, որն արտահայտվում է այս կամ այն սեռի նվաստացման, վիրավորանքի կամ ծաղրանքի միջոցով: Այն հաճախ դրսևորվում է գիտակցված կամ չգիտակցված քարոզչության տեսքով, որը հիմնված է որևէ սեռի ֆիզիկական կամ ինտելեկտուալ որակների գերագնահատման կամ թերագնահատման վրա:

տղամարդու համար՝ ոչ: Այս հարցով լրագրողը կնոջը դարձյալ ցույց է տալիս իր «տեղն ու պարտականությունները»՝ լինել ընտանիքում, զբաղվել բոլոր կենցաղային հարցերով, երեխաների խնամքով ու դաստիարակությամբ և այլն:

Եթե վստահ չեք՝ Ձեր հարցը խտրական կամ կարծրատիպային մոտեցում պարունակու՞մ է, թե՞ ոչ, մտածեք, թե նույն հարցը երբևէ կտրայի՞ք տղամարդ զրուցակցին: Եթե ոչ, ապա նման հարց մի՛ տվեք կնոջը, բացառությամբ հղիությանը և ծննդաբերությանը վերաբերող հարցերից:

Առանձնակի նրբանկատություն է պահանջում բռնության և հատկապես ընտանեկան բռնության ենթարկված կնոջից հարցազրույց վերցնելը: Նախ զրուցակիցը պետք է վստահի լրագրողին, քանի որ պետք է պատմի իր անձնական կյանքի վերաբերյալ մանրամասներ, որոնց մասին նա հեշտությամբ չի կարող խոսել: Նա պետք է հանգիստ լինի, հասկանա, որ լրագրողն ընկալում է իրավիճակը և ոչ մի դեպքում չի պատրաստվում մեղադրելու իրեն: Բռնության ենթարկված անձին կրկնակի զոհարկման չենթարկելու համար պետք է խուսափել որոշ հարցադրումներից կամ դրանք ձևակերպել այնպես, որ մեղադրանք չպարունակեն: Օրինակ՝ չպետք է հարցնել. «Իսկ Դուք ի՞նչ էիք արել, որ նա Ձեզ ծեծեց», փոխարենը կարելի է հարցնել. «Ի՞նչ պայմաններում տեղի ունեցավ բռնությունը, դրան ի՞նչ դեպքեր են նախորդել»: Նաև պետք է խուսափել «Եթե ծեծում էր, ինչո՞ւ այսքան տարի չեք հեռացել նրանից» հարցադրումից, փոխարենը կարելի է հարցնել. «Նախկինում փորձե՞լ եք հեռանալ/ամուսնալուծվել նրանից»:

Երբ զրուցակիցը զգա, որ իրեն ոչ թե մեղադրում են, այլ հասկանում, շատ ավելին կպատմի լրագրողին:

Սեռական բռնության ենթարկված կնոջը չպետք է հարցնել, թե այդ օրը նա ինչ զգեստ էր կրում, քանի որ կնոջ արտաքինը որևէ

կերպ չի կարող արդարացնել նրա նկատմամբ սեռական ոտնձգությունն ու բռնությունը:

Ինչպես արդեն նշեցինք, կանանց իրավունքներն ու խնդիրները լուսաբանելիս լրագրողը նախ պետք է համոզվի, որ ինքն անձամբ իսկապես զերծ է գենդերային կարծրատիպերից և կկարողանա նյութը մատուցել առանց խտրական արտահայտությունների ու շեշտադրումների: Եթե վստահ չէ, որ դա կհաջողվի իրեն, պետք է խուսափի այդ թեման լուսաբանելուց, որպեսզի այդպիսով էլ ավելի չխորացնի հասարակության մեջ առկա կարծրատիպերը, որոնք հաճախ դառնում են կանանց նկատմամբ խտրականության ու բռնության պատճառ:

Գենդերային զգայուն լրագրությունը պահանջում է, որ լրագրողը հետևի ոչ միայն իր, այլև զրուցակցի խոսքին, թույլ չտա, որ նրա հնչեցրած խտրական ու կարծրատիպային արտահայտությունները տեղ գտնեն իր նյութում, բացառությամբ այն դեպքերի, երբ նման կարծիքների հրապարակման նպատակը հասարակության մեջ առկա կարծրատիպերի վերհանումն է:

Նույնասեռականների[20] իրավունքների լուսաբանման առանձնահատկությունները

Ինչպես կանանց, նույնասեռականների իրավունքները լուսաբանելիս ևս լրագրողը նախ և առաջ պետք է համոզվի, որ չունի խտրական մոտեցում նույնասեռականների նկատմամբ և կարող է իր պատրաստած նյութը զերծ պահել կարծրատիպերից ու բացասական վերաբերմունքից: Նույնասեռականների խնդիրները ևս պետք է լուսաբանել մարդու իրավունքների համատեքստում՝ «մարդը բարձրագույն արժեք է» սկզբունքով: Նույնասեռականների կյանքի պատ-

[20] Այս ենթագլխում «նույնասեռական» բառը գործածվում է որպես հավաքական եզրույթ՝ գեյ, լեսբի, բիսեքսուալ և տրանս (ԼԳԲՏ) անձանց նկարագրելու համար:

մությունները չպետք է ներկայացվեն որպես սենսացիոն նյութ՝ դիտումներ ապահովելու նպատակով: Առավել ևս պետք է խուսափել սեռական կյանքի մանրամասները ներկայացնելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք էական նշանակություն ունեն լուսաբանման համար (օրինակ՝ եթե նույնասեռական անձի նկատմամբ սեռական բռնություն է կիրառվել): Նույնասեռականների իրավունքները լուսաբանելիս անհրաժեշտ է զրուցել ԼԳԲՏ համայնքին պատկանող անձի հետ: Այսօր հնարավոր է հանդիպել նույնասեռական ակտիվիստների, որոնք բացահայտ խոսում են իրենց սեռական կողմնորոշման մասին և պատրաստ են հարցազրույց տալու այն լրագրողներին, որոնց վստահում են: Սակայն չպետք է սահմանափակվել միայն ակտիվիստներով. կարելի է գտնել այլ զրուցակիցներ՝ համագործակցելով նույնասեռականների իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ: Կարևոր է ընդգծել, որ պատրաստվում եք լուսաբանելու նույնասեռականների իրավունքները և դրանց առնչվող խնդիրները:

Զրուցակիցը պետք է հասկանա, որ Դուք սենսացիա չեք փնտրում, այլ հետաքրքրված եք նրա իրավունքների պաշտպանությամբ: Կարևոր է ընդգծել, որ Ձեզ հետաքրքրում է ոչ թե նրա սեռական կյանքը, այլ սեռական կողմնորոշման պատճառով առկա խնդիրները:

Նույնասեռական զրուցակցի իսկական անունը հիմնականում չի հրապարակվում, որպեսզի հավելյալ խնդիրներ չառաջանան նրա համար: Սակայն ներկայացված պատմությունը պետք է արժանահավատ, հնարավորինս մանրամասն ու օրինակներով հարուստ լինի: Նույնիսկ այն դեպքում, երբ զրուցակիցը պատրաստ է հրապարակելու իր անունը, լրագրողը, միևնույնն է, պատասխանատվության իր բաժինն ունի հրապարակելուց հետո առաջացած բացասական հետևանքների համար (կրկին հիշենք «Մի՛ վնասիր» սկզբունքը):

Նույնասեռականների իրավունքների լուսաբանումը նաև որոշակի քաջություն է պահանջում լրագրողից, քանի որ կգտնվեն գոր-

ծընկերներ, ընկերներ և պաշտոնյաներ, որոնք կասկածանքով կվերաբերվեն նրա՝ թեմայի նկատմամբ ցուցաբերած հետաքրքրությանը: Ավելին՝ կարող են լինել որոշակի ճնշումներ ու բացասական մեկնաբանություններ, որոնք կարող են հետ պահել լրագրողին թեմայի վերաբերյալ լուսաբանումներ անելուց: Ցանկացած դեպքում պետք է ընդգծել, որ մարդու իրավունքների պաշտպանությունը առաջնահերթություն է, իսկ իրավունքներ ունեն բոլորը, որոնք երաշխավորված են ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ միջազգային կոնվենցիաներով, որոնք վավերացրել է Հայաստանի Հանրապետությունը:

Երբեմն լրատվամիջոցներում տպագրվող կամ հեռարձակվող տեքստերը պարունակում են նույնասեռականների համար վիրավորական, նվաստացնող և խտրական արտահայտություններ: ԶԼՄ-ների հրապարակումներում նույնասեռական անձանց նկատմամբ բացասական տրամադրվածություն է ստեղծվում ոչ միայն տվյալ լրագրողի՝ ԼԳԲՏ անձանց հանդեպ ունեցած վերաբերմունքի, այլև եզրույթների սխալ գործածության հետևանքով: Պետք է խուսափել վիրավորական արտահայտություններից, օրինակ՝ ոչ նույնասեռական՝ տարասեռական անձին նկարագրելու համար չպետք է գործածել «նորմալ սեռական կողմնորոշում ունեցող» արտահայտությունը:

«Նոր սերունդ» մարդասիրական հասարակական կազմակերպությունը լրագրողների համար ստեղծել է եզրութաբանական բառարան, որում ներկայացված են նույնասեռականների առնչությամբ գործածվող եզրույթների նախընտրելի տարբերակները և դրանց բացատրությունները: Բառարանը ներկայացված է Հավելված 5-ում:

3.5. Փակ հաստատություններում պահվող անձանց իրավունքների լուսաբանման առանձնահատկությունները

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության և «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան»-ի ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության համար պատասխանատու է հեղինակը՝ Արման Ղարիբյանը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության, «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան»-ի, Հանրային լրագրության ակումբի և «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի տեսակետները:

Այս ենթագլխում ամփոփ ներկայացվում է Հանրային լրագրության ակումբի «Մարդու իրավունքների լուսաբանումը փակ հաստատություններում» լրագրողական ուղեցույցի բովանդակությունը: Այն համաձայնեցվել է կազմակերպության հետ: Ձեկույցի հեղինակներն են Զարուհի Մեջլումյանը և Արթուր Սաքունցը:

Փակ հաստատություններ

Քրեակատարողական հիմնարկները, ձերբակալված անձանց պահելու վայրերը և հոգեբուժարանները համարվում են փակ հաստատություններ: Ինչո՞ւ են այդ պետական կառույցները կոչվում փակ հաստատություններ: Պատճառն այն է, որ այդ հիմնարկներում գործում է հատուկ ռեժիմային գոտի, որտեղ պահվում են օրենքի հիման վրա ազատությունից զրկված անձինք: Մուտքն այդ հաստատություններ իրականացվում է օրենքով ու ենթաօրենսդրական ակ-

տերով սահմանված հատուկ կարգով և համապատասխան թույլտվության համաձայն, որը տրվում է տվյալ կառույցի վարչակազմի, օրինակ՝ Քրեակատարողական վարչության կամ Արդարադատության նախարարության, Ոստիկանության կամ Առողջապահության նախարարության կողմից: Բացի վարչակազմի թույլտվությունից՝ անհրաժեշտ է ստանալ փակ հաստատությունում պահվող անձի, իսկ անչափահասի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցչի համաձայնությունը:

Փակ հաստատություններում անձինք պահվում են պետական միջոցների հաշվին, գտնվում են պետության հոգածության և հսկողության ներքո: Պետությունն ունի պարտավորություն նրանց կյանքի, անվտանգության, առողջության պահպանման, արժանապատվությունը չնսեմացնող կենսապահովման պայմանների, արժանապատվության նկատմամբ հարգալից վերաբերմունքի ապահովման և մարդու իրավունքների հարգման տեսանկյունից:

Քրեակատարողական հիմնարկներ

Քրեակատարողական հիմնարկները գտնվում են ՀՀ արդարադատության նախարարության ենթակայության տակ գործող ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության տիրույթում:

Քրեակատարողական հիմնարկները պետական կառույցներ են, որտեղ պահվում են՝

- կալանավորվածները,
- դատապարտյալները:

Կալանավորներն այն անձինք են, որոնց նկատմամբ դատարանի որոշմամբ կիրառվել է կալանքը՝ որպես խափանման միջոց, երբ դեռևս օրինական ուժի մեջ մտած դատավճիռ չկա: Դատավճիռն օրինական ուժի մեջ է մտնում այն ժամանակ, երբ սպառվում են բոլոր երեք ներպետական կառույցների՝ Ընդհանուր իրավասության, Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների բողոքարկումները կամ բո-

ղոքարկման ժամկետը: Կալանավորները պահվում են մեկուսարաններում՝ փակ ռեժիմային գոտում:

Դատապարտյալներն այն անձինք են, որոնք պատիժը կրում են ազատազրկման տեսքով՝ նրանց նկատմամբ ընդունված վերջնական դատական ակտի, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա: Նրանք տեղաբաշխվում են համապատասխան քրեակատարողական հիմնարկներում: Դատապարտյալների տեղաբաշխման հարցում հաշվի են առնվում հանցանքի ծանրության աստիճանը, դատապարտյալի ցանկությունը, բնակավայրին մոտ գտնվելու հանգամանքը, նախկին դատվածության առկայությունը, սեռը, տարիքը և այլ հանգամանքներ:

Ձերբակալված անձանց պահելու վայրերը

Ձերբակալված անձանց պահելու վայրերը (ՁՊՎ) լրագրողական աչքի համար շարունակում են մնալ փակ տարածքներ: Այնտեղ լրագրողները մուտք չունեն, քանի որ դրանք գտնվում են ոստիկանական բաժիններում: ՁՊՎ-ներում պահվում են ձերբակալված անձինք: ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ձերբակալված անձինք կարող են պահվել ոչ ավելի, քան 72 ժամ: Դրանից հետո կա՛մ պետք է նրանց մեղադրանք առաջադրվի, կա՛մ նրանք պետք է ազատ արձակվեն:

Ոստիկանական բաժիններն ու ՁՊՎ-ները գտնվում են ՀՀ ոստիկանության ենթակայության տակ: Հայաստանում՝ բոլոր մարզերում և Երևան քաղաքում, ընդհանուր առմամբ գործում են 34 ՁՊՎ-ներ: Լրագրողները կարող են համապատասխան թույլտվության առկայության դեպքում մուտք գործել ՁՊՎ-ներ, քանի որ ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ ունի արտաքին աշխարհի հետ կապի իրավունք՝ սահմանված ինչպես միջազգային նորմերով, այնպես էլ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով:

Ազատությունից զրկված ցանկացած անձ հնարավորություն ունի օգտվելու արտաքին աշխարհի հետ կապի իր իրավունքից՝ անկախ ազատազրկման տեսակից, քանի դեռ չկա արտաքին աշխարհի հետ կապի իրավունքի սահմանափակման ողջամիտ և հիմնավորված անհրաժեշտություն:

Սակայն քանի որ ՃՊՎ-ներում անձը չի կարող պահվել 72 ժամից ավելի, իսկ լրագրողի՝ թույլտվություն ստանալը կարող է ավելի երկար տևել, ուստի ՃՊՎ-ներում գտնվող անձի մասին տեղեկատվությունը կարող է հասանելի դառնալ նաև Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) գրասենյակի, փաստաբանի, հարազատի կամ ՀՀ ոստիկանության համակարգի՝ ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի միջոցով:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները հանդես են գալիս իբրև կանխարգելման ազգային մեխանիզմի ներկայացուցիչներ և ազատազրկման վայրերում վատ վերաբերմունքի կանխարգելմանն ուղղված գործառույթներն իրականացնելիս մշտադիտարկման լիազորություն ունեն ՀՀ ոստիկանության՝ ձերբակալված անձանց պահելու վայրերում: Այս գործառույթներն իրագործվում են «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ:

ՃՊՎ-ներում լրագրողներին հետաքրքրող հարցերից են՝

- խցերի պայմանները,
- ձերբակալվածների հետ վարվեցողությունը,
- սննդի կազմակերպումը,
- գնումները,
- մարդկանց իրավունքների խախտման դեպքերը:

Հոգեբուժարաններ և հատուկ խնամքի հաստատություններ

Հիվանդանոցային հոգեբուժական ծառայությունը Հայաստանում իրականացվում է 7 հոգեբուժական կազմակերպությունների կողմից: «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքով[21] սահմանվում են հոգեբուժական ծառայությունների մի շարք ձևեր՝ հիվանդանոցային, արտահիվանդանոցային, դիսպանսերային ծառայություններ, հոգեբուժական կազմակերպություն, ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունք, հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունք:

Հոգեբուժական հաստատություններ անձինք դիմում են կամավոր, իսկ քրեական դատավարությամբ սահմանված դեպքերում՝ հարկադիր բուժման շրջանակներում՝ ոչ կամավոր հիմունքներով: Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության 35-րդ գլխի՝ հոգեբուժական կազմակերպությունը նույնպես կարող է դիմել դատարան՝ անձին հարկադիր (ոչ հոժարակամ) բուժման ենթարկելու համար: Օրենքը կարող է նախատեսել ազատազրկում՝ հասարակության համար հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանցից բխող վտանգը կանխելու նպատակով:

Թեպետ հատուկ խնամքի հաստատությունները փակ հաստատություններ չեն, այդուհանդերձ, հատուկ դպրոցներում, մանկատներում ու ծերանոցներում լրագրողի աշխատանքը ևս կարևոր է, քանի որ այդ հաստատությունների շահառուները մեր հասարակության խոցելի խմբերից են՝ երեխաներ, ծերեր ու հատուկ կարիքներ ունեցող անձինք:

Այս հաստատություններ մուտք գործելու համար հատուկ թույլտվություն պետք չէ, պարզապես պետք է տեղեկացնել Կրթության ու գիտության կամ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ հաշվի առնելով տվյալ հիմնարկի վարչական ենթակայությունը:

---

[21] Տե՛ս www.arlis.am, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=69113 (մուտք՝ 20.02.2020):

Լրագրողներին այս հաստատություններում առավել շատ կարող են հետաքրքրել մարդու իրավունքների խախտման դեպքերը, պետական գնումների գործընթացը՝ կոռուպցիոն ռիսկերի վերհանման առնչությամբ, շահառուներին պահելու պայմանները, նրանց տրամադրվող սնունդը, բուժսպասարկման որակը, վատ վերաբերմունքի դրսևորումները, հոգեբուժարաններում ու հատուկ հանրակրթական դպրոցներում առողջ քաղաքացիների առկայությունը և այլն:

Մարդու իրավունքների խնդիրները փակ հաստատություններում

Գաղտնիք չէ, որ մարդու իրավունքներն առավելապես խոցելի են փակ հաստատություններում, քանի որ այդ պետական կառույցներում մարդու ազատությունն արդեն իսկ սահմանափակված է: Բացի այդ՝ հանրային վերահսկողությունը նույնպես սահմանափակ է այդ հիմնարկներում: Լրագրողները մուտք ունեն փակ հաստատություններ միայն վարչակազմի թույլտվության և այնտեղ գտնվող քաղաքացու համաձայնության դեպքում:

Հիմնարկներից լրագրողները հաճախ կարող են ստանալ ահազանգեր փակ հաստատություններում հետևյալ իրավունքների խախտման մասին՝

- ազատության անձեռնմխելիության իրավունք,
- արդար դատաքննության իրավունք,
- խոշտանգումներից ու անմարդկային վերաբերմունքից զերծ լինելու իրավունք,
- արժանապատվության հարգման իրավունք,
- առողջության պահպանման իրավունք,
- կրթության իրավունք,
- ընտանեկան ու անձնական կյանքի իրավունք և այլն:

Բանտային նվազագույն կանոններ

Քրեակատարողական համակարգի խնդիրները լուսաբանող լրագրողը պետք է պատկերացում ունենա այն իրավական կարգավորումների մասին, որոնք ընդունվել ու գործում են՝ տվյալ ոլորտի միջազգային պայմանագրերը, կոնվենցիաները, ներպետական օրենսդրությունը: Լրագրողին պետք է հասանելի լինեն Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R(2006) 2 հանձնարարականը՝ «Եվրոպական բանտային կանոնների մասին», «Որևէ ձևով ձերբակալվող կամ կալանավորվող անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուն», կալանավորված անձանց նկատմամբ վերաբերմունքի ՄԱԿ-ի նվազագույն չափանիշները (Նելսոն Մանդելայի կանոնները), Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի զեկույցները և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի չափանիշները, որոնք նա կարող է գտնել **http://www.arlis.am/** կայքում:

Ձերբակալվող կամ կալանավորվող անձանց պաշտպանության սկզբունքներից են. 1) ձերբակալված կամ կալանավորված բոլոր անձինք մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք ունեն, 2) ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող ոչ մի անձ չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վարվեցողության կամ պատժի այլ ձևերի, 3) ոչ մի հանգամանք չի կարող արդարացում լինել նման պարագայում:

ՔԿՀ-ներում պահելու պայմանները, սնունդը, բուժօգնությունը

Բանտային պայմաններ, սննդի ու բուժծառայության որակ՝ ահա այն հիմնական խնդիրները, որոնք ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում արձանագրել է հասարակական դիտորդների խումբը 2016 թվականի ընթացքում:

Ընդհանուր վիճակագրություն: Հայաստանի 2 մլն 998 հազար բնակչության պարագայում 2015 թվականին կալանավորների ու դատապարտյալների թիվը եղել է 3907, ասել է թե՝ 100.000 բնակչին բաժին էր ընկնում 130 ազատազրկված, ինչը եվրոպական միջին ցուցանիշից բարձր էր: Սակայն թավշյա հեղափոխությունից հետո՝ 2018 թվականին, համաներման և պայմանական վաղաժամկետ ազատման մեխանիզմի ակտիվության շնորհիվ Հայաստանում բանտային գերբնակեցման հարցը լուծված է: 2018 թվականի նոյեմբեր ամսվա դրությամբ՝ հայաստանյան բանտերում գերբնակեցում չկա:

Մեր բանտարկյալների մեծ մասը տղամարդիկ են:

Պայմաններ: ՔԿՀ-ներում, ըստ եվրոպական ստանդարտների, յուրաքանչյուր դատապարտյալի համար նախատեսված է 4 քմ տարածք, խցում պետք է լինի բավարար լուսավորություն և գործի օդափոխության համակարգ, արտաքնոցը պետք է անջատված ու փակված լինի: ՀՀ ՔԿՀ-ներում դիտորդական հասարակական խմբի անդամների դիտարկումները ցույց են տվել, որ գերազանց կամ բարվոք վիճակում են այն խցերը, որոնք վերանորոգել են դատապարտյալները իրենց ընտանիքների միջոցներով, իսկ այն խցերը կամ կացարանները, որտեղ բնակվող դատապարտյալները չեն ունեցել համապատասխան ֆինանսական միջոցներ, որպես կանոն, ոչ բարվոք վիճակում են: Օրինակ՝ 2016 թվականի դեկտեմբերին խմբի անդամներն այցելել են «Նուբարաշեն» ՔԿՀ: Այցի ընթացքում դիտարկվել են հիմնարկի ստորին հարկի խցերից մեկը և միջանցքը: Խցի պայմանները գնահատվել են անմխիթար, իսկ ազատազրկված անձանց նման պայմաններում պահելը՝ հավասարազոր անմարդկային վերաբերմունքի: Անզեն աչքով առաստաղի, պատերի վրա, հացով լի տուփերում նկատելի էին հարյուրավոր խավարասերներ: «Հատկանշական է, որ այդ խցում պահվում էին քրեական ենթամշակույթի հիերարխիայի ամենացածր և, որպես հետևանք, ամենախոցելի խմբի

ներկայացուցիչները (ԼԳԲՏ-ի և քրեական ենթամշակույթին չենթարկվող անձինք)»[22]:

Մարդու իրավունքների պաշտպանի միջամտությամբ «Նուբարաշենի» առաջին հարկը՝ որպես մշտական բնակության վայր, փակվել է: Միաժամանակ ՄԻՊ-ը հետևողական աշխատանք է տանում 1-ին հարկի շահագործումն առհասարակ դադարեցնելու ուղղությամբ:

Սնունդ: Կալանավորված և դատապարտված այն անձինք, որոնք հնարավորություն ունեն օգտվելու հանձնուքների միջոցով ստացված սննդից և հիգիենայի պարագաներից, հիմնականում նախընտրում են այդ տարբերակը և քիչ են օգտվում ՔԿՀ սննդից: Նման մոտեցումը պայմանավորված է տրամադրվող սննդի ոչ բավարար որակով, միանման և ոչ գրավիչ ճաշացանկով, նաև ազատազրկված անձանց շրջանում ընդունված վարքագծի չգրված կանոններով: Դատապարտյալներն ու կալանավորները, իրավապաշտպանները ու ՔԿՀ-ներում հասարակական դիտորդական խմբի անդամները վկայում են՝ քրեակատարողական հիմնարկների ճաշացանկը կրկնվող է: Տապակած կաղամբը, շոգեխաշած բանջարեղենն ու շիլաները գրեթե բոլոր ՔԿՀ-ներում ամենից հաճախ հանդիպող կերակրատեսակներն են: Սնունդը, մեկ բանտարկյալի համար ծախսվող գումարները ևս ուղիղ կապ ունեն նրանց առողջության հետ: Հայաստանում մեկ ազատազրկվածի պահելու համար պետությունը 2015 թվականին օրական ծախսել է 11 եվրո (ներառված են նաև աշխատակազմի, շենք-շինությունների համար նախատեսված ծախսերը): Ադրբեջանում այդ գումարը կազմել է 12 եվրո: Դատապարտյալների համար ամենից շատ գումար է հատկացվում Սան Մարինոյում՝ 707 եվրո, Շվեդիայում՝ 359 եվրո, Նորվեգիայում՝ 344 եվրո, Հոլանդիայում՝ 250

[22] ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի 2016 թվականի գործունեության հաշվետվություն, էջ 65, http://pmg.am/images/PMG_Report_2016_web_Arm-s.pdf (մուտք՝ 20.02.2020):

եվրո: ՀՀ-ում մեկ ազատազրկվածին պետական բյուջեից մեկ օրվա համար հատկացված 6240 դրամից 700-ն է ծախսվում սննդի համար: Մնացած՝ ավելի քան 5000 դրամով ապահովվում է ՔԿ ոլորտի վարչակազմերի աշխատավարձերի և բանտերի շենքերի պահպանության հարցը: Սննդի համար հատկացվող 700 դրամից շուրջ 8 անգամ ավելի են շենք-շինությունների պահպանության ու վարչակազմերի համար նախատեսված ծախսերը: Դրանք, ի դեպ, տարեցտարի ավելացել են, փոխարենը անփոփոխ է մնացել կալանավորների ու դատապարտյալների սննդի համար նախատեսված ծախսը՝ օրական 700 դրամը:

Բուժօգնություն: Ազատազրկման վայրերում ոչ բավարար բժշկական սպասարկման մասին մշտապես ահազանգում են թե՛ բանտարկյալները, թե՛ նրանց հարազատները, թե՛ տեղական ու միջազգային կառույցները, թե՛ Մարդու իրավունքների պաշտպաններն իրենց զեկույցներով, ինչպես նաև ԵԽ-ն ու ԵԽ Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն: Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցում կարդում ենք. «Որոշ ՔԿՀ-ներում ատամնաբուժական ծառայություններ չեն մատուցվում: Դատապարտյալներն իրենց հաշվին հրավիրում են իրենց նախընտրած բժշկին... «Գորիս», «Սևան», «Արմավիր» ՔԿՀ-ներում ապահովված չէ հոգեբուժական ծառայությունների հասանելիությունը: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բուժման ընթացքը որոշվում է հոգեբույժի հետ հեռախոսով խորհրդակցելով, որպիսի պրակտիկան անընդունելի է: Բժշկական հաստիքները հաճախ ոչ բավարար են, շուրջօրյա բժշկական օգնության հարցը ևս բաց է»[23]: Զեկույցում նշված է, որ ՔԿՀ-ներում բժշկական սարքավորումները և գործիքները խիստ սահմանափակ են, հնամաշ, անգամ բացակայում են առաջին օգնու-

---

[23] ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի 2016 թ. տարեկան զեկույց, http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/107efea7ef699b67309a61ffdf8d0f1e.pdf (մուտք՝ 04.02.2020):

թյան համար անհրաժեշտ սարքավորումներն ու գործիքները: Բողոքներում նշվում է, որ ազատազրկման վայրերն ապահովված չեն անհրաժեշտ քանակությամբ դեղերով:

Ծանր հիվանդություններ ունեցող դատապարտյալները հիմնականում մահանում են ազատազրկման վայրերում, այնինչ հայաստանյան օրենքներով նրանք կարող են ազատվել պատժի հետագա կրումից:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը, ՔԿՀ-ներում հասարակական դիտորդական խումբը և լրատվամիջոցները պարբերաբար ստանում են ահազանգեր ծանր հիվանդ դատապարտյալներից, նրանց հարազատներից կամ փաստաբաններից այն մասին, որ ազատման հասնելը իսկական գլխացավանք է: Թե՛ քրեական և քե՛ քրեական դատավարության օրենսգրքերով սահմանված է, որ պատժի հետագա կրման հետ անհամատեղելի հիվանդություններով տառապող դատապարտյալները կարող են ազատվել պատժից: ՔՕ 79-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե անձը հանցանք կատարելուց կամ դատավճռից հետո հիվանդացել է ծանր հիվանդությամբ, որը խոչընդոտում է պատիժը կրելը, ապա դատարանը կարող է նրան ազատել պատիժը կրելուց՝ հաշվի առնելով կատարված հանցանքի ծանրությունը, դատապարտյալի անձը, հիվանդության բնույթը և այլ հանգամանքներ:

Պատժի կրումը խոչընդոտող հիվանդությունների ցանկը, որում ներառված են 41 անուն ծանր հիվանդություններ՝ իրենց բարդության տարբեր աստիճաններով, հաստատվել է դեռևս 9 տարի առաջ ՀՀ Կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի 825-Ն որոշմամբ[24]:

Մահացություն: Ստրասբուրգում ԵԽ անդամ պետությունների բանտային «բնակչության» մասին տարեկան ուսումնասիրություն-

[24] Տե՛ս www.arlis.am, https://www.arlis.am/documentview.aspx?docID=72111 (մուտք՝ 20.02.2020):

ները[25] հայաստանյան բանտերում քաղաքացիների մահացության դեպքերի վերաբերյալ մտահոգիչ թվեր են արձանագրում: 2010 թվականից սկսած՝ գրեթե ամեն տարի Եվրախորհրդի անդամ երկրների շարքում ազատազրկվածների մահացության ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է Հայաստանում: Այն մոտ երկու անգամ ավելի է գրանցված միջին ցուցանիշից: Վերջին ուսումնասիրությունը ևս բացառություն չէ:

Փակ հաստատությունների լուսաբանման խնդիրները

Նախ պետք է պարզել լրագրողի նպատակը փակ հաստատություններում գտնվող քաղաքացու իրավունքների լուսաբանման վերաբերյալ: Ի՞նչն է առաջնահերթ՝ սենսացիա՞ն (լայքեր հավաքելը, սենսացիոն նյութ հրապարակելը, կայքի կամ լրատվամիջոցի այցելությունները մեծացնելը), թե՞ խնդիրը հանրությանը ներկայացնելն ու իրավասուների առաջ բարձրացնելը: Ըստ այդ նպատակի էլ կառուցվում է լրագրողական նյութը:

Փակ հաստատությունների թեման լուսաբանելիս լրագրողն անպայման բախվելու է բյուրոկրատիայի հետ: Ուստի պետք է նախ իմանա իր իրավունքները, ներպետական ու միջազգային կարգավորումները: Փակ պետական հաստատություններում մարդու իրավունքների հիմնախնդիրների լուսաբանումը, դրա նախապատրաստությունը համբերատարների գործն է: Այն բարդ ու ժամանակատար է մի քանի պատճառներով:

Հիմնական բարդություններն են՝

- մուտքի թույլտվության ձեռքբերումը,
- էթիկայի իմացությունը,

---

[25] Տե՛ս SPACE - Council of Europe Annual Penal Statistics, https://www.coe.int/en/web/-prison/space (մուտք՝ 20.02.2020):

- անվտանգության հարցերը,
- օպերատիվության հարցերը,
- իրավական գիտելիքների իմացությունը:

Լրագրողն իրավունք ունի՝

- տեղեկատվություն հավաքելու,
- տեղում խնդրին ծանոթանալու,
- տեղեկատվական աղբյուրներ ունենալու,
- աղբյուրները չբացահայտելու (անհրաժեշտության դեպքում):

Լրագրողը պարտավոր է՝

- ստուգել հավաքած տեղեկատվությունը (fact checking),
- հրապարակել միայն ճշգրիտ տեղեկատվություն,
- հրապարակումը կառուցել ստուգված փաստերի ու ապացույցների վրա,
- պահպանել լրագրողական էթիկայի կանոնները:

Հարցազրույցներ խոցելի խմբերի անդամների հետ

Ցանկացած հարցազրույցից առաջ պետք է խորությամբ ծանոթանալ նյութին, որպեսզի հարցադրումները լինեն գրագետ ու փաստարկված: Անտեղյակ լրագրողին կարելի է հեշտությամբ խաբել, ասել կեսճշմարտությունը կամ ապատեղեկատվություն տարածել: Չպետք է միանգամից միացնել ձայնագրիչը. փոքր-ինչ զրուցելը չի խանգարի: Պետք է հաշվի առնել, որ հասարակության խոցելի խմբերում ընդգրկված են հոգեբանական բարդ խնդիրներ ունեցող անձինք:

Փակ հասպարությունների հարցազրույցներ վարելիս պետք է առանձնահատուկ կերպով պատրաստվել նաև հոգեբանորեն, քանի որ պատմությունները հիմնականում արտասովոր են լինում և ուղեկցվում են հուզական ապրումներով:

Պետք է կամային որակներ մշակել, որպեսզի հեշտ լինի դիմակայելը, և կարողանալ ճիշտ պահին զսպել արցունքները, չտալ կանխակալ, հոգեբանորեն ճնշող հարցեր և այլն:

Հարցազրույցներ ազատազրկված անձանց հետ

Հայաստանյան ՔԿՀ-ներում՝ փակ ռեժիմային գոտում, հարցազրույցը հիմնականում թույլատրվում է քննչական սենյակներում, ոչ թե դատապարտյալների խցերում: Լրագրողն այդպես էլ չի կարողանում տեսնել դատապարտյալի կեցության պայմանները: Հսկիչները քննչական սենյակ են ուղեկցում դատապարտյալին: Իսկ կիսաբաց ռեժիմային գոտում երբեմն թույլատրվում է մտնել կացարաններ: Լրագրողը նախ պետք է ծանոթանա դատապարտյալի հետ, մեկ-երկու րոպե քննարկի նրա որպիսության հարցերը, չստեղծի այնպիսի տպավորություն, թե լարված է, քանի որ իր համար հարմարավետ տարածքից դուրս է ու անսովոր միջավայրում է: Բնական է՝ լրագրողն ամեն օր ՔԿՀ չի գնում: Ձայնագրող որևէ սարք միացնելիս պետք է զգուշացնել: Պետք է հարգել մարդու ընտրության իրավունքը, զգալ հարցի հանրայնացման նրբությունները ու գիտակցել հետևանքների պատասխանատվությունը, տալ պարզ և ոչ կանխակալ հարցեր: Լրագրողը քրեական գործի մասին պետք է հարցնի միայն այն դեպքում, եթե նախապես ուսումնասիրել է այն և ծանոթ է բոլոր նյութերին:

Լուսաբանման լեզուն. մատչելիություն, գրագիտություն, բովանդակություն

Ձեր հրապարակմանը տվեք մարդկային դեմք, անհրաժեշտ է գրել նախ հերոսի, ապա՝ խնդրի մասին: Այսինքն՝ կա՛մ անցում մասնավորից հանրայինին, կա՛մ հակառակը՝ հանրայինից մասնավորին: Լրագրողն իր հրապարակման մեջ պետք է ներառի վիճակագրություն, օգտագործի լրագրության ժամանակակից գործիքներ՝ թվեր, լուսանկարներ, տեսանյութեր:

Այսօրվա գերզբաղված ընթերցողին մուլտիմեդիայի գործիքներով 2 րոպեում ավելի շատ տեղեկատվություն կարելի է փոխանցել, քան երկար տեքստով, որը հաճախ չի ընթերցվում: Պետք է հնարավորինս գրավել կոնֆլիկտի բոլոր կողմերին: Միայն այդ դեպքում լրագրողական աշխատանքը կլինի ամբողջական ու ոչ կանխակալ:

Լրագրողական նյութ պատրաստելիս պետք է խուսափել եզրույթների առատությունից. դրանք նյութը դարձնում են դժվարամատչելի: Իսկ եթե եզրույթի կիրառումն անխուսափելի է, ապա լավ կլինի պարզ, մատչելի լեզվով տալ նաև բացատրություններ: Իսկ շարքային ընթերցողին առհասարակ չպետք է ծանրաբեռնել անհասկանալի եզրույթներով:

Հաճախ իրավական թեմաներ լուսաբանելիս կարելի է հանդիպել «վճիռ» ու «դատավճիռ» եզրույթներին: Պետք է իմանալ, որ «վճիռ» եզրույթը կիրառվում է քաղաքացիական գործերի դեպքում, իսկ «դատավճիռ»-ը՝ քրեական: Եթե մի իրավաբան լրագրողական հոդվածում տեսնի՝ քրեական գործի առնչությամբ գրված է «վճիռ» բառը, այլևս չի շարունակի ընթերցանությունը, անգամ եթե հոդվածն արժանի է բարձր գնահատականի: Իրավաբանը պարզապես անլուրջ կվերաբերվի այդ հոդվածին, հաշվի չի նստի դրանում արծարծված խնդրի հետ միայն եզրույթի սխալ կիրառման պատճառով:

Պետք է խուսափել խտրական, կարծրատիպ ձևավորող բառերից: Օրինակ՝ ազատազրկվածների դեպքում հաճախ գործածվում է «հանցագործ» բառը: Այդ բառը մինչ օրս կարելի է գտնել դատախա-

զության տարեկան հաղորդումներում: Սակայն լրագրողները պետք է խուսափեն բացասական զգացում փոխանցող պիտակավորող բառերից:

Պրակտիկ խնդիրներ, հաճախ առաջացող հարցեր

Փակ հաստատությունների խնդիրները լուսաբանելիս լրագրողները բախվում են պրակտիկ խնդիրների: Առաջին հարցը, որ հուզում է լրագրողին, այն է, թե ինչպես մտնել փակ կամ կիսափակ հաստատություն: Լրագրողը պետք է տիրապետի տարրականից սկսած մինչև կազմակերպչական ու տեխնիկական հարցերին վերաբերող ողջ տեղեկատվությանը: Օրինակ՝ ինչպե՞ս դիմել, ու՞մ դիմել, ո՞ր կառույցին, օրենքի ո՞ր նորմը վկայակոչել և այլն: Ամենատարածված ու ամենաճիշտ ձևը դիմում գրելն է տվյալ փակ հաստատության ղեկավարությանը՝ մուտքի թույլտվության խնդրանքով:

Ինչպե՞ս մտնել փակ հաստատություն

Ժամանակ առ ժամանակ լրագրողների մուտքը ՔԿՀ-ներ թույլատրվում է, երբեմն ՀՀ ԱՆ ՔԿՎ-ն նպատակահարմար չի գտնում այդ պահին կազմակերպել լրագրողի այցը ՔԿՀ, ինչը հաճախ պատճառաբանվում է աշխատակազմի ծանրաբեռնվածությամբ, երբեմն էլ դատապարտյալի ցանկության բացակայությունն է վկայակոչվում: Քրեակատարողական օրենսգրքի 92-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ դատապարտյալին տեսա/լուսանկարահանելը կարող է թույլատրվել միայն նրա համաձայնությամբ: Որպեսզի լրագրողը խուսափի նման ձևակերպումից, դատապարտյալը կարող է նախօրոք քրեակատարողական վարչությանը, ազատազրկման վայրի հիմնարկի վարչակազմին կամ լրագրողին գրավոր իրազեկել իր համաձայնության մասին:

Ինչպե՞ս ստանալ անձի համաձայնությունը

Շատ կարևոր է ստանալ անձի համաձայնությունը՝ նրան տեսա/լուսանկարահանելու, նրա անձնական տվյալները հանրայնացնելու համար: Շատ ավելի դժվար է ստանալ այն անձի համաձայնությունը, որը գտնվում է փակ կամ կիսափակ հաստատությունում՝ ՔԿՀ-ում, հատուկ խնամքի հաստատությունում և այլն: Նման համաձայնագրի առկայության դեպքում հավանականությունը, որ լրագրողին չեն մերժի և թույլ կտան մուտք գործել ՔԿՀ, ավելի մեծ է. լրագրողն ավելի ապահովագրված է անհարկի մերժումից: Համաձայնագրում դատապարտյալը պարզապես պետք է նշի, որ տալիս է իր համաձայնությունը, որպեսզի տվյալ լրատվամիջոցի տվյալ լրագրողը և լուսանկարիչը այցելեն իրեն՝ տվյալ ՔԿՀ-ում հարցազրույց վարելու նպատակով: Լավ կլինի, եթե դատապարտյալը տա կոնկրետ համաձայնագիր, օրինակ՝ եթե չի ցանկանում տեսանկարահանում, գրի այդ մասին և նշի, որ ցանկանում է միայն լուսանկարահանում ու ձայնագրում: Լավ կլինի՝ դատապարտյալը նաև նշի, որ տալիս է իր համաձայնությունը, որպեսզի լրագրողը ծանոթանա իր քրեական գործի նյութերին ու հրապարակի դրանք:

Ինչպե՞ս ստանալ տեղեկատվություն

Ի՞նչ անել, եթե ստացվել է ահազանգ փակ կամ կիսափակ հաստատությունից**:**

Նախ պետք է՝

1. ստուգել տեղեկությունը,
2. ստանալ մեկնաբանություն պետական մարմնից,
3. ստանալ մեկնաբանություն հարազատներից ու փաստաբաններից,
4. գտնել հետևյալ հարցերի պատասխանները՝ ո՞վ, ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ, ինչպե՞ս:

Տեղեկատվական աղբյուրներն են՝

- փակ հաստատություններում գտնվող անձինք,
- նրանց հարազատները,
- նրանց փաստաբանները,
- իրավապաշտպանները,
- պետական համապատասխան կառույցները,
- փորձագետները,
- միջազգային կազմակերպությունները:

Բազային աղբյուրներն են՝

- պաշտոնական հաղորդումները, վիճակագրությունը,
- պետական մարմինների պաշտոնական էջերը,
- ներպետական օրենսդրությունը, այլ իրավական ակտերը,
- միջազգային կարգավորումները,
- տեղական ու միջազգային կազմակերպությունների զեկույցները,
- փակ հաստատությունում գտնվող քաղաքացուն վերաբերող փաստաթղթերը,
- համացանցում, նաև սոցիալական ցանցերում թեմատիկ որոնումը,
- դիմումը, նամակը համապատասխան փակ հաստատության վարչակազմին կամ ավելի վերադաս պետական մարմնի ղեկավարին,
- կոնֆլիկտի բոլոր կողմերի հետ հարցազրույցները:

Անանուն աղբյուրներ

Անանուն աղբյուրները միշտ էլ նվազ վստահության են ներշնչում. հանրությունը սկսում է կասկածամտորեն վերաբերվել նման նյութերին: Ուստի հնարավորինս պետք է խուսափել անանուն աղբյուրների վկայակոչումից, նյութը «Մեր հավաստի աղբյուրները փոխանցում են….» կամ «Մեր աղբյուրի վկայակոչմամբ….» արտա-

հայտություններով սկսելուց: Նույնն է, թե նախադասությունը սկսենք «Ասում են, թե....» ձևակերպմամբ: Այդպես ընթերցողին անհայտ է մնում, թե ով է այդ ասողը, և ինչու պետք է վստահի այդ ասողին:

Երբ ծայրահեղ անհրաժեշտություն է անանուն աղբյուրից օգտվելը, և դա թելադրում է հանրային շահը, կամ այդպիսով բացահայտվում է հանցագործություն, կարելի է օգտվել անանուն աղբյուրի հայտնած տեղեկատվությունից, իհարկե, այն ստուգելուց հետո:

Ինչպե՞ս ուսումնասիրել գործի նյութերը

Փակ հաստատությունում գտնվող անձին վերաբերող նյութերին նախօրոք ծանոթանալը կարևոր միջոց է հարցադրումներ անելու համար, նաև հետագա լրագրողական գրագետ աշխատանքի գրավականներից է: Եթե խոսքը դատապարտյալի մասին է, որը դիմել է լրագրողին՝ իր քրեական գործի լուսաբանման ակնկալիքով, ապա նախ պետք է ստանալ նրա համաձայնությունը՝ քրեական գործի նյութերին ծանոթանալու համար, ապա՝ դիմել ՀՀ դատական դեպարտամենտ՝ գործի արխիվային նյութերն ուսումնասիրելու, դրանք լուսանկարելու կամ տեսանկարահանելու համար:

Նախ պետք է պարզել, թե որ դատարանն է կայացրել դատական ակտը, որ թվականին, բնականակար, նշելով նաև դատապարտվածի անուն-ազգանունը: Դիմումի մեջ այդ բոլոր տվյալները պետք է նշվեն, որպեսզի ՀՀ դատական դեպարտամենտից կարողանան պատասխանել, թե որ արխիվում են գործի նյութերը: Դրանից հետո լրագրողին գրավոր պատասխանում են դատական դեպարտամենտից՝ նշելով գործի գտնվելու վայրը և տվյալ արխիվի հեռախոսահամարը: Ըստ պայմանավորվածության՝ լրագրողը գնում է դատական համապատասխան արխիվ:

Ինչպե՞ս կատարել փաստերի ստուգում (Fact checking)

Fact checking-ը ժամանակակից լրագրության կարևորագույն գործիքներից է, քանի որ տեղեկատվական ահռելի հոսքի պայմաններում գործնականորեն անհնար է դառնում միանգամից զտել ճշգրիտ, իրականությանը համապատասխանող տեղեկությունը: Դա է պատճառը, որ խմբագրություններում աշխատում են նաև Fact checker-ներ, որոնք ստուգում են ապատեղեկատվությունը, տվյալները, անգամ՝ վիճակագրությունը: Սա շատ կարևոր է, քանի որ լրագրողական աշխատանքի ճշգրտությունից է կախված հանրային վստահության աստիճանը: Այնպես որ պետք է բացառել չստուգված տեղեկատվության հրապարակումը: Լրագրողի, ԶԼՄ-ի ամենաթանկ արժեքը հանրային վստահությունն է, որը ոչ մի դեպքում չի կարելի կասկածի տակ դնել: Ուստի նույն տեղեկությունը պետք է ստուգել երկու և ավելի անգամ, տարբեր աղբյուրներից: Լրագրողը կարող է և պետք է արխիվացնի ձայնագրությունները, տեսագրությունները, գործի փաստաթղթերը, նամակներն ու դիմումները: Դրանք շատ կարևոր են, քանի որ հնարավոր է՝ հետագայում ևս անհրաժեշտ լինեն փաստերի ու ապացույցների ստուգման համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր
(10 դեկտեմբերի 1948 թ.)

ՆԱԽԱԲԱՆ

Քանզի մարդկության ընտանիքի բոլոր անդամներին հատուկ արժանապատվության և հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումն աշխարհի ազատության, արդարության և խաղաղության հիմքն է,

քանզի մարդու իրավունքների նկատմամբ քամահրանքն ու արհամարհանքը հանգեցրել են մարդկության խիղճը վրդովող բարբարոսական գործողությունների, և քանի որ իբրև մարդկության վեհ նպատակ է հռչակված այնպիսի աշխարհի ստեղծումը, որտեղ մարդիկ կվայելեն խոսքի ու համոզմունքների ազատություն և զերծ կլինեն վախից ու կարիքից,

քանզի անհրաժեշտ է օրենքի իշխանությամբ պաշտպանել մարդու իրավունքները, որպեսզի նա, որպես վերջին միջոց, հարկադրված չընդվզի բռնակալության ու ճնշման դեմ,

քանզի անհրաժեշտ է նպաստել ազգերի բարեկամական հարաբերությունների զարգացմանը,

քանզի Միավորված ազգերի ժողովուրդները Կանոնադրության մեջ վերահաստատել են իրենց հավատը մարդու հիմնական իրավունքների, մարդ անհատի արժանապատվության ու արժեքի, տղամարդու ու կնոջ իրավահավասարության նկատմամբ և վճռել սոցիալական առաջադիմության ու կենսապայմանների բարելավմանն աջակցել առավել ազատության պայմաններում, քանզի անդամ պետությունները պարտավորվել են, Միավորված ազգերի հետ համագործակցելով, հասնել մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքի ու դրանց պահպանման,

քանզի այս իրավունքների ու ազատությունների համընդհանուր ըմբռնումը վիթխարի նշանակություն ունի այս պարտավորության լիակատար իրականացման համար.

ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՆ

հրապարակում է սույն

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ

որպես առաջադրանք բոլոր ժողովուրդներին ու ազգերին, որպեսզի յուրաքանչյուր անհատ և հասարակության յուրաքանչյուր մարմին, մշտապես նկատի ունենալով այս Հռչակագիրը, ձգտի ուսուցման ու կրթության միջոցով նպաստելու այս իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգալից վերաբերմունքին և ազգային ու միջազգային առաջադիմական միջոցառումներով ապահովելու դրանց համընդհանուր արդյունավետ ճանաչումն ու պահպանումը թե՛ անդամ պետությունների ժողովուրդների և թե՛ դրանց իրավասության տակ գտնվող տարածքների ժողովուրդների կողմից:

Հոդված 1. Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ ու խղճով, և պարտավոր են միմյանց նկատմամբ վարվել եղբայրության ոգով:

Հոդված 2. Յուրաքանչյուր ոք ունի սույն Հռչակագրում նշված բոլոր իրավունքներն ու ազատությունները՝ անկախ որևէ ռասայական, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական և այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, ունեցվածքի, դասային պատկանելության կամ որևէ այլ կարգավիճակի տարբերակման: Ավելին, որևէ տարբերակում չպետք է դրվի՝ ելնելով անհատի երկրի կամ տարածքի քաղաքական, իրավական կամ միջազգային կարգավիճակից, լինի դա անկախ, խնամարկյալ, ոչ ինքնավար կամ որևէ այլ սահմանափակումով պետական կազմավորում:

Հոդված 3. Յուրաքանչյուր ոք կյանքի, ազատության և սեփական անձի անձեռնմխելիության իրավունք ունի:

Հոդված 4. Ոչ ոք չպետք է մնա ստրկության կամ անազատ վիճակում. ստրկությունը և ստրկավաճառությունը՝ իրենց բոլոր տարատեսակներով, արգելվում են:

Հոդված 5. Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի ու պատժի:

Հոդված 6. Ամեն ոք, ուր էլ որ լինի, իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունք ունի:

Հոդված 7. Օրենքի առաջ բոլոր մարդիկ հավասար են և, առանց որևէ խտրության, օրենքի հավասար պաշտպանության իրավունք ունեն: Բոլոր մարդիկ սույն Հռչակագրով հաստատված հավասարությունը խախտող որևէ խտրականությունից, սադրանքից պաշտպանվելու հավասար իրավունք ունեն:

Հոդված 8. Յուրաքանչյուր ոք սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները ոտնահարվելու դեպքում այդ իրավունքները իրավասու ազգային դատարանների միջոցով արդյունավետ կերպով վերականգնելու իրավունք ունի:

Հոդված 9. Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական կալանքի, ձերբակալման կամ արտաքսման:

Հոդված 10. Յուրաքանչյուր ոք իր իրավունքներն ու պարտականությունները ճշտելու և իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար լիակատար հավասարության հիման վրա իրավունք ունի պահանջելու, որ իր գործը հրապարակայնորեն և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ քննվի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից:

Հոդված 11

1. Հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի անմեղ համարվել, քանի դեռ իր մեղքը օրինական կարգով չի հաստատվել հրապարակային դատական քննության միջոցով, որի ժամանակ նրան տրվում են պաշտպանության բոլոր հնարավորությունները:

2. Ոչ ոք չի կարող հանցագործության մեջ մեղադրվել որևէ արարք կատարելու կամ անգործության համար, որը կատարելու պահին ազգային օրենքներով կամ միջազգային իրավունքով հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև ծանր պատիժ տրվել, քան այն, որը կարող էր սահմանվել հանցանքը կատարելու ժամանակ:

Հոդված 12. Ոչ ոք չպետք է իր անձնական ու ընտանեկան կյանքի, տան կամ նամակագրության նկատմամբ կամայական միջամտության ենթարկվի, ոչ էլ որևէ ոտնձգության՝ պատվի ու հեղինակության նկատմամբ: Յուրաքանչյուր ոք նման միջամտությունից կամ ոտնձգությունից օրենքով պաշտպանվելու իրավունք ունի:

Հոդված 13

1. Յուրաքանչյուր ոք ազատորեն տեղից տեղ փոխադրվելու և ցանկացած պետության սահմաններում բնակավայր ընտրելու իրավունք ունի:

2. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի լքելու ցանկացած երկիր, ներառյալ իր սեփականը, և վերադառնալու իր երկիրը:

Հոդված 14

1. Յուրաքանչյուր ոք հետապնդումից այլ երկրներում ապաստան փնտրելու և այդ ապաստանից օգտվելու իրավունք ունի:

2. Այդ իրավունքը չի կարող կիրառվել այնպիսի ոչ քաղաքական հանցագործությունների կամ արարքների համար հարուցված հետապնդումների դեպքում, որոնք հակասում են Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին ու սկզբունքներին:

Հոդված 15

1. Յուրաքանչյուր ոք քաղաքացիության իրավունք ունի:

2. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել իր քաղաքացիությունից կամ իր քաղաքացիությունը փոխելու իրավունքից:

Հոդված 16

1. Չափահաս տղամարդիկ և կանայք, առանց որևէ ցեղային, ազգային կամ կրոնական սահմանափակման, ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք ունեն: Նրանք հավասար իրավունքներ ունեն ամուսնանալիս, ամուսնության ընթացքում և ամուսնալուծության ժամանակ:

2. Ամուսնությունը կարող է կայանալ միայն ամուսնացող կողմերի լիարժեք ու ազատ համաձայնության դեպքում:

3. Ընտանիքը հասարակության բնական ու հիմնական բջիջն է և հասարակության ու պետության կողմից պաշտպանվելու իրավունք ունի:

Հոդված 17

1. Յուրաքանչյուր ոք սեփականություն ունենալու իրավունք ունի՝ ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ:

2. Ոչ ոք կամայականորեն չպետք է զրկվի իր սեփականությունից:

Հոդված 18. Յուրաքանչյուր ոք մտքի, խղճի ու դավանանքի ազատության իրավունք ունի. այդ իրավունքը ներառում է իր դավանանքը կամ համոզմունքները փոխելու ազատություն և իր դավանանքը կամ համոզմունքները մենակ կամ ուրիշների հետ մեկտեղ, հրապարակավ կամ գաղտնի քարոզելու, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի և ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատություն:

Հոդված 19. Յուրաքանչյուր ոք համոզմունքների ազատության և դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք ունի. այս իրավունքը ներառում է համոզմունքներին անարգել հավատարիմ մնալու, տեղեկատվություն ու գաղափարներ որոնելու, ստանալու և լրատվության ցանկացած միջոցներով տարածելու ազատությունը՝ անկախ պետական սահմաններից:

Հոդված 20

1. Յուրաքանչյուր ոք խաղաղ հավաքների ու միություններ կազմելու իրավունք ունի:

2. Ոչ ոք չի կարող հարկադրաբար անդամակցվել որևէ միության:

Հոդված 21

1. Յուրաքանչյուր ոք անմիջականորեն կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով իր երկրի կառավարմանը մասնակցելու իրավունք ունի:

2. Յուրաքանչյուր ոք իր երկրում պետական ծառայության մտնելու հավասար հնարավորության իրավունք ունի:

3. Ժողովրդի կամքը պետք է լինի կառավարության իշխանության հիմքը. այդ կամքն իր արտահայտությունը պիտի գտնի պարբերական և անեղծ ընտրություններում, որոնք պետք է անցկացվեն համընդհանուր և հավասար ընտրական իրավունքի պայմաններում, գաղտնի կամ քվեարկության ազատությունն ապահովող այլ հավասարարժեք ձևերի միջոցով:

Հոդված 22. Յուրաքանչյուր ոք, որպես հասարակության անդամ, սոցիալական ապահովության իրավունք ունի և ազգային ջանքերի ու միջազգային համագործակցության միջոցով, յուրաքանչյուր պետության կառուցվածքին ու ռեսուրսներին համապատասխան, օգտվում է իր արժանապատվության և իր անձի ազատ զարգացման համար անհրաժեշտ տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներից:

Հոդված 23

1. Յուրաքանչյուր ոք աշխատանքի, աշխատանքի ազատ ընտրության, արդարացի ու նպաստավոր աշխատանքային պայմանների և գործազրկությունից պաշտպանվելու իրավունք ունի:

2. Յուրաքանչյուր ոք, առանց որևէ խտրականության, հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության իրավունք ունի:

3. Յուրաքանչյուր աշխատող իր և իր ընտանիքի մարդավայել գոյությունն ապահովող արդար ու գոհացուցիչ վարձատրության իրավունք ունի, որն անհրաժեշտության դեպքում պետք է լրացվի սոցիալական ապահովության այլ միջոցներով:

4. Յուրաքանչյուր ոք արհեստակցական միություններ ստեղծելու և իր շահերը պաշտպանելու համար արհեստակցական միություններին անդամակցելու իրավունք ունի:

Հոդված 24. Յուրաքանչյուր ոք հանգստի ու ժամանցի, այդ թվում՝ աշխատանքային ժամերի խելամիտ սահմանափակման և պարբերաբար վճարովի արձակուրդների իրավունք ունի:

Հոդված 25

1. Յուրաքանչյուր ոք այնպիսի կենսամակարդակի իրավունք ունի, որը պատշաճ է իր և իր ընտանիքի առողջության ու բարեկեցության համար, ներառյալ սնունդը, հագուստը, բնակարանը, առողջապահությունը և անհրաժեշտ սոցիալական ծառայությունները, ինչպես նաև ունի ապահովության իրավունք գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ գոյության այլ միջոցների անհրաժեշտության դեպքում:

2. Մայրությունն ու մանկությունը հատուկ հոգածության և օժանդակության իրավունք ունեն: Ամուսնությունից կամ արտամուսնական

կապից ծնված բոլոր երեխաները պետք է օգտվեն միևնույն սոցիալական պաշտպանությունից:

Հոդված 26

1. Յուրաքանչյուր ոք կրթության իրավունք ունի: Կրթությունը, առնվազն տարրական և հանրակրթական փուլերում, պետք է անվճար լինի: Տարրական կրթությունը պետք է պարտադիր լինի: Տեխնիկական և մասնագիտական կրթությունը պետք է հանրամատչելի լինի, իսկ բարձրագույն կրթությունը, ընդունակություններին համապատասխան, հավասարապես մատչելի բոլորի համար:

2. Կրթությունը պետք է նպատակաուղղված լինի անձի լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը: Այն պետք է նպաստի բոլոր ազգերի, ռասայական և կրոնական խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուրժողականությանն ու բարեկամությանը, էլ ավելի նպաստի Միավորված ազգերի կազմակերպության խաղաղապահպան գործունեությանը:

3. Ծնողներն իրենց երեխաների համար կրթության տեսակն ընտրելու առաջնային իրավունք ունեն:

Հոդված 27

1. Յուրաքանչյուր ոք հասարակության մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու, արվեստներից բավականություն ստանալու, գիտական առաջընթացին մասնակցելու և դրա բարիքներից օգտվելու իրավունք ունի:

2. Յուրաքանչյուր ոք իր հեղինակած գիտական, գրական կամ գեղարվեստական աշխատանքի բարոյական և նյութական շահերի պաշտպանության իրավունք ունի:

Հոդված 28. Յուրաքանչյուր ոք սոցիալական ու միջազգային այնպիսի կարգուկանոնի իրավունք ունի, որի առկայությամբ սույն Հռչակագրում շարադրված իրավունքներն ու ազատությունները լիովին իրագործելի են:

Հոդված 29

1. Յուրաքանչյուր ոք համայնքի առաջ պարտականություններ ունի, որտեղ և հնարավոր է նրա անհատականության ազատ ու լիարժեք զարգացումը:

2. Իր իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս յուրաքանչյուր ոք պետք է ենթակա լինի միմիայն այնպիսի սահմանափակումների, որոնք օրենքով սահմանված են բացառապես ուրիշների իրավունքների և ազատությունների պատշաճ ճանաչումն ու հարգանքն ապահովելու և ժողովրդավարական հասարակարգում բարոյականության արդարացի պահանջները, հասարակական կարգը և ընդհանուր բարեկեցությունը բարելավելու նպատակով:

3. Այդ իրավունքների ու ազատությունների իրականացումը ոչ մի դեպքում չպետք է հակասի Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին ու սկզբունքներին:

Հոդված 30. Սույն Հռչակագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես որևէ պետության, մարդկանց խմբի կամ առանձին անհատների ընձեռված իրավունք՝ զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի արարք, որոնք նպատակաուղղված լինեն սույն Հռչակագրում շարադրված իրավունքներն ու ազատություններն ի չիք դարձնելուն:

Հռչակագրի հայերեն թարգմանությունը՝
ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության
երևանյան գրասենյակի

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԳԼՈՒԽ 2
ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 23. Մարդու արժանապատվությունը

Մարդու արժանապատվությունն անխախտելի է:

Հոդված 24. Կյանքի իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք:

2. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից:

3. Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:

Հոդված 25. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք:

2. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Բժշկության և կենսաբանության ոլորտներում մասնավորապես արգելվում են եվգենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը:

4. Ոչ ոք չի կարող առանց իր ազատ և հստակ արտահայտած համաձայնության ենթարկվել գիտական, բժշկական կամ այլ փորձերի: Մարդը նախապես տեղեկացվում է նման փորձերի հնարավոր հետևանքների մասին:

Հոդված 26. Խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը

1. Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

2. Մարմնական պատիժներն արգելվում են:

3. Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք:

Հոդված 27. Անձնական ազատությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

1) անձին իրավասու դատարանը դատապարտել է հանցանք կատարելու համար.

2) դատարանի իրավաչափ կարգադրությանը չենթարկվելու համար.

3) օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելու նպատակով.

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

5) անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու մարմին ներկայացնելու նպատակով.

6) հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածումը, ինչպես նաև հոգեկան խանգարում ունեցող, հարբեցող կամ թմրամոլ անձանցից բխող վտանգը կանխելու նպատակով.

7) անձի անօրինական մուտքը Հայաստանի Հանրապետություն կանխելու կամ անձին արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:

2. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է ազատությունից զրկվելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին:

3. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ այդ մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը: Այս իրավունքի իրականացումը կարող է հետաձգվել միայն օրենքով

սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով:

4. Եթե սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով ազատությունից զրկված անձի վերաբերյալ ազատությունից զրկվելու պահից ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամվա ընթացքում դատարանը որոշում չի կայացնում անազատության մեջ նրան հետագա պահելը թույլատրելու մասին, ապա նա անհապաղ ազատ է արձակվում:

5. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է:

6. Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները:

Հոդված 28. Օրենքի առջև ընդհանուր հավասարությունը

Բոլորը հավասար են օրենքի առջև:

Հոդված 29. Խտրականության արգելքը

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Հոդված 30. Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը

Կանայք և տղամարդիկ իրավահավասար են:

Հոդված 31. Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:

2. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական ան-

վտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հոդված 32. Բնակարանի անձեռնմխելիությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք:

2. Բնակարանի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքով կարող են սահմանվել դատարանի որոշմամբ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման այլ դեպքեր:

Հոդված 33. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունք:

2. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով:

Հոդված 34. Անձնական տվյալների պաշտպանությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք:

2. Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ:

3. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իր մասին հավաքված տվյալներին և պահանջելու ոչ հավաստի տվյալների շտկում, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված կամ այլևս իրավական հիմքեր չունեցող տվյալների վերացում:

4. Անձնական տվյալներին ծանոթանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

5. Անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերող մանրամասները սահմանվում են օրենքով:

Հոդված 35. Ամուսնանալու ազատությունը

1. Ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը միմյանց հետ իրենց կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք ունեն: Ամուսնության տարիքը, ամուսնության և ամուսնալուծության կարգը սահմանվում են օրենքով:

2. Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս կինը և տղամարդն ունեն հավասար իրավունքներ:

3. Ամուսնանալու ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ առողջության և բարոյականության պաշտպանության նպատակով:

Հոդված 36. Ծնողների իրավունքները և պարտականությունները

1. Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին:

2. Ծնողական իրավունքներից զրկելը կամ դրանց սահմանափակումը կարող է կատարվել միայն օրենքով, դատարանի որոշմամբ՝ երեխայի կենսական շահերն ապահովելու նպատակով:

3. Չափահաս աշխատունակ անձինք պարտավոր են հոգ տանել իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների մասին: Մանրամասները սահմանվում են օրենքով:

Հոդված 37. Երեխայի իրավունքները

1. Երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում:

2. Երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան:

3. Յուրաքանչյուր երեխա ունի իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավունք, բացառությամբ այն դեպքի, երբ դա, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին: Մանրամասները սահմանվում են օրենքով:

4. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները պետության հոգածության և պաշտպանության ներքո են:

Հոդված 38. Կրթության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տեղությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:

2. Յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված դեպքերում և կարգով ունի մրցութային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք:

3. Բարձրագույն ուսումնական հաստատություններն օրենքով սահմանված շրջանակներում ունեն ինքնակառավարման իրավունք, ներառյալ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը:

Հոդված 39. Մարդու ազատ գործելու իրավունքը

Մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

Հոդված 40. Ազատ տեղաշարժվելու իրավունքը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք:

3. Յուրաքանչյուր քաղաքացի և Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունք:

4. Ազատ տեղաշարժվելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունքը սահմանափակման ենթակա չէ:

Հոդված 41. Մտքի, խղճի և կրոնի ազատությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը:

2. Մտքի, խղճի և կրոնի ազատության արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմ-

նական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Յուրաքանչյուր քաղաքացի, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայությունը, ունի օրենքով սահմանված կարգով այն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու իրավունք:

4. Կրոնական կազմակերպություններն իրավահավասար են և օժտված են ինքնավարությամբ: Կրոնական կազմակերպությունների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

Հոդված 42. Կարծիքի արտահայտման ազատությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

2. Մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը:

3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հոդված 43. Ստեղծագործության ազատությունը

Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատություն:

Հոդված 44. Հավաքների ազատությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունք:

2. Բացօթյա տարածքներում կազմակերպվող հավաքներն օրենքով սահմանված դեպքերում անցկացվում են ողջամիտ ժամկետում ներկայացված իրազեկման հիման վրա: Ինքնաբուխ հավաքների իրականացման համար իրազեկում չի պահանջվում:

3. Օրենքով կարող են սահմանվել դատավորների, դատախազների, քննիչների, ինչպես նաև զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների հավաքների ազատության իրավունքի իրականացման սահմանափակումներ:

4. Հավաքների ազատության իրականացման և պաշտպանության պայմաններն ու կարգը սահմանվում են օրենքով:

5. Հավաքների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման, հասարակական կարգի պաշտպանության, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հոդված 45. Միավորումների ազատությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի այլոց հետ ազատորեն միավորվելու, ներառյալ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ մասնավոր միավորման:

2. Միավորումների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

3. Միավորումների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ միայն դատարանի որոշմամբ:

Հոդված 46. Կուսակցություն ստեղծելու և կուսակցությանն անդամագրվելու իրավունքը

1. Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ կուսակցության:

2. Դատավորները, դատախազները և քննիչները չեն կարող լինել կուսակցության անդամ: Օրենքով կարող են սահմանվել զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների կողմից կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունքի սահմանափակումներ:

3. Կուսակցությունները տարեկան հաշվետվություններ են հրապարակում իրենց ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև իրենց գույքի մասին:

4. Օրենքով սահմանված դեպքերում կուսակցության գործունեությունը կարող է կասեցվել Սահմանադրական դատարանի որոշմամբ: Այն կուսակցությունները, որոնք քարոզում են սահմանադրական կարգի բռնի տապալում կամ բռնություն են կիրառում սահմանադրական կարգը տապալելու նպատակով, հակասահմանադրական են և ենթակա են արգելման Սահմանադրական դատարանի որոշմամբ:

Հոդված 47. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունքը

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ծնված երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է:

2. Յուրաքանչյուր երեխա, որի ծնողներից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:

3. Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատելու պահից ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:

4. Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը ձեռք են բերում օրենքով սահմանված պարզեցված կարգով:

5. Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող զրկվել քաղաքացիությունից: Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող զրկվել քաղաքացիությունը փոխելու իրավունքից:

6. Սույն հոդվածով սահմանված իրավունքների իրականացման կարգը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման այլ հիմքերը, ինչպես նաև դադարեցման հիմքերը սահմանվում են օրենքով:

7. Սույն հոդվածի 2-4-րդ մասերով, ինչպես նաև 5-րդ մասի 2-րդ նախադասությամբ սահմանված իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, ինչպես նաև այլ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

8. Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, միջազգային իրավունքի հիման վրա, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո են:

Հոդված 48. Ընտրական իրավունքը և հանրաքվեին մասնակցելու իրավունքը

1. Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք:

2. Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու, տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը:

4. Ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

Հոդված 49. Հանրային ծառայության անցնելու իրավունքը

Յուրաքանչյուր քաղաքացի ունի ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:

Հոդված 50. Պատշաճ վարչարարության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

2. Վարչական վարույթի ընթացքում յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու իրավունք, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքների:

3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Հոդված 51. Տեղեկություններ ստանալու իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք:

2. Տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Տեղեկություններ ստանալու կարգը, ինչպես նաև տեղեկությունները թաքցնելու կամ դրանց տրամադրումն անհիմն մերժելու համար

պաշտոնատար անձանց պատասխանատվության հիմքերը սահմանվում են օրենքով:

Հոդված 52. Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու իրավունքը

Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների խախտման դեպքում Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը ստանալու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:

Հոդված 53. Հանրագիր ներկայացնելու իրավունքը

Յուրաքանչյուր ոք ունի անհատապես կամ այլոց հետ մեկտեղ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրագիր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:

Հոդված 54. Քաղաքական ապաստանի իրավունքը

Քաղաքական հետապնդման ենթարկվող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստան հայցելու իրավունք: Քաղաքական ապաստանի տրամադրման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:

Հոդված 55. Արտաքսման կամ հանձնման արգելքը

1. Ոչ ոք չի կարող արտաքսվել կամ հանձնվել օտարերկրյա պետությանը, եթե իրական սպառնալիք կա, որ տվյալ անձը կարող է այդ երկրում ենթարկվել մահապատժի, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացուն չի կարելի հանձնել օտարերկրյա պետությանը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:

Հոդված 56. Ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունք:

2. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք:

3. Սույն հոդվածով սահմանված իրավունքների իրականացումը կարգավորվում է օրենքով:

Հոդված 57. Աշխատանքի ընտրության ազատությունը և աշխատանքային իրավունքները

1. Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք:

2. Յուրաքանչյուր աշխատող ունի աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունք: Աշխատանքից ազատման հիմքերը սահմանվում են օրենքով:

3. Մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելն արգելվում է: Յուրաքանչյուր աշխատող կին ունի հղիության և ծննդաբերության դեպքում վճարովի արձակուրդի իրավունք: Յուրաքանչյուր աշխատող ծնող երեխայի ծննդյան կամ երեխայի որդեգրման դեպքում ունի արձակուրդի իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:

4. Մինչև տասնվեց տարեկան երեխաներին մշտական աշխատանքի ընդունելն արգելվում է: Նրանց ժամանակավոր աշխատանքի ընդունման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:

5. Պարտադիր կամ հարկադիր աշխատանքն արգելվում է: Պարտադիր կամ հարկադիր աշխատանք չի համարվում՝

1) այն աշխատանքը, որը, օրենքին համապատասխան, կատարում է դատապարտված անձը.

2) զինվորական կամ այլընտրանքային ծառայությունը.

3) յուրաքանչյուր աշխատանք, որը պահանջվում է բնակչության կյանքին կամ բարօրությանն սպառնացող արտակարգ իրավիճակների ժամանակ:

Հոդված 58. Գործադուլի իրավունքը

1. Աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական կամ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք: Գործադուլի իրականացման կարգը սահմանվում է օրենքով:

2. Գործադուլի իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հոդված 59. Տնտեսական գործունեության ազատությունը և տնտեսական մրցակցության երաշխավորումը

1. Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

2. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

3. Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:

Հոդված 60. Սեփականության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

5. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

6. Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

7. Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով:

8. Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Հոդված 61. Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունք:

Հոդված 62. Վնասի հատուցման իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

2. Եթե հանցանք կատարելու համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված անձն արդարացվել է այն հիմքով, որ նոր կամ նոր երևան եկած որևէ հանգամանք ապացուցում է նրա դատապարտման ոչ իրավաչափ լինելը, ապա այդ անձն ունի օրենքին համապատասխան հատուցում ստանալու իրավունք, եթե չի ապացուցվում, որ այդ հանգամանքի ժամանակին բացահայտումը լիովին կամ մասամբ կախված էր տվյալ անձից:

Հոդված 63. Արդար դատաքննության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

2. Դատական վարույթը կամ դրա մի մասը, օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով:

3. Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է:

Հոդված 64. Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:

2. Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

Հոդված 65. Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը

Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ: Օրենքը կարող է սահմանել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր:

Հոդված 66. Անմեղության կանխավարկածը

Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Հոդված 67. Մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը

Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝

1) ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրավունք.

2) անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունք.

3) իր պաշտպանությունը նախապատրաստելու և իր ընտրած փաստաբանի հետ հաղորդակցվելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունք.

4) իր դեմ ցուցմունք տվող անձանց հարցման ենթարկելու իրավունք, կամ որ այդ անձինք ենթարկվեն հարցման, ինչպես նաև, որ իր օգտին ցուցմունք տվող անձինք կանչվեն և հարցաքննվեն նույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված անձինք.

5) թարգմանչի անվճար ծառայությունից օգտվելու իրավունք, եթե նա չի տիրապետում հայերենին:

Հոդված 68. Կրկին դատվելու արգելքը

1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա:

Հոդված 69. Դատապարտվածի բողոքարկման իրավունքը

Հանցանք կատարելու համար դատապարտված յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով վերադաս դատական ատյանի կողմից վերանայման իրավունք:

Հոդված 70. Ներման խնդրանքի իրավունքը

Յուրաքանչյուր դատապարտյալ ունի ներման, ներառյալ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:

Հոդված 71. Մեղքի սկզբունքը և պատժի համաչափության սկզբունքը

1. Հանցանք կատարած անձի պատժի հիմքը նրա մեղքն է:

2. Օրենքով սահմանված պատիժը, ինչպես նաև նշանակված պատժատեսակը և պատժաչափը պետք է համաչափ լինեն կատարված արարքին:

Հոդված 72. Հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքը

Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել: Չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը ենթակա էր կիրառման հանցանք կատարելու պահին: Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ:

Հոդված 73. Օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժը

1. Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

2. Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

Հոդված 74. Հիմնական իրավունքների և ազատությունների կիրառելիությունն իրավաբանական անձանց նկատմամբ

Հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ:

Հոդված 75. Հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը

Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Հոդված 76. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներն արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ

Արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, բացառությամբ Սահմանադրության 23-26-րդ, 28-30-րդ, 35-37-րդ հոդվածներում, 38-րդ հոդվածի 1-ին մասում, 41-րդ հոդվածի 1-ին մասում, 47-րդ հոդվածի 1-ին մասում, 5-րդ մասի 1-ին նախադասությունում և 8-րդ մասում, 52-րդ, 55-րդ հոդվածի 2-րդ մասում, 56-րդ, 61-րդ, 63-72-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում:

Հոդված 77. Հիմնական իրավունքների և ազատությունների չարաշահման արգելքը

Արգելվում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով:

Հոդված 78. Համաչափության սկզբունքը

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Հոդված 79. Որոշակիության սկզբունքը

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Հոդված 80. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիությունը

Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սույն գլխում ամրագրված դրույթների էությունն անխախտելի է:

Հոդված 81. Հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային իրավական պրակտիկան

1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Գ Լ ՈՒ Խ 3
ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հոդված 82. Աշխատանքային պայմանները

Յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք:

Հոդված 83. Սոցիալական ապահովությունը

Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք:

Հոդված 84. Արժանապատիվ գոյությունը և նվազագույն աշխատավարձը

1. Յուրաքանչյուր կարիքավոր և տարեց մարդ, օրենքին համապատասխան, ունի արժանապատիվ գոյության իրավունք:

2. Նվազագույն աշխատավարձի չափը սահմանվում է օրենքով:

Հոդված 85. Առողջության պահպանությունը

1. Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք:

2. Օրենքը սահմանում է անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը:

Հոդված 86. Պետության քաղաքականության հիմնական նպատակները

Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են՝

1) գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը.

2) բնակչության զբաղվածության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը.

3) բնակարանային շինարարության խթանումը.

4) կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը.

5) ծնելիության և բազմազավակության խթանումը.

6) երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը.

7) բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը.

8) հաշմանդամության կանխարգելման, բուժման, հաշմանդամների առողջության վերականգնման ծրագրերի իրականացումը, հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը.

9) սպառողների շահերի պաշտպանությունը, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի նկատմամբ վերահսկողությունը.

10) տարածքային համաչափ զարգացումը.

11) ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը.

12) քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդության մասնակցության խթանումը.

13) անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության զարգացումը.

14) հիմնարար և կիրառական գիտության զարգացումը.

15) ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելը.

16) բարեգործության խթանումը՝ մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

Հոդված 87. Պետության քաղաքականության հիմնական նպատակների իրագործումը

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասությունների և հնարավորությունների շրջանակում պարտավոր են իրագործել Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված նպատակները:

2. Կառավարությունը Սահմանադրության 156-րդ հոդվածով նախատեսված զեկույցի շրջանակներում տեղեկատվություն է ներկայացնում Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված նպատակների իրագործման վերաբերյալ:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

21.03.2016 թ.

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ

Երեխաների անձնական տվյալների հրապարակման վերաբերյալ

2016 թ.-ի մարտի 2-ին ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությանն ուղղված գրությամբ «Save the Children» միջազգային հասարակական կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունն իր մտահոգությունն է հայտնել www.shamshyan.com կայքի միջոցով 2016 թ.-ի փետրվարի 27-ին Նուբարաշեն վարչական շրջանում գտնվող Երեխաների խնամքի եւ պաշտպանության Երեւանի թիվ 2 գիշերօթիկ հաստատությունում տեղի ունեցած դեպքի լուսաբանման հետեւանքով երեխաների անձնական տվյալների հանրայնացման առիթով:

1. Առիթը. 2016 թ.-ի փետրվարի 28-ին www.shamshyan.com կայքում «Արտակարգ դեպք Երեւանում. փրկարարների ճիշտ գործողությունների արդյունքում երեխաների խնամքի եւ պաշտպանության համար գիշերօթիկ հաստատությունում կանխվեց երեխաների ինքնասպանությունը. ՖՈՏՈՌԵՊՈՐՏԱԺ» վերտառությամբ նյութում ներկայացվել են գիշերօթիկ հաստատության սաների անունները, ազգանունները, տարիքը, հաստատության անունը, ինչպես նաեւ լուսանկարներ, որոնցում երեւում են երեխաները: Երեխաների անձնական տվյալների հրապարակումը դատապարտող հանրային կարծիքի ճնշման արդյունքում www.shamshyan.com կայքը երեխաների անունները փոխարինեց անվան սկզբնատառերով, ինչպես նաեւ կայքից հանվեցին այն լուսանկարները, որոնցում երեւում են երեխաների դեմքերը: Սակայն, տարածված տեղեկատվությունն արդեն բավարար էր երեխաներին նույնականացնելու համար, մյուս կողմից՝ այլ լրատվական կայքեր արտատպել կամ հղմամբ օգտագործել էին www.shamshyan.com-ում տեղ գտած տեղեկու-

թյուններն ամբողջ ծավալով՝ հրապարակելով երեխաների անուն-ազգանունները, տարիքը եւ երեխաների լուսանկարները: Այլ լրատվական կայքերում երեխաների վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը հասանելի է մինչ օրս: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» 24-րդ հոդվածի 3-րդ մասի 15-րդ կետի համաձայն՝ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը կատարում է հետազոտություններ եւ մշակողների դիմումների կամ լուսաբանումների հիման վրա տալիս տվյալներ մշակելու վերաբերյալ խորհրդատվություն կամ տեղեկացնում է անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ լավագույն փորձի մասին: Ղեկավարվելով վերոնշյալ հոդվածով եւ ուսումնասիրելով «Save the Children» միջազգային հասարակական կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության գրությունը՝ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը ներկայացնում է իր խորհրդատվական որոշումն այս հարցի վերաբերյալ:

2. Երեխայի անձնական տվյալների պաշտպանության իրավական հիմքերը.

2.1. Անձնական տվյալների պաշտպանության իրավունքը սահմանադրական իրավունք է: ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք»: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ»: ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան»:

2.2. Անձնական տվյալների պաշտպանության իրավունքն ամրագրված է նաեւ ՀՀ կողմից վավերացված «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին»[26] 1981 թ.-ի կոնվենցիայում (Ստրասբուրգ, 28.1.1981):

---

[26] Տե՛ս www.arlis.am, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=80554 (մուտք՝ 20.02.2020):

2.3. 1993 թ.-ի հուլիսի 22-ին ՀՀ-ն վավերացրել է «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիան (ՄԱԿ, 1989 թ.): Կոնվենցիայի 16-րդ հոդվածը սահմանում է. «1. Ոչ մի երեխա չպետք է ենթարկվի իր անձնական կյանքի, ընտանիքի կյանքի (…) միջամտության (…): 2. Երեխան նման միջամտությունից (…) օրենքի կողմից պաշտպանության իրավունք ունի»: Հարկ է նշել, որ Կոնվենցիայի 17-րդ հոդվածով Մասնակից պետություններն ընդունել են զանգվածային լրատվության միջոցների կարեւոր դերը եւ ընդունում են, որ երեխայի համար պետք է ապահովել ներպետական եւ միջազգային զանազան աղբյուրների տեղեկատվության ու նյութերի մատչելիությունը, հատկապես՝ այնպիսի տեղեկատվության ու նյութերի, որոնք միտված են երեխայի սոցիալական, հոգեւոր եւ բարոյական բարեկեցությանը, ինչպես նաեւ նրա ֆիզիկական ու հոգեկան առողջ զարգացմանն աջակցելուն:

2.4. Կոնվենցիոն դրույթներն արտացոլված են «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում, որի 22-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ մի երեխա անձնական, ընտանեկան կյանքի, (…) անձեռնմխելիության իր իրավունքներն իրականացնելիս չի կարող ենթարկվել կամայական, ապօրինի միջամտության (…)»: Նույն օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ «Արգելվում է երեխայի առողջության, մտավոր եւ ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող (…) տեղեկատվության (…) տարածումը»:

2.5. Լրատվամիջոցների առաքելությունը ամրագրող եւ լրագրողների գործունեությունը կարգավորող միջազգային փաստաթղթերը նույնպես անդրադառնում են երեխաների անձնական տվյալների հրապարակմանը: Օրինակ, «Զանգվածային լրատվամիջոցներով քրեական վարույթի հետ կապված տեղեկատվության տրամադրման վերաբերյալ» Հռչակագիրը[27] (2003 թ., հուլիսի 10) անձնական կյանքի գաղտնիության իրավունքի պաշտպանությունը ամրագրում է որպես սկզբունք՝ նշելով, որ կասկածյալի, մեղադրյալի կամ քրեական վարույթի այլ մասնակից-

[27] Council of Europe, Committee of Ministers, Recommendation rec(2003)13, https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=51365 (մուտք՝ 20.02.2020):

ների վերաբերյալ տեղեկություն հրապարակելիս պետք է հարգել այդ անձանց անձնական կյանքի իրավունքը, առանձնապես, երբ խոսքը գնում է անչափահասների կամ այլ խոցելի անձանց մասին, ինչպես նաև զոհերի, վկաների եւ նրանց ընտանիքների մասին:

2.6. «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արգելվում է (…) այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը»: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «(…) մարդու անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկատվության տարածումը թույլատրվում է, եթե դա անհրաժեշտ է հանրային շահերի պաշտպանության համար»:

3. Անձնական տվյալների պաշտպանության գործակալության վերլուծությունը. ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը.

3.1. հաշվի է առնում երեխայի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը: Այս իրավունքը պետք է հարգեն բոլորը,

3.2. հիմք է ընդունում, որ երեխաների իրավունքներն, այդ թվում անձնական տվյալների պաշտպանության իրավունքն առաջնահերթ ուշադրության են արժանի: Երեխաների անձնական տվյալների հրապարակման ցանկացած դեպքում լրատվամիջոցը (լրագրողը) պետք է զգուշավորություն ցուցաբերի երեխային չվնասելու համար: Երեխաներն առավել խոցելի են, քանի որ իրենց ֆիզիկական եւ մտավոր զարգացման, իրավագիտակցության ձեւավորման ճանապարհին կարող են ամբողջությամբ չգիտակցել իրենց անձնական տվյալների պաշտպանության կարեւորությունը: Փոքր տարիքի հետեւանքով հնարավոր է՝ երեխաները չկարողանան պատշաճ պաշտպանել իրենց իրավունքները, դրա համար նրանք պաշտպանված լինելու իրավունք ունեն,

3.3. գտնում է, որ յուրաքանչյուր ոք, առավել եւս՝ պետական մարմինները եւ կազմակերպությունները, ինչպես նաեւ լրատվամիջոցները, երեխայի անձնական կյանքի պաշտպանությանը պետք է առաջնային ուշադրություն դարձնի և բավարար միջոցներ ձեռնարկի երեխաների անձնական տվյալների անօրինական մշակումը բացառելու համար: Տվյալ դեպքում զանգվածային լրատվամիջոցով երեխաների անձնա-

կան տվյալները հրապարակվել էին Երեւանի թիվ 2 գիշերօթիկ հաստատությունում տեղի ունեցած դեպքը, ինչպես նաեւ ՀՀ ԱԻՆ Փրկարար ծառայության գործունեությունը լուսաբանելու արդյունքում,

3.4. հաշվի է առնում երեխայի լավագույն շահի սկզբունքը, ըստ որի՝ անձը, ով դեռեւս չի հասել ֆիզիկական եւ հոգեբանական հասունության, ավելի շատ պաշտպանության կարիք ունի, քան մյուսները: Բոլոր այն դեպքերում, երբ երեխայի լավագույն շահի սկզբունքը բախվում է երեխայի անձնական տվյալների պաշտպանության իրավունքին, ապա պետք է գերակայի երեխայի լավագույն շահի սկզբունքը (օրինակ՝ երեխայի կյանքի կամ առողջության պաշտպանության, երեխային բռնություններից, ֆիզիկական եւ հոգեկան տառապանքներից պաշտպանելու անհրաժեշտության դեպքում եւ այլն),

3.5. գտնում է, որ տվյալ դեպքում առկա չի եղել երեխայի լավագույն շահից բխող անհրաժեշտ գործողություն, երեխաների անձնական տվյալների հրապարակումը միտված չի եղել երեխայի սոցիալական, հոգեւոր եւ բարոյական բարեկեցությանը, ինչպես նաեւ նրա ֆիզիկական ու հոգեկան առողջ զարգացմանն աջակցելուն, երեխային պաշտպանելուն: Ավելին՝ համացանցում հայտնված եւ որոնողական համակարգերի միջոցով մշտապես հասանելի այդ տեղեկատվությունն ինքնին հակասում է երեխայի լավագույն շահին՝ կարող է խիստ բացասական ազդեցություն ունենալ երեխաների կյանքի հետագա զարգացման վրա:

4. Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» 24-րդ հոդվածի 3-րդ մասի 15-րդ կետի դրույթներով՝ ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը գտնում է, որ երեխայի անձնական տվյալներ մշակողները, այդ թվում՝ պետական մարմինները եւ լրատվամիջոցները, կրում են հետեւյալ նվազագույն պարտականությունները եւ պարտավոր են.

4.1. իրենց գործունեությունը կազմակերպել վերոնշյալ իրավական նորմերին համապատասխան, անձնական տվյալները հրապարակայնացնել միայն օրինական նպատակով՝ նպատակին հասնելու համար պիտանի, անհրաժեշտ եւ չափավոր ծավալով,

4.2. երեխաների անձնական տվյալներ հրապարակելիս ցուցաբերել հատուկ զգուշավորություն երեխաներին չվնասելու համար՝ օգտագործելով անձնական տվյալներն ապանձնավորելու միջոցներ (փոխել երեխայի անունը, օգտագործել միայն անվան առաջին տառերը, փակել լուսանկարում երեխայի դեմքը եւ այլն),

4.3. երեխաների անձնական տվյալները հրապարակել միայն այն բացառիկ դեպքերում, երբ հրապարակումը խիստ կարեւոր է երեխայի լավագույն շահը պաշտպանելու համար եւ ապանձնավորված կերպով հնարավոր չէ հասնել այդ նպատակին,

4.4. Գործակալությունն ակնկալում է, որ բոլոր այն լրատվամիջոցները, որոնք հրապարակել են երեխաների անձնական տվյալները (այդ թվում՝ լուսանկարներ), անհապաղ կապանձնավորեն (անհինարինության դեպքում՝ կհեռացնեն) դրանք՝ ընթերցողներին բացատրելով նման քայլի պատճառները:

ՀԱՎԵԼՎԱԾ 4

Առաջարկներ լրագրողներին հաշմանդամության խնդրի լուսաբանման համար «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կողմից

1. Հաշմանդամության խնդրի լուսաբանման ժամանակ հարցազրույց վերցրեք հաշմանդամություն ունեցող մարդուց: Առաջին դեմքով խոսքը հետաքրքիր և կենդանի կդարձնի ձեր լուսաբանումը և մտորելու առիթ կտա լսարանին: Ցանկալի է, որ նյութն ունենա հերոս:

2. Ցույց տվեք հաշմանդամություն ունեցող մարդկանց դրական օրինակներ գործունեության տարբեր ոլորտներում: Նրանք կարող են շատ բանի հասնել, այլ ոչ միայն պասիվ հետևել իրենց շուրջը կատարվող իրադարձություններին: Հաշմանդամություն ունեցող մարդիկ տարբերվում են իրենց մտավոր կարողություններով, անձնային հատկանիշներով և հետաքրքրություններով նույն չափով, ինչ ոչ հաշմանդամ մարդիկ:

3. Մի՛ խուսափեք մարդու ֆիզիկական խնդիրը ցուցադրելուց, բայց և անհարկի մի՛ սևեռվեք դրա վրա:

4. Փորձեք խուսափել խղճահարություն առաջացնող ողբերգական երանգներից, ինչպես նաև անտեղի պաթոսից:

5. Մի՛ խուսափեք հաշմանդամություն ունեցող մարդկանց հարցեր տալուց: Նրանց մեծ մասը հակված է պատասխանելու հարցերի և գնահատում է ազնվությունը:

6. Մեջբերումներ մի՛ կատարեք մարդու բժշկական ախտորոշումից, այլ նշեք դժվարությունը, որին նա հանդիպում է:

7. Ուշադրություն դարձրեք այն բառերին, որոնցով բնութագրում եք Ձեր հերոսներին և հասարակության մյուս անդամներին:

8. Երբ պատշաճ է, հումորով հաղորդեք Ձեր ասելիքը: Հումորը հնարավորություն է տալիս հաղորդելու լուրջ և երկար ասելիքը՝ չձանձրացնելով լսողներին:

9. Հաղորդեք գործնական տեղեկություններ, որոնք առօրյա կյանքում օգտակար կլինեն հաշմանդամություն ունեցող մարդկանց հետ հանդիպելիս և շփվելիս:

10. Ներկայացրեք մարդկանց կարողությունները, թե ի՛նչ օգուտ կարող են բերել հասարակությանը: Հրաժարվե՛ք կարծրատիպից, որ նրանք միայն խնամքի կարիք ունեն և չեն կարող օգտակար լինել: Որքան շատ երևա, որ մարդը հասել է ինչ-որ բանի, այնքան քիչ նշանակություն կտրվի նրա հաշմանդամությանը կամ ուրիշներից տարբերվելուն:

11. Հաշմանդամություն ունեցող մարդկանց ներկայացրեք որպես հասարակության լիարժեք անդամներ, այլ ոչ թե պասիվ, ոչ ինքնուրույն դիտողներ: Կրթություն, մասնագիտություն ստանալու հավասար հնարավորությունների, համապատասխան տեխնիկական պայմանների և սոցիալական ծառայությունների առկայության դեպքում նրանք կարող են մեծ օգուտ բերել իրենց ընտանիքներին և հասարակությանը:

12. Երեխաներին պատմեք հաշմանդամություն ունեցող մարդկանց մասին: Երեխաները պետք է տեսնեն դրական օրինակներ:

13. Կենտրոնացե՛ք միայն մեկ թեմայի վրա (կրթություն, զբաղվածություն, անձնական կյանք և այլն):

14. Անդրադարձե՛ք շրջակա միջավայրի բարելավման թեմային: Որքան քիչ լինեն խոչընդոտները հաշմանդամություն ունեցող մարդկանց համար, այնքան լավ կլինի բոլորիս: Մատչելի միջավայրը իրականում հարմար է բոլորին:

15. Խոսեք հավասար հնարավորությունների մասին, խնդրին անդրադարձեք մարդու իրավունքների տեսանկյունից:

16. Անդրադարձեք Հայաստանի օրենսդրությանը և համեմատություն անցկացրեք 2006 թ. դեկտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված և 2010 թ. հոկտեմբերի 22-ին ՀՀ-ի կողմից պաշտոնապես վավերացված Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի հետ:

17. «Արդարացրեք» թեմայի Ձեր ընտրությունը՝ շեշտը դնելով հանրային շահի վրա, օրինակ.

- Հաշմանդամություն ունեցող մարդկանց համար ստեղծված մատչելի միջավայրը և ցանկացած այլ բան մատչելի է բոլորին:
- Որևէ մեկն ապահովագրված չէ հաշմանդամությունից կամ հաշմանդամ երեխայի ծնող դառնալուց:
- Երկիրը չի կարող ժողովրդավարական համարվել, եթե նրա բոլոր քաղաքացիների համար ստեղծված չեն հավասար հնարավորություններ և պայմաններ:

18. Հաշմանդամություն ունեցող անձանց մասին գրելիս նրանց խնդիրներին անդրադառնալ մարդու իրավունքների տեսանկյունից:

ՀԱՎԵԼՎԱԾ 5

Եզրութաբանական բացատրական բառարան ԼԳԲՏԻՔ անձանց խնդիրները լուսաբանող լրագրողների համար

Սեռական կողմնորոշումը բնորոշվում է հուզական, զգայական, զգացմունքային և սեքսուալ գրավչությամբ որոշակի գենդերի անձանց նկատմամբ: Պայմանավորված նրանով, թե անձն ում հանդեպ ունի զգացմունքային և սեքսուալ գրավչություն, առանձնացնում են սեռական կողմնորոշման մի շարք տեսակներ:

Տարասեռական (հետերոսեքսուալ) կողմնորոշում ունի այն անհատը, ով հուզական, զգայական, զգացմունքային և սեքսուալ գրավչություն ունի այլ գենդերի անձանց նկատմամբ: Այսպիսի անձանց անվանում են տարասեռական կամ հետերոսեքսուալ:

Նույնասեռական (հոմոսեքսուալ) կողմնորոշում ունի այն անհատը, ով հուզական, զգայական, զգացմունքային և սեքսուալ գրավչություն ունի նույն գենդերի անձանց նկատմամբ: Այսպիսի անձանց անվանում են նույնասեռական կամ հոմոսեքսուալ:

Երկսեռական (բիսեքսուալ) կողմնորոշում ունի այն անհատը, ով հուզական, զգայական, զգացմունքային և սեքսուալ գրավչություն ունի ինչպես իր, այդպես էլ այլ գենդերի անձանց նկատմամբ: Այսպիսի անձանց անվանում են երկսեռական կամ բիսեքսուալ:

Անսեռական (ասեքսուալ) կողմնորոշում ունի այն անհատը, ով սեքսուալ գրավչություն չունի որևէ գենդերի նկատմամբ: Այսպիսի անձանց անվանում են անսեռական կամ ասեքսուալ:

Լեսբին նույնասեռական կինն է, ով հուզական, զգայական, զգացմունքային և սեքսուալ գրավչություն ունի կանանց նկատմամբ:

Գեյը նույնասեռական տղամարդն է, ով հուզական, զգայական, զգացմունքային և սեքսուալ գրավչություն ունի տղամարդկանց նկատմամբ:

«**Տրանս**» եզրույթը գործածվում է որպես հավաքական անվանում տրանսգենդեր, տրանսսեքսուալ և տրանսվիստիտ անձանց համար:

Սիսգենդերն այն անհատն է, ում գենդերային ինքնությունը համապատասխանում է իր կենսաբանական սեռին:

Տրանսգենդերն այն անձն է, ում գենդերային ինքնությունը և/կամ գենդերային ինքնաարտահայտումը տարբերվում է իր կենսաբանական սեռից:

Տրանսսեքսուալն այն անձն է, ով ունի հստակ գենդերային ինքնություն և դեր, որոնք հակառակ են իր կենսաբանական սեռին: Տրանսսեքսուալը սովորաբար իրեն հաստատված է համարում իր գենդերային դերում և ցանկանում է այն պահպանել մշտապես: Օրինակ, կենսաբանական կինը կարող է իրեն զգալ տղամարդ և ցանկություն ունենալ մշտապես հանդես գալու տղամարդու դերում: Տրանսսեքսուալները հաճախ դիմում են բժշկական միջամտությունների՝ իրենց մարմինը իրենց ցանկալի սեռի մարմնին համապատասխանեցնելու համար:

Տրանսվիստիտն այն անձն է, ով ոչ մշտապես կրում է այլ գենդերին հատուկ հագուստ: Օրինակ, կենսաբանական տղամարդը կարող է ամեն երեկո կերպարանափոխվել կնոջ՝ կրելով կանանց հատուկ հագուստ և այլ ատրիբուտներ:

«**Ինտերսեքս**» եզրույթով բնութագրում են այն անձանց, ովքեր կենսաբանորեն տարբերվում են արական և իգական սեռերի ընդունված չափանիշներից, ունեն ֆիզիոլոգիական առանձնահատկություններ, որոնք կարելի է տեղավորել արականի ու իգականի միջև կամ համարել այդ երկուսի զուգակցումը:

Քուիրն այն անձն է, ում գենդերային ինքնությունն ու վարքագիծը հնարավոր չէ դասակարգել որևէ խմբի ներքո: Քուիր անձը որևէ կերպ չի սահմանում իր ինքնությունն ու սեռականությունը, դեմ է սոցիալական նորմերին և հետերոնորմատիվությանը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Այվազյան Վ. Ն.,** Մարդու իրավունքներ, Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Տիգրան Մեծ», 2007:

2. **Բաթոյան Զ.,** Հաշմանդամության խնդիրը և զանգվածային լրատվության միջոցները: Ուղեցույց լրագրողների համար, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2009:

3. **ՀՀ Արդարադատության նախարարություն, Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն,** Ուղեցույց երեխաների անձնական տվյալների պաշտպանության մասին, Երևան, 2017:

4. **ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ,** Ինչպես լուսաբանել երեխաներին վերաբերող հարցերը: Ձեռնարկ, Երևան, 2018:

5. **Մարքս Կ.,** Կապիտալ, հատոր 1, Երևան, Կուսակցական հրատարակչություն, 1933:

6. **Brander P., Keen E., Lemineur M.,** COMPASS: A Manual on Human Rights Education with Young People, 2nd edition, Hungary, Council of Europe Publishing, 2003.

7. **Berringer-Budel Carin,** Due Diligence and Its Application to Protect Women from Violence, Edited by Carin Berringer-Budel, Leiden, Martinus Nijhoff Publishers, 2008.

8. **Clapman A.,** Human Rights: A Very Short Introduction, Oxford, 2015.

9. **Davidson S.,** Human Rights, Open University Press, 2015.

10. **Edwards, S. S. M.,** Policing 'Domestic' Violence: Women, the Law and the State, London, Sage, 1989.

11. **Eide A., Krause C., Rosas A.,** Economic, Social and Cultural RIghts, A textbook second revised edition, Martinus Nijhoff Publishers, 2001.

12. **Harris, O'Boyle and Warbrick**, Law of the European Convention on Human Rights (Third Edition), Oxford University Press, 2014.

13. **Hasselbacher Lee,** State Obligations Regarding Domestic Violence: The European Court of Human Rights, Due Diligence, And International legal Minimums of Protection, Nw. J. Int'l Hum. Rts., 2010.

14. **Hearn Jeff,** The Violence of Men: How Men Talk About and How Agencies Respond to Men's Violence to Women, SAGE Publications LTD, 1998.

15. **Meyersfeld Bonita,** Domestic Violence and International Law, Oxford, Hart Publishing, 2010.

16. **Nowak M.,** Introduction to the International Human Rights Regime, Leiden/Boston, Martinus Nijhoff Publishers, 2003.

17. Report on the Working Group of the Universal Periodic Review: Armenia, UN General Assembly, Human Rights Council, 13 April 2015.

18. **Shelton Dinah,** Remedies in International Human Rights Law (Third edition), Oxford University Press, 2015.

19. Summary prepared by the Office of the United Nations High Commissioner for Human Rights in accordance with paragraph 15 (c) of the annex to Human Rights Council resolution 5/1 and paragraph 5 of the annex to Council resolution 16/21, UN General Assembly, Human Rights Council, Working Group on the Universal Periodic Review, 21st Session, 7 November 2014.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՄԱՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական ձեռնարկ լրագրողների համար

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Դ. Գրիգորյանի
Հրատ. սրբագրումը՝ Մ. Կեսոյանի

Տպագրված է «ՎԱՌՄ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Տիգրան Մեծի 48, 43

Ստորագրված է տպագրության՝ 12.03.2020:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 12.75:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am

Արման Գառնիկի Ղարիբյանը ծնվել է 1989 թվականին Երևանում:

2006-2012 թվականներին սովորել է Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետում ստանալով բակալավրի և մագիստրոսի աստիճաններ:

2011-2012 թվականներին սովորել է Կովկասյան հեղինակների դպրոցում:

2012-2014 թվականներին ծառայել է հայոց բանակում:

2015-2016 թվականներին սովորել է Կենտրոնական եվրոպական համալսարանի իրավաբանական ուսումնասիրությունների բաժնում ստանալով «Մարդու իրավունքներ» ծրագրով մագիստրոսի աստիճան:

2006 թվականից աշխատել է հայաստանյան մի շարք ԶԼՄ-ներում: Սկսած 2009 թվականից՝ բացառապես լուսաբանել է Հայաստանում մարդու իրավունքներին վերաբերող խնդիրները: 2012 թվականից համագործակցում է միջազգային ԶԼՄ-ների հետ՝ «Al Jazeera», «Deutsche Welle», «France 5», Ֆինլանդիայի հանրային հեռուստաընկերություն և այլն:

Արժանացել է տեղական և տարածաշրջանային մասնագիտական մրցանակների:

2016 թվականին գործընկերների հետ հիմնադրել է «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպությունը՝ նպաստելով լրագրողների իրավունքների պաշտպանությանն ու դատական ոլորտի բարեփոխումներին:

2017 թվականից ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետում դասավանդում է իր հեղինակած «Մարդու իրավունքներ և լրագրություն» առարկան: 2018 թվականից նույն ֆակուլտետում դասավանդում է «Ժուռնալիստի վարպետություն» առարկան:

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2020
publishing.ysu.am